



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1377


1378

1379

511(076)

V-78

M. M. SETIAN
BIBLIOTHEQUE ET ATELIER DE RELIURE
CONSTANTINOPLI
Hakmakdjilar Yokouch



2010

1850

1011

511 (076)

Printed in Turkey

P-78

Ս. ՄԻՔԱՅԻԼԵԱՆԻ

795


ՀԱՄԱՌՕՏ 1199

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՊԷՏԱ ՆԱԽԱԿԱՆ ՎԱՐՅԱՐԱՆԱՅ

Որ

կը պարունակէ բուսրանական բարբ արժարու
քիւններէն զատ՝ նաեւ ստեարական անկէ կարևոր
հայտները .



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Ն. ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Ի ԽԱՍԳԻԻՂ Կ ՊՕԼՍՈՅ

1870

15865

Printed in Turkey

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Պիտույթեանց դասագրքերը որչափ շատնան , այնչափ ուսուցման եղանակները կը դիւրանան , մինչև հիմայ մեր լեզուով շատ մը թուարանութիւններ երեւան ելած են . այս փոքրիկ գործս ալ անոնցմէ մէկը բայց վերջինն ըլլալով աւելի դիւրին ուսուցման եղանակ մ'ունենարուն հող տարուած է : Այս գործը թէպէտև նոր սովորոյներու և մանաւանդ նախնական կարգերու մէջ գտնուող աշակերտաց համար է , բայց իր մէջ կը պարունակէ նաև այն ամէն կարևոր հաշիւները , որոնք առեւտուրի զբաղող անձանց ամենահարկաւոր են :



90
40



MB 2002

0781

Գ Լ Ո Ւ Խ Ա

Նախազխտելիք 1 Երևու

Գ Լ Ո Ւ Խ Բ

Ամբողջ թիւ 3
Թուումն ամբողջ թուոց 3
Թուումն բանաւոր 3
Թուումն դրաւոր 7
Հիմնական գործողութիւնք ամբողջ թուոց . 12
Յաւելումն ամբողջ թուոց 12
Բարձումն » » 18
Բազմապատ . » » 22
Բաժանումն » » 29

Գ Լ Ո Ւ Խ Գ

Խառն թիւ 47
Կ Պօլոց դրամները , չափերը , կշիւները և
 զանազան չափեր 47
Վերածումն խառն թուոց 47
Գործողութիւնք խառն թուոց —
Յաւելումն » » 51
Բարձումն » » 52
Բազմապատկութիւն » » 53
Բաժանումն » » 60

Գ Լ Ո Ւ Խ Դ

Թուաբանական նշանք 64

ԳԼՈՒԽ Ե՛

Կոտորակ	67
Հասարակ կոտորակ	68
Յատկութիւնք հասարակ կոտորակաց	69
Վերածումն	69
Սմբողջները կոտորակի վերածել	70
Սնյատուկ կոտորակները ամբողջի վերածել	70
Կոտորակաց արժէքը զտնալ	71
Խառն թիւերը զլրասւոր միութեան մը կոտորակն ընել	72
Կոտորակները իրենց սրարդագոյն ձեւին վերածել	73
Կոտորակները հասարակ յայտարարի վերածել	74
Գործողութիւնք հասարակ կոտորակաց	77
Յաւելումն	77
Բարձումն	78
Բազմապատկութիւն»	79
Բաժանումն	82
Տասնորդական կոտորակ	84
Սահման, թուումն տասնորդականաց	84
Յատկութիւնք տասնորդականաց	86
Վերածումն	87
Գործողութիւնք տասնորդականաց	—
Յաւելումն, Բարձումն »	91
Բազմապատկութիւն »	92
Բաժանումն	93

ԳԼՈՒԽ Զ՛

Լուծումն թուաբանական խնդրոց կամ կանոն միութեան	96
--	----

Լուծումն Ա. կարգի խնդրոց	96
Լուծումն Բ. »	97
Լուծումն Գ. »	100
Պարզ երեքի կանոն	101
Բազադրեալ երեքի կանոն	102

ԳԼՈՒԽ Է՛

Վշտութիւն	105
Համեմատութիւն	106
Տարբերական համեմատութիւն	107
Բանորդական համեմատութիւն	111
Պարզ երեքի կանոն համեմատութեամբ	113
Բազադրեալ երեքի կանոն համեմատութեամբ	119
Շղթայի կանոն	123

ԳԼՈՒԽ Ը՛

Մէկ քանի առևտրական հաշիւներ	—
Այսչափ առ 100 կամ առ 1000	127
Տոկոս	128
Բազադրեալ տոկոս	133
Չեղջումն ներքին և արտաքին	135
Կանոն ընկերութեան	137
Վճարաժամ	140
Դրութիւն	—
Պարզ դրութիւն	142
Կրկնակ դրութիւն	143
Յարակցութիւն	144

Թ Ո Ւ Ա Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Բ

1. Թ Ո Ւ Ա Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Հ ա շ ռ ե լ ու ս ի գ ը ն ա կ ա ն
կ ա ն ո ն ն եր ը կ ը ս օ վ ը ց ն է :

2. Ք ա ն ա կ կ ա մ ք ա ն ա կ ու ր ի ն կ ը ս ու ի ա յ ն բ ա ն ը
որ կ ը ն ա յ աւ ե լ ն ա լ և ս յ ա կ ս ի լ և որ չ ա թ ը ը լ լ ա լ ը Հ ա ա
կ ը ց ու ի լ . ի ն չ ա լ է ս՝ եր կ ա յ ն ու թ իւ ը ն ը , ծ ա ն ը ու թ իւ ը ն ը ,
ժ ա մ ա ն ն ա կ ը , և ա յ լ ն :

3. Մ խ ու ր ի ն կ ա մ չ ա թ կ ը ս ու ի , որ ի ը տ ե ս ա կ է ն
եղ ա մ ք ա ն ա կ ի մ ը որ չ ա թ ը ը լ լ ա լ ը ց ու ց ն ե լ ու Հ ա մ ա ր
որ շ ռ ա մ է . ի ն չ ա լ է ս՝ ե օ թ ը ը խ ն ծ ու թ ի ն մ ի ու թ իւ ը ն է
մ է կ խ ն ծ ու , և ծ ա ն ը ու թ ե ա ն մ ի ու թ իւ ը ն է մ է կ հ օ
խ ա յ . եր կ ա յ ն ու թ ե ա ն մ ի ու թ իւ ը ն է մ է կ ի ն ա ա զ է կ ա մ
մ է կ ա ր շ ը և , և ա յ լ ն :

4. Մ ի և ն ո յ ն տ ե ս ա կ ի մ ի ու թ իւ ը ն եր ու ն Հ ա ա ք ու
մ ը թ իւ կ ը ս ու ի . ի ն չ ա լ է ս՝ եր կ ու , եր ե ք , եր կ ու մ ա ր զ :

5. Վ կ ր ա ց կ ա ղ թ իւ կ ը ս ու ի , որ յ մ ի ու թ ե ա ն ա ն ու ն ը
որ շ ը ե ա լ է . ի ն չ ա լ է ս՝ եր կ ու , եր ե ք , չ ու թ , և ա յ լ ն :

Թ ա ն ա ք ա ց կ ա ղ թ իւ կ ը ս ու ի , որ յ մ ի ու թ ե ա ն ա ն ու ն ը
որ շ ը ե ա լ է . ի ն չ ա լ է ս՝ եր կ ու մ ա ր զ , եր ե ք Հ օ խ ա յ ,
չ ու թ խ ն ծ ու , և ա յ լ ն :

6. Մ ի ու թ իւ ը ն ի ն ն մ ա ն եղ ա մ թ ա ն ճ ր ա ց ե ա լ թ իւ

ւերը համապատասխան կըսուին . ինչպէս՝ եօթը տուն , ութը տուն , ևայլն . որոնք իրարու վրայ կընան աւելնալ և իրարմէ սակսիլ :

Միութիւննին անմասն եղած թանձրացեալ թիււերը տարասեւ կըսուին . ինչպէս՝ եօթը տուն . ութը մարդ . որոնք իրարու վրայ չեն կընար աւելնալ և ո՛չ իրարմէ սակսիլ :

7. Ամբողջ միութեան մը ատորաբաժանուելը , որ անոր հաւասար կտորներուն մէկն է , կտորակեալ միտրիս կըսուի . ինչպէս՝ ուրուարդ կտորակեալ միութիւնն է կնտաղէին նայելով . փարան կտորակեալ միութիւնն է զուրուչին նայելով :

8. Թիւերը կըլլան անբողջ . կտորակեալ , կտորակաւոր :

Ամբողջ թիւ կըսուի ամբողջ միութեանց հաւարու մը . ինչպէս՝ երեք , չորս , ևայլն :

Կտորակեալ թիւ կըսուի , որ կտորակեալ միութեանց մէկ տեղ դալովը շինուած է . ինչպէս՝ երկու քառորդ , հինգ ութերորդ , ևայլն :

Կտորակաւոր կամ խառն թիւ կըսուի , որ իր մէջը թէ՛ ամբողջ և թէ՛ կտորակեալ թիւ ունի . ինչպէս՝ երկու , երեք քառորդ . հինգ կնտաղէ վեց ուրուս :

ՀՍՐՅՄՈՒՆՔ

1. Ի՞նչ կը սովորեցնէ թուաբանութիւնը : — 2. Քանակութիւնը ի՞նչ է : — 3. Միութիւնը ի՞նչ է : — 4. Թիւն ի՞նչ է : — 5. Վերացեալ թիւը ո՞րն է : — Թանձրացեալը ո՞րն է : — 6. Թանձրացեալ թիւերը քանի՞ տեսակ կըլլան : Համասեւք և տարասեւք որո՞նք են : — 7. Կտորակեալ միութիւնը ի՞նչ է : — 8. Թիւերը քանի՞ տեսակ կըլլան . Ամբողջ թիւը ո՞րն է , կտորակեալ և կտորակաւոր թիւերը որո՞նք են :

ԱՄԲՈՂՋ ԹԻՒ

Ս. ԹՈՒՈՒՄՆ ԱՄԲՈՂՋ ԹՈՒՈՅ

9. Թիւերը անհուն են , վասն զի թիւ մը որչափ մեծ ըլլայ , անկէջ մէկ աւելի ուրիշ թիւ մ'ալ կընայ ըլլալ , և այսպէս հեազհետէ : Այս անհուն թիւերը քանի մը բառերու և նշաններու միջոցաւ յայտնելուն և գրելուն կըսուի թուումն . և երկու տեսակ կըլլայ , բուումն բանաւոր , բուումն գրաւոր :

1. ԹՈՒՈՒՄՆ ԲԱՆԱԽՈՐ

10. Քանի մը բառերու միջոցաւ ամէն թիւ յայտնելու կերպը կըսուի թուումն բանաւոր :

11. Ինչպէս կը տեսնուի՞ պղտի տղայք առաջին անգամ իրենց մատներուն վրայ կը համբէն . առաջին մարդիկ ալ միայն իրենց մատներուն վրայ եղած համբաններուն զատ անուններ դրած են . ինչպէս՝

մէկ երկու երեք չորս հինգ վեց եօթն ութն ինն տասն

Մէկը կըսուի պարզ կամ առաջին կարգի միտրիս , և առաջին ինը թիւերն ալ միաւոր կամ առաջին կարգի թիւք :

12. Տասը , որ տասը պարզ միութիւններէ կը բաղկանայ , կըսուի տասնաւոր կամ երկրորդ կարգի միութիւն :

քիւն, և տասնաւոր միութիւնն ալ պարզ միաւորաց
պէս համբերով յառաջ կուգայ :

Մէկ տասը կամ տասն	վեց տասը կամ մարտուն	
Երկու տասը »	քսան Եօրք տասը »	նօրտուն
Երեք տասը »	երեսուն Ուրք տասը »	ուրտուն
Չորս տասը »	քստտուն Ինը տասը »	իննտուն
Հինգ տասը »	յիսուն	

Ասոնք ալ կըսուին տասնաւոր կամ երկրորդ կարգի քիւր :

Երկու յաջորդական տասնաւորներուն, այսինքն, տասնին-քսանին, քսանին-երեսունին, և այլնին մէջ եղած ինը պարզ միաւոր թիւերն ալ հետողհետէ տասնաւորներուն քով գրուելով արտասանելու տարբութիւն եղած է . ինչպէս՝

Տասնըմէկ, տասներկու, տասներեք տասերիւր .
Քսանըմէկ, քսաներկու, քսաներեք քսաներիւր .
Երեսունըմէկ, երեսուներկու, երեսուներեք . երեսուներիւր .
Քստտանըմէկ, քստտաներկու, քստտաներեք . քստտաներիւր .
.....

Իննտանըմէկ, իննտաներկու, իննտաներեք . իննտաներիւր :

13. Իննսունըիննէն մէկ աւելին է հարիւր, որ տասը տասնաւոր միութիւն ըլլալով կըսուի հարիւրաւոր կամ երրորդ կարգի միարիւն, և սրբով միաւորներու պէս համբերով կըլլայ՝

Մէկ հարիւր կամ հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր, ինն հարիւր .

Ասոնք ալ կըսուին հարիւրաւոր կամ երրորդ կարգի քիւր :

Երկու յաջորդական հարիւրաւորաց, այսինքն, հարիւրին-երկու հարիւրին, երկու հարիւրին-երեք

հարիւրին, և այլնին մէջ գտնուած իննսունը ինը թիւերը կարտասանուին, տասնաւոր և միաւոր թիւերը հարիւրաւորաց քով գրուելով . ինչպէս՝

Հարիւր մէկ . երկու հարիւր տասը . երեք հարիւր քսանըմէկ . ինը հարիւր իննտանը ինը :

14. Ինը հարիւր իննսունը իննսունը մէկ աւելցընելով կըլլայ հազար, որ տասը հարիւրաւոր միութիւն է, և կըսուի հազարաւոր կամ չորրորդ կարգի միարիւն . և պարզ միաւորներու պէս համբերով կըլլայ Մէկ հազար կամ հազար, երկու հազար, երեք հազար . Ասոնք ալ կըսուին հազարաւոր կամ չորրորդ կարգի քիւր : Տասն հազարն է հազարի տասնաւորը, միարիւն հինգերորդ կարգի : Հարիւր հազարն է հազարի հարիւրաւորը, միարիւն վեցերորդ կարգի :

Երկու յաջորդական հազարաւորաց մէջ եղած բոլոր թիւերն ըսելու համար՝ հազարէն ետքը կը գրուին հազարէն վար եղած թիւերը, որով կը հասնինք մինչև ինը հարիւր իննսուն և ինն հազար ինն հարիւր իննսուն և ինը :

15. Հազարը աւելի բարձր դասի միութիւն կը համարուի, որ ունի իր միաւորները, տասնաւորները և հարիւրաւորները, ինչպէս պարզ միաւորի դասն ալ ունի իր միաւորները, տասնաւորները և հարիւրաւորները . հազար հազարը կըլլայ մէկ նոր դաս մը որ է միլիոն, հազար միլիոնը կըլլայ երկիլիոն, հազար երկիլիոնը կըլլայ երկիլիոն, և այսպէս հետողհետէ քսուիլիոն, հնգիլիոն, վեցիլիոն, և այլն . ասոնք մէյակէկ նոր դասի միութիւններ են, որ իրենցմէ անմիջապէս ստորին եղած դասին հազար անգամն են և առանձինն ունին միաւորներ, տասնաւորներ և հարիւրաւորներ : Ասանկով

և այլն . Յը կը ցուցնէ նաև երևաւն , երեք հարիւր , երեք հազար , և այլն : Բայց ամէն կարգի թիւերը իրարու հետ չչլիւթելու համար , միաւորները աջ կողմը առաջին տեղը կը գրուին , տասնաւորները միաւորաց ձախ կողմը երկրորդ տեղը և հարիւրաւորները երրորդ տեղը , և այլն կը գրուին . ինչպէս՝ հինգ հարիւր երեսունը չորսը թուանշանով կը գրուի 534 և կողմէն հասկերով Ա . քուանշանը , որ է 4 , է միաւոր և կողմէն հասկերով Բ . քուանշանը , որ է 3 , է տասնաւոր և կողմէն հասկերով Գ . քուանշանը , որ է 5 , է հարիւրս .

3 ին 30 և հինգին 500 նշանակութիւնը իրենց տեղակիսն նշանակարիսն է :

Վեց հազար եօթն հարիւր ութը կը գրուի : 6708 . Տասնաւորիս տեղ գրօ դրօս դրօս է :

Նաև քսանը հինգ հազար վեց հարիւր եօթանուսունը մէկը կը գրուի 25674

Երեք հարիւր քսանը չորս հազար քսանը կը գրուի 324020

Ասիկէ առաջ (Թ . 16) դրուած դասակարգութեանց աղիւսակին վրայ աղէկ կը տեսնուի ամէն մէկ դասին վերաբերեալ կարգերուն տեղերը , որով դիւրաւ կը հասկցուի միայն տասը թուանշանով ամէն թիւ գրելու եղանակը :

Եթէ երեք թուանշանով դրուած թիւ մը կարգաւ և գրելը աղէկ սովորինք , շատ թուանշանով գրուած թիւ մ'ալ դիւրութեամբ կրնանք կարդալ , և և ըսուած մէկ թիւ մ'ալ գրել :

20. Շատ թուանշանով թիւ մը կարդալու համար՝

1^o Աջէն դէտ ի ձախը երեք թուանշանով հասուածներու դատելու է :

2^o Աջ կողմի առաջին հասուածին՝ միաւոր , երկրորդին՝ հազար , երրորդին միլիօն , երկիլիօն , ունիլիօն , և այլն ըսելով ձախ կողմի վերջի հասուածին դասի մութեան անունը որոշելու է . վերջի հասուածը կրնայ ըլլալ որ մէկ կամ երկու թուանշան ունենայ :

3^o Ձախ կողմէն սկսեալ ամէն մէկ հասուածը առանձին եղածի պէս կարդալու է՝ յարելով իրեն վերաբերեալ դասի մութեան անունը :

4^o Եթէ մէկ հասուածին երեք թուանշաններն ալ գրօներ ըլլան , նոյն հասուածին վերաբերեալ դասի մութեան անունը լուծեամբ անշնելու , և անմիջապէս յաջորդ հասուածը կարդալու է :

Եւ որպէս զի դասերու միաւորաց սնունկերը շատով որոշուին , աչ կողմի առաջին հասուածը քակելով երկրորդ հասուածին միաւորիս վրայ գրօ մը , երրորդ հասուածին միաւորիս վրայ 1 , չորրորդ հասուածին միաւորիս վրայ 2 , ճիւղերորդ , վեցերորդ և այլն հասուածներուն միաւորաց վրայ 3 , 4 , և այլն դնելու է . գրօն կը կարդացուի հազար , 1ը միլիօն , 2ը երկիլիօն , 3ը երկիլիօն և այլն :

$$5,675,000,670,050,067$$

Կը կարդացուի 5 քառիլիօն , 675 երկիլիօն , 670 միլիօն , 50 հազար , 67 .

$$893,207$$

Կը կարդացուի 893 հազար 207 .

Կրնանք կարդալ նաև

89320 տասնաւոր և 7 միաւոր . կամ 8932 հարիւրաւոր և 7 միաւոր . կամ 893 հազարաւոր 2 հարիւրաւոր և 7 միաւոր . կամ 89 տասն հազարաւոր , 3 հազարաւոր ,

2 հարիւրաւոր և 7 միաւոր . կամ 8 հարիւր հազարաւոր
9 տասնհազարաւոր , 3 հազարաւոր , 2 հարիւրաւոր և
7 միաւոր :

Կարգալու է հետևեալ թիւերուն ամէն մէկը դաս դաս .

1183	29571	842563	12045	307104	999004
2576	49625	932421	17091	400572	805016
3465	128856	973125	40007	604008	310005
19327	625435	3008	250045	982042	999999

1538432	43249673	1000003	110010001
2325928	59218538	2040907	205650007
3849271	89216538	10000001	207005705
13257729	347563745	99700029	470000007

21. Ինչ և իցէ ըսուած թիւ մը թուանշանով
գրելու համար ,

1. Եթի՛ր բարձրագոյն դասը գրելու է իր մե-
ծագոյն կարգէն սկսեալ : Ետքը ասոր աջակողմը իրմէ
անսիջապէս վար եղած դասը , և շարունակելու է
մինչև միաւորի դասը :

2. Եթէ՛ դասի մը ինչ և իցէ մէկ կարգը կամ եր-
կու կարգը սակաւ ըլլան , տեղերնին գրօններ պնե-
լու է . Եթէ՛ ամբողջ դաս մը սակաւ ըլլայ տեղը
երեք դրօ դնելու է :

3. Գասերը իրարմէ մէյ մէկ քիչ բաց գրելու է :
Այսպէս՝

Երեք հազար ուր հարիւր տասնը վեց	3 816
Քստուն հազար հինգ հարիւր	40 500
Հարիւր հազար յոս հարիւր հինգ	100 405
Երեք միլիօն վարսուն	3 000 060
Չորս հարիւր միլիօն երեք հազար	40 003 000
Քսան երկիլիօն քսան հազար ուրր	20 000 020 008

Գրելու է հետևեալ թիւերը թուանշանով
Երեք հարիւր քստունը հինգ . — Երկու հազար .
— Տասնը յոս հազար ուրսունը հինգ . — Վեց միլիօն վեց
հազար վեց . — Մէկ միլիօն . — Քսանը հինգ երկիլիօն .
— Քստունը հինգ երկիլիօն , տասնը վեց միլիօն , ուրր :

22. Մէկին աջ կողմը գրօնելով գրուած թիւե-
րը հասարակոյ միտքիւնք կըստին :
Ինչպէս 10, 100, 10000, 10000, և այլն թիւերը :

ՀԱՐՅՄՈՒՆՔ

9. Ի՞նչ է թուումը , քանի՞ տեսակ կ'ըլլայ :
10. Ի՞նչ է բանաւոր թուումը :
11. Պզտի տղաք առաջին անգամ ի՞նչպէս կը համբնն : Առաջին
կարգի միութիւնը ո՞րն է : Առաջին կարգի թիւերը որո՞նք են և ո՞ր-
չտի են :
12. Երկրորդ կարգի կամ տասնաւոր միութիւնը ո՞րն է : Երկ-
րորդ կարգի թիւերը որո՞նք են և քանի՞ հատ են : Երկու յաջորդա-
կան տասնաւորներուն մէջ եղած թիւերը ի՞նչպէս կըստին :
13. Երրորդ կարգի միութիւնը ո՞րն է . թիւերը որո՞նք են և
քանի՞ հատ են : Երկու յաջորդական հարիւրաւորաց մէջ եղած թի-
ւերն ի՞նչպէս կըստին :
14. Չորրորդ կարգի միութիւնը ո՞րն է , թիւերը որո՞նք են և քա-
նի՞ հատ են : Երկու յաջորդական հազարաւորաց մէջ եղած թիւերը
ի՞նչպէս կըստին :
15. Դաս ըսելով ի՞նչ կիմանանք : Մէկ դասը քանի՞ և ո՞ր կար-
գի թիւերն կը բաղկանայ : Գասերը իրարմէ քանի՞կա՞ն անգամ մեծ
են : Ա. Բ. Գ. և այլն դասի թիւերն որո՞նք են :
16. Բանաւոր թուուման գրութիւնը քանի՞ կարգադրութեան վրայ
հիմնուած է : Ա. ը ո՞րն է , Բ. ը ո՞րն է : Գասակարգութեան աղիւ-
տակ մը չինէ :
17. Թիւերը ո՞ր կարգէն կըսկսին ըսուելու :
18. Ի՞նչ է գրաւոր թուումը :
19. Թիւ մը թուանշանով գրելու եղանակը քանի՞ պայմանի վրայ
հիմնուած է : Առաջին պայմանը ո՞րն է : Երկրորդը ո՞րն է : Թուա-
նշանները քանի տեսակ նշանակութիւն ունին :

Ո՞րն է բացարձակ նշանակութիւնը : Ո՞րն է տեղական նշանակութիւնը : Ամէն կարգի թիւերը իրարու հետ չը շփոթելու համար թուանշաններն ի՞նչ կերպով կը շարուին :

Թիւ կարգաւ և թիւ գրել սովորելու համար քանի՞ թուանշանով թիւ կարգաւ և գրել գիտնալը բաւական է :

20. Ետտ թուանշանով գրուած թիւ մը ի՞նչպէս կարգալու է . և ինչո՞ւ երեք թուանշանով հասուածներու կը գտաներ :

21. Բաւած թիւ մը թուանշանով ի՞նչպէս գրելու է :

22. Հաւաքածոյ միութիւնն ի՞նչ է :

Բ. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՔ

ԱՄԲՈՂԸ ԹՈՒՈՅ

23. Ամբողջ թիւերը չորս հիմնական գործողութիւնն ունին , որոնք են , ՅԱԻՆԼՈՒՄՆ , ԲԱՐՉՈՒՄՆ , ԲԱԶՄԱԳՈՏԿՈՒԹԻՒՆ , ԲԱԺԱՆՈՒՄՆ :

1. ՅԱԻՆԼՈՒՄՆ

24. Երկու կամ աւելի գումարելի ըսուած թիւեր մէկ տեղ բերելով անոնց ամենուն հաւասար գումար ըսուած թիւ մը գտնալու գործողութեանը կըսուի Յուսկումն :

Եթէ աշակերտ մը ուզէ հասկնալ թէ 8ը 7ալ քանի՞ կըլնէ , և թէ որ շատով գտնալու վարժարիւն չունի , պէտք է ըսել , 8, 1ալ կըլնէ 9. 8, 2ալ կըլնէ 10. 8, 3ալ կըլնէ 11. 8, 4ալ 12. 8, 5ալ 13. 8, 6ալ 14. 8, 7ալ 15. ասանկով կը հասկընաց որ 8ին վրայ 7ը գումարելով կըլրայ 15.

Հոս 8 և 7 թիւերը գումարելի են , 15ը գումար :

ԿԱՆՈՆԵՔ ՅԱԻՆԼՄՆ

25. Ա. «Միաւոր թուոց գումարը վարժու թեամբ և հետեւեալ աղիւսակին միջոցաւ սովորելու է» :

ԱՂԻՒՍԱԿ ՅԱԻՆԼՄՆ

1	1 ալ	2	2	1 ալ	3	3	1 ալ	4	4	1 ալ	5	5	1 ալ	6
1	2 ալ	3	2	2 ալ	4	3	2 ալ	5	4	2 ալ	6	5	2 ալ	7
1	3 ալ	4	2	3 ալ	5	3	3 ալ	6	4	3 ալ	7	5	3 ալ	8
1	4 ալ	5	2	4 ալ	6	3	4 ալ	7	4	4 ալ	8	5	4 ալ	9
1	5 ալ	6	2	5 ալ	7	3	5 ալ	8	4	5 ալ	9	5	5 ալ	10
1	6 ալ	7	2	6 ալ	8	3	6 ալ	9	4	6 ալ	10	5	6 ալ	11
1	7 ալ	8	2	7 ալ	9	3	7 ալ	10	4	7 ալ	11	5	7 ալ	12
1	8 ալ	9	2	8 ալ	10	3	8 ալ	11	4	8 ալ	12	5	8 ալ	13
1	9 ալ	10	2	9 ալ	11	3	9 ալ	12	4	9 ալ	13	5	9 ալ	14
1	10 ալ	11	2	10 ալ	12	3	10 ալ	13	4	10 ալ	14	5	10 ալ	15
6	1 ալ	7	7	1 ալ	8	8	1 ալ	9	9	1 ալ	10	10	1 ալ	11
6	2 ալ	8	7	2 ալ	9	8	2 ալ	10	9	2 ալ	11	10	2 ալ	12
6	3 ալ	9	7	3 ալ	10	8	3 ալ	11	9	3 ալ	12	10	3 ալ	13
6	4 ալ	10	7	4 ալ	11	8	4 ալ	12	9	4 ալ	13	10	4 ալ	14
6	5 ալ	11	7	5 ալ	12	8	5 ալ	13	9	5 ալ	14	10	5 ալ	15
6	6 ալ	12	7	6 ալ	13	8	6 ալ	14	9	6 ալ	15	10	6 ալ	16
6	7 ալ	13	7	7 ալ	14	8	7 ալ	15	9	7 ալ	16	10	7 ալ	17
6	8 ալ	14	7	8 ալ	15	8	8 ալ	16	9	8 ալ	17	10	8 ալ	18
6	9 ալ	15	7	9 ալ	16	8	9 ալ	17	9	9 ալ	18	10	9 ալ	19
6	10 ալ	16	7	10 ալ	17	8	10 ալ	18	9	10 ալ	19	10	10 ալ	20

Այս աղիւսակը շատով կը սովորին աշակերտք երէ տաւջիչը հետեւեալ խելիքները և անոնց նմանները աւաշարկէ :

Ա. 1 ծառ 2 ծառ ալ քանի՞ ծառ կըլնէ , 1, 2ալ քանի՞ կըլնէ :

Բ. Մայրդ 1 խնձոր տուաւ , ետքը 3 խնձոր ալ տուաւ , ամէնը քանի՞ խնձոր եղաւ : 1, 3 ալ քանի՞ կըլնէ :

Գ. Պետրոսը ծառին տակէն 4 տանձ գտաւ , 4 ալ Պըրիգորը տուաւ : Քանի՞ տանձ ունի :

Դ. Եղբայրը Մարիամին կեռաս մը տուաւ , մայրն ալ 7 կեռաս . Մարիամը քանի՞ կեռաս ունի :

Ե. Սենեակին մէկ կողմը 2 աթոռ դրուած է . միւս կողմն ալ 2 աթոռ դրուած է : Սենեակին մէջ քանի՞ աթոռ կայ : 2, 2 ալ քանի՞ կընէ :

Զ. Ըսենք որ տղայ մը 2 խնձոր ունի , 3 ալ եղբայրը տուաւ , ամէնը քանի կըզաւ : 2, 3 ալ քանի՞ կընէ :

Է. Միհրանը ծառի մը տակէն 2 շաղանակ գտաւ , 8 շաղանակ ալ ուրիշ ծառի մը տակէն . ամէնը քանի՞ կըզաւ : 2, 8 ալ քանի՞ կընէ :

Ը. Գառի մը ճիւղին վրայ 3 թռչուն կար , ուրիշ ճիւղի մը վրայ 5 թռչուն կար , երկու ճիւղին վրայ քանի՞ թռչուն կար : 3, 5 ալ քանի՞ կընէ :

Թ. Ղատերն ըսելու համար 3 տղայ ոտքի վրայ ելան , ուրիշ 3 տղայ ալ անոնց հետ կարգադու եկան . ամէնը քանի՞ տղայ է : 3, 5 ալ քանի՞ կընէ :

Ժ. Տիրանը հաւնոցէն 7 հաւկիթ գտաւ , Արշակն ալ 8 հաւկիթ . ամէնը քանի՞ կընէ : 7, 8 ալ քանի՞ կընէ :

ԺԱ. Պարտէզին մէկ կողմը 9 նուռի ծառ կայ , և 6 ալ լեմոնի ծառ . ամէնը քանի՞ ծառ է : 9, 6 ալ քանի՞ կընէ :

ԺԲ. Գրտանիդ մէկը 10 կաղին ունիս , միւս գրտանիդ ալ 7 կաղին . ամէնը քանի՞ կաղին կընէ : 10, 7 ալ քանի՞ կընէ :

ԺԳ. Սեղանի մը մէկ կողմը 4 աշտանակ կար , միւս կողմը 9 աշտանակ . ամէնը քանի՞ աշտանակ կընէ : 4, 9 ալ քանի՞ կընէ :

ԺԴ. Սաթինիլը ասեղնոցին մէջ 5 գնտասեղ

դրաւ , Զարուհին ալ 10 գնտասեղ դրաւ . ամէնը քանի՞ կըզաւ :

ԺԵ. 1 ճակի մը մէջ 6 սագ մէկ կողմը կը լողան , 8 սագ ալ միւս կողմը , ըճակին մէջ քանի՞ սագ կայ : 6, 8 ալ քանի՞ կընէ :

ԺԶ. Խանութպան մը մէկուն 7 կային ծախեց , ուրիշի մը 6 կային . ամէնը քանի՞ կային ծախեց . 7, 6 ալ քանի՞ կընէ :

ՕՐԻՆԱԿԻՔ

- Պումարելու է 4, 6, 7, 3 թիւերը .
- Պորտոպրիւն . 4, 6 ալ 10, 7 ալ 17, 3 ալ 20 .
- Պումարելու է 5, 5, 8, 7, 6 թիւերը .
- Պորտոպրիւն . 5, 5 ալ 10, 8 ալ 18, 7 ալ 25, 6 ալ 31 .
- Պումարելու է 8, 3, 5, 4, 9, 7 թիւերը :
- Պորտոպ . 8, 3 ալ 11, 5 ալ 16, 4 ալ 20, 9 ալ 29, 7 ալ 36 .

Երկարութիւնը	5	4	7	2	7	6
	6	6	9	4	4	4
	7	3	8	3	9	5
	8	3	6	4	2	3
	9	4	4	5	8	7
Պումար	33	47	34	45	27	25

26. Բ. « Պումարելիները երբոր բազմաթուանշան ըլլան , անոնք իրարու տակ գրելու է անանկ կերպով մը , որ միաւորները , տասնաւորները , հարիւրաւորները և այլն զատ զատ գաւազաններ ըլլան , և վերջի գումարելիին տակէն գիծ մը քաշելու է , և ալ կողմի միաւորաց գաւազանին թիւերը գումարելու է . գումարին միաւորը գրելու է նոյն գաւազանին տակը , և տասնաւորը (եթէ կայ) ձեռք այսչափ ըսելով տասնաւորաց վրայ աւելցնելու է , ասոնց ալ գումարին

միասորը գրելու է իրենց տակը , և տասնաորը (եթէ կայ) ձևոք այսչափ ըսելով հարխրաւորաց վրայ աւելցնելու է , և շարունակելու է դործողութիւնը մինչև ձախ կողմի վերջի դաւազանը , որոյ դումարը իր տակը ամբողջ գրելու է » :

Պրնայից
00ԻՆԱԿ
5678
3436
2345

Պումար 44679

Կըստ 8, 6 ալ 14, 6 ալ 19, կը գրեմ միասորի գաւազանիս տակը 9. և կըստ ձևոք 1, 7 ալ 8, 5 ալ 13, 4 ալ 17. կը գրեմ տասնաորի գաւազանիս տակը 7. և կըստ ձևոք 1, 6 ալ 7, 4 ալ 11, 5 ալ 16. կը գրեմ 6 հարխրաւորի գաւազանիս տակը . և կըստ ձևոք 1, 5 ալ 6, 3 ալ 9, 2 ալ 11. կը գրեմ վերջի գաւազանիս տակը 11, և որով ընդհանուր գումարը եղաւ 44679.

23	325	6756	61425	164708
42	614	4526	72364	892507
65	939	44282	433789	4057245

27. Փորձ յաւելնան . Եթէ գումարելիները վերէն վար գումարելով գումարը զանուած է , անզամ մ'ալ վարէն վեր գումարելու է , եթէ գումարը աւաւջնոցն հաստար ըլլայ , դործողութիւնը ուղիղ է :

Գումարելու է հետևեալները :

40	425	5678	22376	375616
33	630	4323	44675	436795
76	745	3616	6578	524564
27	564	785	36248	725375

Ա. Մինասը հորմէն 4 փարայ առաւ , ետքը 6

փարայ առաւ , և ետքը 7 փարայ ալ . ամէնը քանի՞ կընէ : 4, 6, 7 քանի կընէ :

Բ. Մայրդ քեզի 3 շաբար տուաւ , հայրդ 5 շաբար քոյրդ ալ 6 շաբար . ամէնը քանի՞ շաբար եղան : 3, 5, 6, քանի՞ կընէ :

Գ. Ձեր պարտեղին մէջ 10 սալորի ծառ կայ , 2 տանձի , 3 սերկեւիկի , 4 ալ նուռի և 3 ալ դեղձի ծառ կայ . ամէնը քանի՞ ծառ կընէ : 10, 2, 3, 4, 3, քանի՞ կընէ :

Դ. Հայրդ հացափաճառին 85 զուրուշ պարտք ունի , մատափաճառին 75 զրշ , նարտափաճառին 125 զրշ , դեղագործին 26 զրշ , բժիկին 60 զրշ . բոլոր պարտքը քանի՞ զրշ կ'ընէ :


Ե. Մեր գրացիներ հարուստ սեղանաւոր մ'է . անցեալ օր թղթադանակէն 5 մուրհակ հանեց . առաջինին մէջ 56725 զուրուշի ասնելիք կար , երկրորդին մէջ 125446 զուրուշի ասնելիք , երրորդին մէջ 67900 զուրուշի , չորրորդին մէջ 48925 զրշի , հինգերորդին մէջ 43600 զրշի . ամէնը քանի՞ զրշ է :

Զ. Յակոբը 6 տարու է , Միհրանը 5 տարու , Տիրանը 3 տարու , Կարապետը 10 տարու և Պետրոսը 12 տարու . եթէ ասոնք իրարու վրայ աւելցունենք , ո՞րչափ կըլլայ :

Է. Յակոբը 15 պատուատոմս ունի , Պետրոսը 25, Միհրանը 45, Տիրանը 56. ամէնը քանի՞ կընէ :

Ը. Չասիկին մեծ եղբայրս ինձ հազուստ առաւ , քանի՞թաւնին համար տուաւ 75 զուրուշ , սիւրթիւքային համար 156 զրշ , ժիլէին համար 48 զրշ , կոշիկի համար 95 զրշ , ֆէտի համար 35 զրշ . բոլորին համար քանի՞ զուրուշ վճարեց :

90
40



ՀԱՐՅՄՈՒՆԻ

- 23. Ամբողջ թիւերը բանի՞ գործողութիւն ունին :
- 24. Ինչ՞ է յաւելումը: Քանի՞ գլխաւոր թիւ կայ յաւելման մէջ: Թիւ մը ուրիշ թուոյ մը վրայ ի՞նչպէս աւելցնելու է բնական կերպով: Պատմարելի և գումար բտուած թիւերը օրինակով հասկցուր :
- 25. Միաւոր թիւերը ի՞նչպէս գումարելու է :
- 26. Բազմաթուանշան թիւերը ի՞նչպէս գումարելու է :
- 27. Յաւելման փորձը ի՞նչպէս ընելու է :

2. ԲԱՐՁՈՒՄՆ

28. Մե՞ծ քիւն մը , փոքր քիւ մը հանելով մնալու ցորդը գտնաւու գործողութեանը կըսուի ֆարձուսն. Մնացորդը կըսուի նաև ասորկերպիւն կամ՝ առուել շարիւն :

Թիւ որ աշակերտ մը ուզէ 9Լն 5 հանել, և քէ որ շուտով կարող չըլլայ մնացորդը գտնար, կըսէ՝ 9Լն 1 ելլայ կը մնայ 8. 9Լն 2 կըլլայ կը մնայ 7. 9Լն 3 կըլլայ կը մնայ 6. 9Լն 4 կըլլայ կը մնայ 5. ասակերով կը գտնայ որ 9Լն 5 կըլլայ կը մնայ 4: Հոս 9 է մեծ թիւ և 5ը փոքրը թիւ և 4ը մնացորդ :

ԿԱՆՈՆԻ ԲԱՐՁՄԱՆ

29. Ա. « Թէ որ փոքր թիւը միաթուանշան թիւ մ'է , մնացորդը բարձման աղիւսակէն և վարժութեամբ ստիբելու է » : (Տես էջ 19)

Այս աղիւսակը ստիբեցնելու համար հետևեալ խնդիրները և անոնց նմանները առաջարկելու է :

Ա. Սեղանին վրայ գաւաթ մը կար. տղայ մը իր թիւը դաջնելով գաւաթն ինչպա կտարեցաւ . սեղանին վրայ քանի՞ գաւաթ մնաց : 1էն 1 կըլլայ ի՞նչ կը մնայ :

Բ. Իրարու քով 2 աթոռ դրուած էր , Միհրանը աթոռին մէկը վար ձգեց . վար չինկած քանի՞ աթոռ մնաց : 2էն 1 կըլլայ ի՞նչ կը մնայ :

ԱՂԻՍԱԿ ԲԱՐՁՄԱՆ

	0	1	2	3	4	5	6	7	8	9
1էն 1	2էն 2	3էն 3	4էն 4	5էն 5	6էն 6	7էն 7	8էն 8	9էն 9	10էն 0	11էն 1
2էն 1	3էն 2	4էն 3	5էն 4	6էն 5	7էն 6	8էն 7	9էն 8	10էն 9	11էն 0	12էն 1
3էն 1	4էն 2	5էն 3	6էն 4	7էն 5	8էն 6	9էն 7	10էն 8	11էն 9	12էն 0	13էն 1
4էն 1	5էն 2	6էն 3	7էն 4	8էն 5	9էն 6	10էն 7	11էն 8	12էն 9	13էն 0	14էն 1
5էն 1	6էն 2	7էն 3	8էն 4	9էն 5	10էն 6	11էն 7	12էն 8	13էն 9	14էն 0	15էն 1
6էն 1	7էն 2	8էն 3	9էն 4	10էն 5	11էն 6	12էն 7	13էն 8	14էն 9	15էն 0	16էն 1
7էն 1	8էն 2	9էն 3	10էն 4	11էն 5	12էն 6	13էն 7	14էն 8	15էն 9	16էն 0	17էն 1
8էն 1	9էն 2	10էն 3	11էն 4	12էն 5	13էն 6	14էն 7	15էն 8	16էն 9	17էն 0	18էն 1
9էն 1	10էն 2	11էն 3	12էն 4	13էն 5	14էն 6	15էն 7	16էն 8	17էն 9	18էն 0	19էն 1
10էն 1	11էն 2	12էն 3	13էն 4	14էն 5	15էն 6	16էն 7	17էն 8	18էն 9	19էն 0	20էն 1

Պ. Պատ ըսելու եկան 3 տղայք : Չը զխոցանք
զասերնին ու տեղերնին դարձան . դաս չգիտցալ
քանի՞ տղայ մնաց : 3էն 2 ելլայ քանի՞ կը մնայ :

Պ. Սեղանի մը վրայ 8 ջրի գաւաթ կայ , անոնց
3ը զլիւի վար դրուած է . քանի՞ն շխտակ է . 8էն 3
ելլայ քանի՞ կը մնայ :

Ե. Պարի կուտէին 10 հաւ , բայց տղայ մը ա-
նոնց 4ը վախցնելով փախուց . քանի՞ հաւ մնաց =
10էն 4 ելլայ քանի՞ կը մնայ :

Զ. Զարուհին 12 գնդասեղ ունէր , 7ը իր քոյրն
առաւ . քանի՞ հատ մնաց : 12էն 7 ելլայ քանի՞ կը մնայ :

Ե. Պարտէզը տանձի ծառ մ'ունէինք , որոց վրայ
13 տանձ կար . 8 հատը սղտիկ ելլալոյն քաղեց . ծառին
վրայ քանի՞ տանձ մնաց : 13էն 8 ելլայ քանի՞ կը մնայ :

Ը. Կատք մը նստած 9 տղայ կերթային . ասոնց
4ը դուրս վանաւեցան , աղբուկ հանելուն համար :
Կատքը քանի՞ տղայ մնաց : 9էն 4 ելլայ քանի՞ կը մնայ :

30. Բ. « Երբ որ փոքր թիւը բազմաթուանշան
թիւ մ'ըլլայ , գրելու է մեծ թուոյն տակը , անանկ
որ միաւորը միաւորին , տասնաւորը տասնաւորին
եայլն , տակը դայ . տակէն զի՞մ մը քաշելով , փոքր
թուոյն միաւորէն սխտեղ ամէն մէկ կարգի թիւերը
մեծ թուոյն նման կարգերէն հանելու է , և մնա-
ցորդները իրենց տակը գրելու է » :

« Թէ որ փոքր թուոյն ինչ և իցէ մէկ կարգի
թիւը մեծ թուոյն իր նման կարգի թիւէն մեծ ըլ-
լայ , մեծ թուոյն նոյն կարգը 10 աւելի աւանելով
փոքր թիւը հանելու է . բայց այս զխաղաւորն մէջ
ձեռք կայ 1 ըսելով փոքր թուոյն յաջորդ թուանը-
շանին վրայ 1 աւելցնելու է » :

4758	Մե՛՛՛ թիւ
2145	Փոքր թիւ
—	—
2613	Մնացորդ

4758էն 2145ը հանելու համար , գրեցի փոքր թիւը
ձե՛՛՛ թուոյն տակը , և ըսի , 8էն 5 ելլայ կը մնայ 3 ,
գրեցի մնացորդին միաւոր 3 . 5էն 4 ելլայ կը մնայ 1 ,
գրեցի մնացորդին տասնաւոր 1 . 7էն 1 ելլայ կը մնայ
6 , գրեցի մնացորդին հարիւրաւոր 6 . 4էն 2 ելլայ կը
մնայ 2 , գրեցի մնացորդին հազարաւոր 2 . որով եղաւ
քոյրը մնացորդը 2613 .

45024	Մե՛՛՛ թիւ
8534	Փոքր թիւ
—	—
6490	Մնացորդ

4էն 4 ելլայ կը մնայ 0 , գրեցի մնացորդին միաւոր 0 .
2էն 3 չեղար , սնոր համար ըսի , 12էն 3 ելլայ կը
մնայ 9 , գրեցի մնացորդին տասնաւոր 9 . և ըսի ձեռք
կայ 1 , 5 ալ 6 , 0էն չեղար , 10էն ելլայ կը մնայ 4 .
գրեցի մնացորդին հարիւրաւոր 4 . և ըսի , ձեռք կայ 1 ,
8 ալ 9 , 5էն չեղար , 15էն ելլայ կը մնայ 6 , որ գրեցի
մնացորդին հազարաւոր . և ըսի , ձեռք կայ 1 , 1էն ել-
լայ թան չի մնար , որով եղաւ քոյրը մնացորդը 6490 :

31. Փորձ բարձման . « Թէ որ մնացորդը փոքր
թուոյն վրայ աւելցնելով գումարը մեծ թուոյն հա-
ւասար ըլլայ ուղիղ է » :

արձման փորձը ընելու առնել , մնացորդը փոքր
թուոյն վրայ աւելցնելով գումարը տակը կամ ուրիշ
տեղ մը գրելու չէ , այլ միայն ձե՛՛՛ թուոյն հետ քաղա-
տեքով ուղիղ կամ սխալ ըլլալը հասկնալու է :

ՕՐԻՆԱԿԻՔ

Մեճ թիւ	33	143	1204	43452	320033
Փոքր թիւ	44	442	4492	253336	418548
Մնացորդ	24	31	12	48116	201505

ԽՆԴԻՐԻՔ ԲԱՉԶՄԱՆ

Ա. Մարդ մը 34 տարու էր երբ զաւակ մ'ունեցաւ, 43 տարու եղած ատենը նոյն զաւակը քանի՞ տարու եղած կըլլայ:

Բ. Հացագործին 323 զուրուշ պարտք ունէի, 178 զուրուշը տաւի. ո՞րչափ պարտքս մնաց:

Գ. Մէկուն փոխ տաւի 15614 զուրուշ, 8793 զուրուշը տաւի. ո՞րչափ նստեցիքս մնաց:

Դ. Քաղբի մէջ մէջ 2367436 բնակիչ կայ, սակէ 20 տարի առաջ 1875400 բնակիչ կար. 20 տարուան մէջ ո՞րչափ աւելցած է:

Ե. Մէկուն փոխ տաւի առաջին անգամ 1600 զուրուշ, երկրորդ անգամ 2425 զրշ, երրորդ անգամ 8316 զրշ. և տաւի առաջին անգամ 75 զրշ, երկրորդ անգամ 3576 զրշ. ատենելքս ո՞րչափ մնաց:

ՀԱՐՅՄՈՒՆԻՔ

28. Ինչ՞ է բարձումը: Մնացորդը սրբը Բ՞նչ անուն կ'ունենա: Բարձման մէջ քանի՞ պիտուոր թիւ կայ: Օրինակի վրայ ցտոս դէլ կուտոր թիւերը:

29. Փոքր թիւը միաթմուանան եղած ատեն, Բ՞նչպէս բնելու բարձումը:

30. Բաղմամուանան փոքր թուոյն բարձումը Բ՞նչպէս բնելու է: Երբոր փոքր թուոյն մէկ թմանանոր մեծ թուոյն իր նման կարգի թմանանն մեծ ըլլայ, Բ՞նչպէս բնելու է բարձումը:

31. Բարձման փորձը Բ՞նչպէս կըլլայ:

3. ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ

32. Բազմապատկարիւն կըտուի այն գործողութիւնը, որով մի եւեռոյն թիւը շատ անգամ կ'աւանուի:

Այն թիւն որ շատ անգամ պիտի աւանուի, կըտուի բազմապատկելի. բազմապատկելիին քանի անգամ աւանուիլը խնայեալ թիւն ալ կըտուի բազմապատկող. այս երկու թիւերը արտադրող ալ կըտուին, գործողութենէն ետքը դանուածն ալ արտադրեալ:

Հօխակ 5 դուրուշէ 7 հօխայ շարքը քանի դուրուշ բնելը նստեցաւ հաւար, պէտք է 7 անգամ 5 ստենկ որ կրնէ 35 դուրուշ: Հոս 5 դուրուշ է բազմապատկելի, 7 է բազմապատկող և 35 է արտադրեալ:

Միշտ արտադրեալին տեսակէն եղած թիւը բազմապատկելի է:

ԿԱՆՈՆԻՔ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ

33. Ա. Արտադրողաց երկուքն ալ միարուանըան. «Ասոնց արտադրեալը բազմապատկութեան աղիւսակէն և վարժութեամբ սովբելու է աշակերտը»:

ԱՂԻՒՍԱԿ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ

2 հեղ1,	2	3 հեղ1,	3	4 հեղ1,	4	5 հեղ1,	5
2 հեղ2,	4	3 հեղ2,	6	4 հեղ2,	8	5 հեղ2,	10
2 հեղ3,	6	3 հեղ3,	9	4 հեղ3,	12	5 հեղ3,	15
2 հեղ4,	8	3 հեղ4,	12	4 հեղ4,	16	5 հեղ4,	20
2 հեղ5,	10	3 հեղ5,	15	4 հեղ5,	20	5 հեղ5,	25
2 հեղ6,	12	3 հեղ6,	18	4 հեղ6,	24	5 հեղ6,	30
2 հեղ7,	14	3 հեղ7,	21	4 հեղ7,	28	5 հեղ7,	35
2 հեղ8,	16	3 հեղ8,	24	4 հեղ8,	32	5 հեղ8,	40
2 հեղ9,	18	3 հեղ9,	27	4 հեղ9,	36	5 հեղ9,	45

6 հեղ1,	6	7 հեղ1,	7	8 հեղ1,	8	9 հեղ1,	9
6 հեղ2,	12	7 հեղ2,	14	8 հեղ2,	16	9 հեղ2,	18
6 հեղ3,	18	7 հեղ3,	21	8 հեղ3,	24	9 հեղ3,	27
6 հեղ4,	24	7 հեղ4,	28	8 հեղ4,	32	9 հեղ4,	36
6 հեղ5,	30	7 հեղ5,	35	8 հեղ5,	40	9 հեղ5,	45
6 հեղ6,	36	7 հեղ6,	42	8 հեղ6,	48	9 հեղ6,	54
6 հեղ7,	42	7 հեղ7,	49	8 հեղ7,	56	9 հեղ7,	63
6 հեղ8,	48	7 հեղ8,	56	8 հեղ8,	64	9 հեղ8,	72
6 հեղ9,	54	7 հեղ9,	63	8 հեղ9,	72	9 հեղ9,	81

Բագնատարներու արխաակը պարտաւոր տվ
րեցնելու համար հետևեալ խնդիրները առաջարկերս է
արակերտաց :

Ա. 2 ծառ կայ , ամէն մէկուն վրայ մէկմէկ թըւ-
չուն . 2 ծառին վրայ քանի՞ թռչուն կայ : 2 հեղ 4
քանի՞ կընէ :

Բ. 3 տղայ քանի՞ զիրք ունին , երբ ամէն մէկը
2 ակիան զիւր ունենայ : 3 հեղ 2 քանի՞ կընէ :

Գ. 4 հեղ 3 ակիան տանձ ուտելով ամէնը քանի՞
տանձ կերած կըլլաս : 4 հեղ 3 քանի՞ կընէ :

Դ. 7 զիրք ունիմ , ամէն մէկուն մէջ 3 ակիան
պատկեր կայ . ամէնը քանի՞ պատկեր կընէ : 7 հեղ
3 քանի՞ կընէ :

Ե. Պետրոսը այսօր 8 անգամ խնդրայ , և ամէն
մէկ անգամին վարպետը 4 անգամ յանդիմանեց , այսօր
Պետրոսը ընդ ամէնը քանի՞ յանդիմանութիւն կը-
րած է : 8 հեղ 4 քանի՞ կընէ :

Զ. Սաթիւնիկը այս շաբթու 6 անգամ պարզե-
տաւ վարպետէն 9 ակիան շաբար . ամէնը քանի՞
շաբար առաւ : 6 հեղ 9 քանի՞ կընէ :

Է. Միհրանը օրը 3 ժամ կաշխատի , մէկ շա-
բաթուան , այսինքն 6 օրուան մէջ քանի՞ ժամ կաշ-
խատի . 3 հեղ 6 քանի՞ կընէ :

Ը. Նուսի 8 ծառ ունինք , ամէն մէկուն վրայ 7
նուս կայ . ամէնը քանի՞ նուս է : 8 հեղ 7 քանի՞ կընէ :

34. Բ. Արտադրողաց մէկը բագնարուանէ : « Միա-
թուանչան արտադրողը բազմաթուանչան արտադրող-
զին միաւորին տակը գրելու է , և միաթուանչանով
բազմաթուանչանին միաւորին սխեալ հետզհետէ
բազմապատկելու է , և արտադրեալներուն միաւոր-

ները իրենց տակը գրելու է , և տասնաւորներն այ՞
ձեռք այսքան ըսելով՝ յաջորդ արտադրեալին վրայ
տակընելու է մինչև բարձր կարգը , սրբ արտադ-
րեալը ամբողջ գրելու է » : Ինչպէս՝

3367 Բագնարուանչան արտադրող
6 Միարուանչան »

24402

Բիւ 6 հեղ 7, 42. գրեցի 2 արտադրեալին միաւոր և
բիւ ձեռք 4. 6 հեղ 6, 36, 4 ալ 40, գրեցի 0 արտադ-
րեալին տասնաւոր և բիւ ձեռք 4. 6 հեղ 5, 30, 4 ալ
34. գրեցի 4 արտադրեալին հարիւրաւոր և բիւ ձեռք 3.
6 հեղ 3, 18, 3 ալ 24. գրեցի անոյդ 24 արտադրեա-
լին հազարաւոր , և բոլոր արտադրեալն եղաւ 24402 :

648	5742	276489	4516025	75425689
8	7	6	5	4
5484	40194	4658934	22380425	300502756

35. Գ. Արտադրողաց մէկը հաւաքածոյ միաբիւն :
« Հաւաքածոյ միութեան գրծները միւս արտադրողին
աջկողմը գրելով արտադրեալը կը գանուի » : Ինչպէս՝

745	647	28	3675
400	40	4000	400
74500	6470	28000	367500

36. Գ. Արտադրողաց մէկը բուանչանի մը ետեւէն գրե-
նելի ունեցող բիւ մը : « Միայն նշանակիան թուանչա-
նով միւս արտադրողը բազմապատկելու է և գրծե-
րը աջ կողմը գնելու է » : Ինչպէս՝

6	49	378	4768	75039
700	50000	60	500	70000
4200	95000	22680	2384000	5252730000

37. Ե. Արտադրողաց երկուքն ալ բագնարուանչան :

« Քիչ թուանշան ունեցողը բազմապատկող ընելով միասին տակը գրելու է, բազմապատկողին ամեն մէկ թուանշանովը զատ զատ բազմապատկելու է բազմապատկելիին բոլոր թուանշանները միասորէն սկսելով, որով կըլլան մէկ մէկ մասնատր արտադրեալներ, ասոնց գումարը կ'ըլլայ ընդհանուր արտադրեալը:

Բազմապատկողին ինչ և իցէ մէկ թուանշանով բազմապատկելիին միասորին արտադրեալը սկսոր է որ բազմապատկողին նոյն թուանշանին տակովը կրամ իր կարգին յարմար տեղը գրուի:

Եթէ արտադրողները իրենց ծայրը գրօներ տննանան, միայն նշանական թուանշաններով բազմապատկուած թիւեր ընելէն ետքը, արտադրուած ճարի գրօները արտադրեալին աջ կողմն առնելու է:

Եթէ բազմապատկողին մէջը գրօներ ըլլայ, միայն նշանական թուանշանով ընելու է բազմապատկուած թիւեր »:

ՅՐԻՆԱԿՔ

Բազմապատկելի	3367	5300678
Բազմապատկող	483	40030
Ա. մասնատր արտադրեալ	47835	34804068
Բ. " " "	28336	26503390
Գ. " " "	44268	24202742
Բնօրինակուր արտադրեալ	4729995	242323957968
	436	236000
	7500	4800
	2280	4888
	3192	944
	3420000	4432800000

38. Փորձ բազմապատկարեան: « Արտադրողաց

կարգը փոխելով դարձեալ բազմապատկելու է, եթէ առաջի արտադրեալն ելնէ արտադրեալը ուղիղ է:

ԽՆԳԻՐՔ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹՆԱՆ

Ա. Մէկ հօխայ խաչովէն 8 զուրուչ ըլլալով, 425 հօխան քանի՞ զուրուչ կընէ:

Բ. 44645 փարան քանի՞ ստակ կընէ, մէկ փարան 3 ստակ է:

Գ. 4564 տան մէջ քանի՞ մարդ կայ, մէկ տան մէջ 7 մարդ հաշուելով:

Դ. Հօխան 5 զուրուչէն 5676 հօխայ շարքը քանի՞ զուրուչ կընէ:

Ե. Մէկ մարդուն 40 զուրուչ տալով 745 մարդուն քանի՞ զուրուչ տալու է:

Զ. Մէկ ոսկին 400 զուրուչէն 3564 ոսկին քանի՞ զուրուչ կընէ:

Է. Մէկ քաակին մէջ 4000 զուրուչ կայ, 275 քաակին մէջ քանի՞ զուրուչ կըլլայ:

Ը. Մէկ բեռը 400000 է, 164 բեռը ս'ըջափ է և դարձեալ 203 բեռը ս'ըջափ կընէ:

Թ. Մէկ թիւը 40000 է, 4567 թիւերն ս'ըջափ են:

Ճ. Մէկ հօխան 400 տրամ է, 365 հօխան քանի՞ տրամ կընէ:

ԺԱ. Մէկ զուրուչը 40 փարա է, 2475 զուրուչը քանի՞ փարայ է:

ԺԲ. Մէկ ժամը 60 վայրկեան է, 378 ժամը քանի՞ վայրկեան կընէ:

ԺԳ. Մէկ մարդուն 90000 զուրուչ սխախ աբուր, 756 մարդոց քանի՞ զուրուչ տալու է:

ԺԴ. Մէկ թէֆէ մետաքսը 640 տրամ է, 4258

ԹԼԳԷ մետաքսը քանի՞ արամ մետաքս կընէ :

ԺԵ. Քանի՞ անգամ 5 կընէ 45 .

ԺԶ. Դը ի՞նչով բազմապատկելու է որ արտադրեալը 56 ըլլայ :

ԺԷ. Քանի՞ անգամ 6ը 42 կընէ :

ԺԸ. Քանի՞ով 9ը բազմապատկելու է որ արտադրեալը 63 ըլլայ :

ԺԹ. Գտի՛ր այն երկու ամբողջ միասոր թիւերը, որ իրարմով բազմապատկելով արտադրեալը 36 ըլլայ :

Ի. Որո՞նք են այն երկու ամբողջ միասոր թիւերը, որոց արտադրեալը 48 կամ 24 կամ 27 կամ 30 և այլն կըլլայ :

ԻԱ. 4ը քանի՞ով բազմապատկելու է որ արտադրեալը 28 ըլլայ :

ԻԲ. Բազմապատկելին 8 է, արտադրեալը 64, ի՞նչ է բազմապատկողը :

ԻԳ. Արտադրողաց մէկը 6 է, արտադրեալը 54, ի՞նչ է միւս արտադրողը :

ԻԴ. Գտի՛ր այն թիւը որ 7ով բազմապատկելով արտադրեալը 49 ըլլայ :

ԻԵ. Գարոցի մէկ սրահին մէջ 48 նստարան կայ, իւրաքանչիւր նստարանին վրայ 43 աշակերտ կը նստին այն սրահը քանի՞ աշակերտ կընայ սլարուհակել :

ԻԶ. Գարծաւոր մը օրը 23 զուրուչ կը շահի, 64 օրուան մէջ 48 գարծաւոր քանի՞ զուրուչ կը շահին :

ԻԷ. Մէկ ծրար չուխան 45 արջըն է, և մէկ արջըն չուխան ալ 65 զուրուչ. 424 ծրար չուխան քանի՞ զուրուչ կընէ :

ԻԸ. Մէկ սրարի խահլէն 33 հօխայ է, 164 սրարի խահլէն քանի՞ հօխայ կընէ :

ԻԹ. Շողենաւին մէկ անիւը մէկ բոսլէին մէջ 450 անգամ կը դառնայ, 78 բոսլէի մէջ քանի՞ անգամ կը դառնայ :

Լ. Կառքի մը մէկ անիւը մէկ բոսլէի մէջ 38 անգամ կը դառնայ և իր շրջանակը 6 արջըն է, 46 բոսլէի մէջ քանի՞ արջըն տեղ կերթայ .

ՀԱՐՅՄՈՒՆԻ

31. Ի՞նչ է բազմապատկութիւնը : Բազմապատկութեան մէջ քանի գլխաւոր թիւ կայ : Ո՞րն է բազմապատկելին . ո՞րն է բազմապատկողը . ո՞րն է արտադրեալը : Արտադրողն ի՞նչ է . բազմապատկելին և բազմապատկողն ինչպէս որոշելու է :

32. Միաթուան յան արտադրողաց արտադրեալը ի՞նչպէս կը գտնուի :

33. Բազմաթուան յան թիւ մը միաթուան յանով ի՞նչպէս բազմապատկելու է :

34. Հաւաքածոյ միութեամբ ի՞նչպէս բազմապատկելու է թիւ մը :

35. Եթէ արտադրողաց մէկը՝ թուան յանի մը ետեւէն դրօնէր ունեցող թիւ մ՞է, ի՞նչպէս ընելու է բազմապատկութիւնը :

36. Երկու Բազմաթուան յան թիւերու բազմապատկութիւնը ի՞նչպէս ընելու է :

Եթէ արտադրողներուն ծայրերը դրօնէր ըլլայ, անոնց բազմապատկութիւնը ի՞նչպէս ընելու է :

Եթէ բազմապատկողին մէջը դրօնէր ըլլայ, ի՞նչպէս բազմապատկելու է :

37. Բազմապատկութեան փորձը ի՞նչ կերպով կըլլայ :

4 ԲԱԺԱՆՈՒՄՆ

39. Թիւ մը շատ մը հաւասար մասեր ընելու գործողութեանը կըսուի Բաժանումն :

Այն թիւն որ հաւասար մասերու սլխտի բաժնուի կըսուի Բաժանելի, քանի մասերու բաժնուիլը

Բաժանման աղիւսակը զխորոթեամբ սովրեցնե-
լու համար հետեւեալներուն սխա խնդիրներ առա-
ջարկելու է աչակերտաց :

Ա. Հաւաստարապէս սխաի բաժենք 4 զուրուշք 4
հարցոյ վրայ . խորաբանչխրին ինչ կկցնայ : 4ը 4ին
մէջ քանի՞ կայ :

Բ. 35 տանձը 7 ազոյ մէջ հաւաստարապէս բաժնե-
լու համար ամէն մէկուն քանի՞ հատ տարու է : 7ը
35 ին մէջ քանի՞ կայ :

Գ. 6ը 48 ին մէջ քանի՞ կայ . կամ 6ը քանի՞ով
բազմապատկելու է որ արտադրեալը 48 բլայ :

Դ. 7ը 58 ին մէջ քանի՞ կայ և ո՞րչափ կաւելնայ .
կամ 7ը ինչով բազմապատկելու է որ արտադրեալը
58 կամ ասիէ փոքր ամենէն մօտստ որ թիւն բլայ :

Ե. 9ը 67 ին մէջ քանի՞ կայ և ո՞րչափ կաւելնայ :

Զ. 8ը 50 ին մէջ քանի՞ կայ և ո՞րչափ կաւելնայ :

32. Բաժանողը միարանչան և բաժանելիին իր 10
անգամէն մեծ : « Բաժանողը բաժանելիին ձախ կող-
մը գրելով բնտուելու է բաժանելիի ձախ կողմի առ-
ջի մէկ կամ երկու թուանչանին մէջ , քանորդը վը-
րելու է նոյն թուոց տակը և մնացորդը իբրև առա-
նուոր բաժանելիին յաջորդ թուանչանին հետ առած՝
ասոնց մէջ դարձեալ բնտուելու է բաժնողը , քանոր-
դը գրելով , մնացորդը իբրև տասնաւոր բաժանելիին
յաջորդ թուանչանին հետ առած՝ ասոնց մէջ դարձեալ
բնտուելու է բաժնողը , քանորդը գրելով շարունա-
կելու է բաժանումը՝ մինչև բաժանելիին վերջի թուա-
նչանը . վերջի մնացորդը բոլոր բաժանման մնա-
ցորդն է : Աթէ բաժանողը բաժանելիին ինչ և իցէ մէկ
թուանչանին մէջ չի սրբունակի՞ անոր տակը քանոր-
դի տեղ զրօ դնելու է :

Բաժանող 3,	7137	Բաժանելի
	2379	Փակոյդ
	3	
Փորձ	7137	

Բաժանող 3ը բաժանելի 7137ին մախակողմը գրե-
լով բնտուելի որ 3ը 7ին մէջ 2 կայ 1 կաւելնայ . գրեցի
7ին տակը 2 քանորդը և 1 մնացորդն ալ բաժանելիին
յաշորդ բուանչանին հետ կդաւ 11, որոյ մէջ 3ը 3 հեղ
կայ 2 կաւելնայ , գրեցի 1ին տակը 3 քանորդը և 2 մը-
նացորդը բաժանելիին յաշորդ բուանչանին հետ կդաւ 23,
որակ մէջ 3 բաժանողը 7ը կայ 2 կաւելնայ , գրեցի 3ին
տակը 7 քանորդը և մնացորդ 2ը բաժանելիին յաշորդ
բուանչանին հետ կդաւ 27, որոյ մէջ 3 բաժանողը ճիշտ
Գը կայ , գրեցի 7ին տակ 9, որով յոյր քանորդն և
դաւ 2379. որոյ ուղիղ ըլլալը առագելու համար բազ-
մապատկեցի 3 բաժանողով և դուայ ճիշտ 7137 հաւա-
սար բաժանելիին :

8,	24397
	3049 ⁵
	8 ⁸
	24392
	5
Փորձ	24397

Կըստ 8ը 24ին մէջ 3 կայ կը գրեմ 24ին տակ քա-
նորդ 3. 8ը 3ին մէջ չիկայ , կը գրեմ 3ին տակը քա-
նորդի տեղ զրօ , 3ը յաշորդ 9ին հետ առնելով կըլլայ
39, որոյ մէջ 8ը 4 կայ 7ը կաւելնայ . կը գրեմ 9ին տա-
կը քանորդ 4 և 7ը մնացորդը բաժանելիին յաշորդ բը-
անչանին հետ կըլլայ 77, որոյ մէջ 8ը 9 կայ՝ 5 կաւել-

ևայ . կը գրեմ 7իև տակ քանորոյ 9, որով եղաւ շարք քանորոյը 3049, և մնացորոյ 5 աչ կը գրեմ այս ձևով $\frac{5}{8}$, որ ըսել է 5ը 8ով պիտի բաժնուի , և կը կարդայ 2ուի 5 բաժանեալ 8ով կաւ 8, և կաւ 5 որերորոյ : Բաժանեմ ուղի ըլլալը առողջութեան համար կը բազմապատկեմ քանորոյը բաժանորով և արտադրեալին վրամ մնացորդն աւելցնելով կը գտնաւ ճիշտ 24397, հասար բաժանելիին :

43. Պ. Բաժանորը հաւաքածոյ մխարխե : Թիւ մը 40ով, 400ով, 4000ով կամ ինչ և իցէ հաւաքածոյ միութեամբ բաժնելու համար , բաժանողին զրոներուն չափ զրո կամ թուանշան զատելու է ստորակետով, բաժանելիին աջ կողմէն , ստորակետին ձախ կողմինները մնացորդ են : Ինչպէս՝

256ը 10ով բաժնելու համար կը գտնուի բաժանելիին աչ կողմի 6ը և կըլլայ 25,6, որ է քանորոյ 25 և մնացորոյ 6, և կը կարդայ 25 անորոյ 6 տասներորոյ : Կոչուի՝ 3567 դորոշը 100 հոգիի բաժնելու համար կը գրեմ 35,67, որ ըսել է ամէն մէկուն 35 դորոշ կիւնայ , և 67 դորոշ աչ կաւելնայ կամ խրաքանկորի բաժնիկն է 35 դորոշ և 67 դրիկն աչ 100 երորոյ մասը :

3564ը 1000ով բաժնելու համար պէտք է գրել 3,564 աշխեքն 3 անորոյ 564 հազարորոյք : 156725ը 10000ով կը բաժնուի երբ գրեմ 15,6725, որ է 15 քանորոյ և 6725 մնացորոյ , այսինքն , 15 անորոյ 6735 տասնորոյ գարորոյք . 356ը 100ով բաժնելու համար գրելու է 3,56 դորոշ , 3 անորոյ 56 հարիւրորոյք :

44. Պ. Բաժանորը և բաժանելիին երկուքն աչ բազմարտանշան : Օրինակի համար .

104'6'7'	12
96	872 $\frac{5}{12}$
86	42
84	4744
27	872
24	3
3	40467

Փորձ

10467ը 12ով բաժնելու համար, կը գրեմ 12 բաժանորը բաժանելիին աչ կողմը գագաթնաւայնայ գէ մը ետքը , և բաժանողին տակէն հորիզոնական գիժ մը քաշելով , կտնկնուի բաժանելիին ձախ կողմի երկու քուանշանք , որով հետե բաժանորը երկու քուանշանքն . յայց բաժանելիին 10ը հազարաւորը բաժանող 12 էն վտրը ըլլալով՝ կտնկնուի երկք քուանշան 104 հարիւրաւոր , սա է առաջին մասնաւոր բաժանելի , ստոր մէջ 12 բաժանորը կը ընտնուի թէ քանի անգամ կայ . և գիտնալով որ 9էն աւելի չիկայ , կըսեմ 1ը 10 ին մէջ 9ը կայ 1 կաւելնայ , յայց 2ը 14ին մէջ 9ը չըլլալով , կըսեմ որ 1ը 10ին մէջ 8ը կայ 2 կաւելնայ , և 2 աչ 24ին մէջ 8էն աւելի պարունակելով կը գրեմ առաջին մասնաւոր քանորոյ կամ քանորոյին հարիւրաւոր 8՝ բաժանողին տակը , ստով բաժանող 12ը բազմապատկելով կը գրեմ արտադրեալը , որ է 96, առաջին մասնաւոր բաժանելի 104ին տակը , հանելով և մնացորդին աչ կողմը բաժանելիին յարորոյ քուանշանք գրելով , կտնկնուի երկրորոյ մասնաւոր բաժանելի 86 տասնաւոր . ստոր մէջ բաժանող 12ը քանի անգամ պարունակելը գտնալու համար կըսեմ 1ը 8ին մէջ կայ 8ը , և 2ը 6ին մէջ 8 անգամ չպարունակելու համար , կըսեմ 1ը 8 ին մէջ 7ը կայ 1 կաւելնայ , և 16ին մէջ 2 աչ 7 անգամ պարունակելով կը գրեմ քանորոյին տասնաւոր 7, ստով բաժանողը բազմապատկելով արտադրեալը , որ է 84, կը գրեմ երկրորոյ մասնաւոր բաժանելիին տակը և անկէ հանելով ու մնացորդին աչ կողմը բաժանելու

լիին յաշորոյ բուսնչանը գրեւով կառնեալ երրորդ մասնաւոր բաժանելի 27, որոյ մէջ 12 բաժանողը քանի անգամ պարունակելը գտնարու համար կըստն 1ը 2ին մէջ 2 կայ, և 2 ալ 7ին մէջ 2ին աւելի պարունակելով կը գրեմ քանորոյ 2, ստով բաժանողը բազմապատկելով արտադրեալը երրորդ մասնաւոր բաժանելիէն հանելով կառնեալ քանորոյ 872 և մնացորոյ 3. Այս գործարուքեան ճիշտ ըլլալը առուցելու համար կընեն փորձը, բաժանող 12ով կը բազմապատկեն քանորոյը և կառելընեն փրակ մնացորոյը և կառնեալ 10467, հաւասար բաժանելիին ։

45633	27
435	579
243	27
189	4053
243	1158
243	45633

15633ը 27ով բաժնելու համար կը գրեմ բաժանողը բաժանելիին աշ կողմը գազարեանայեաց գժէ մը ետքը, և բաժանողին տակէն գիժ մը քաշելով կտնեն բաժանելիին ձախ կողմի եր-

Փորձ

կու բուսնչանը, որովհետեւ բաժանողը երկու բուսնչանը ունի. բայց այս երկու բուսնչանը, որ է 15 հազարաւոր, բաժանող 27ին փոքր ըլլալով, կտնեն և յետք բուսնչան 156 հարիւրաւոր, աւ է առաջին մասնաւոր բաժանելի, ստոր մէջ 7ը բաժանողը քանի անգամ պարունակելը գտնարու համար կըստն 2ը 15ին մէջ 7 կայ, 1 կառելեաց, և 7ը 16ին մէջ 7 անգամ չըլլարուն ետքէն կսկսիմ բանը 2ը 15ին մէջ 6 կայ 3 կառելեաց, և 7ը 36ին մէջ 6 անգամ չըլլարուն համար դարձեալ կսկսիմ բանը 2ը 15ին մէջ 5 կայ 5 կառելեաց, կը գրեմ քանորոյ 5, (սակն անգամ որ բաժանողին բուսնչանները բաժանելիին բուսնչաններուն մէջ գտա գտա

բնտուտ առնենիս մնացորոյը քանորոյին հաւասար կառնելի մեժ ըլլայ, աշ բնտուտը շարունակելու չէ, այլ քանորոյը վատանորեանի գրելու է], քանորոյ 5ով բաժանողը բազմապատկելով և արտադրեալը, որ է 135, առաջին մասնաւոր բաժանելիէն հանելով մնացորոյին քով կտնեն բաժանելիին յաշորոյ բուսնչանը և կըլլայ երկրորդ մասնաւոր բաժանելի 213, ստոր մէջ 27 բաժանողը քանի անգամ պարունակելը գտնարու համար, կըստն 2ը 21ին մէջ 9 կայ 3 կառելեաց, և 7ը 33ին մէջ 9 անգամ չկայ, ուստի ետքէն դառնալով կըստն 2ը 21ին մէջ 8 կայ 5 կառելեաց և 7ը 53ին մէջ 7 կայ 7 կառելեաց, կը գրեմ քանորոյ 7, և ստով բաժանողը բազմապատկելով և երկրորդ մասնաւոր բաժանելիէն հանելով և մնացորոյին քով բաժանելիին յաշորոյ բուսնչանը տնենով կառնեալ երրորդ մասնաւոր բաժանելի 243, ստոր մէջ 27 բաժանողը քանի անգամ պարունակելը գտնարու համար կըստն 2ը 24ին մէջ 9 կայ 6 կառելեաց և 7ը 63ին մէջ 9 անգամ պարունակելուն համար կը գրեմ քանորոյ 9, ստով բաժանողը բազմապատկելով և արտադրեալը, որ է 243, երրորդ մասնաւոր բաժանելիէն հանելով մնացորոյ չունեցայ, և ետք աւերողը քանորոյը 579: Փորձն աշ ընելով ուղիղ ըլլալը կըստուցեն:

- 45. Բաժանման մէջ միշտ դիտելու է որ,
ՀԱՍՍՐԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

1. ՅԱԽԵԼՈՒՄՆ ՀԱՍՍՐԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

76. Կանոն . Կոտորակաց յաւելումը ընելու համար , եթէ կոտորակաց յայտարարները իրարու հաստար չեն , նախ՝ հասարակ յայտարարի վերածելու է , և ետքը՝ միայն համարիչները գումարելու է : Եթէ ամբողջներ ըլլան , ամբողջները զատ գումարելու է և կոտորակները զատ :

ՕՐԻՆՍԱԿԲ

Ա. $\frac{2}{3} + \frac{5}{4} + \frac{1}{2} + \frac{5}{8} = \frac{16 + 50 + 20 + 25}{40} = \frac{91}{40} = 2\frac{11}{40}$

Բ. $\frac{5}{10} + \frac{7}{10} + \frac{1}{10} + \frac{9}{10} = \frac{20}{10} = 2$

Գ. $2\frac{5}{7} + \frac{2}{5} + 4\frac{5}{6} + \frac{1}{2} = 6\frac{18 + 28 + 35 + 21}{42} = 6\frac{102}{42} = 8\frac{18}{42} = 8\frac{3}{7}$

Դ. $\frac{5}{9} + \frac{5}{7} + \frac{4}{5} + \frac{5}{4} = \frac{700 + 540 + 1008 + 945}{4260} = \frac{3195}{4260} = 2\frac{675}{4260}$

Ե. $\frac{1}{2} + \frac{1}{5} + \frac{1}{4} + \frac{1}{5}$ գումարելու է :

Զ. $5\frac{4}{7} + 2\frac{1}{5} + 3\frac{4}{9} + \frac{1}{8}$ գումարելու է :

Է. Մարդ մը մէկ գործը 8 օրէն կը ըննեն, ուրիշ մը նոյն գործը 7 օրէն. երկուքը ի միասին մէկ օրուան մէջ նոյն գործին ո՞րչափը կը կատարեն :

Ը. Աւազան մը երկու ծորակ ունի, առաջինը ստորաւ աւազանը 5 ժամէն կը լեցնէ. երկրորդը 8 ժամէն, երրորդը 12 ժամէն. երեքը ի միասին 1 ժամու մէջ աւազանին ո՞րչափը կը լեցնեն :

2. ԲԱՐՁՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿ ԿՈՏՈՐԱԿԱՅ

77. Կանոն. Կոտորակներուն բարձումը ընելու համար, եթէ յայտարարին հաւասար չէ, նախ հասարակ յայտարարի վերածելու է, և ետքը փոքր թուոյն համարիչը մեծ թուոյն համարիչէն հանելու է, տարբերութիւնը կըլլայ մնացորդին համարիչ:

Եթէ ամբողջներ գտնուին ամբողջները զատ և կոտորակները զատ իրարմէ հանելու է:

Եթէ այս վերջի դիպուածին մէջ փոքր թուոյն կոտորակը մեծ թուոյն կոտորակէն մեծ ըլլայ, մեծ թուոյն ամբողջէն 1 կամ բաւական ամբողջներ առնելով իր քովի կոտորակին վրայ աւելցնելու է ըստ կանոնի (70), և ետքը փոքր թուոյն կոտորակը բարձունք ընելու է:

ՕՐԻՆՍԱԿԻ

$$Ա. \frac{15}{16} - \frac{9}{16} = \frac{15-9}{16} = \frac{6}{16}.$$

$$Բ. \frac{5}{4} - \frac{5}{9} = \frac{27-20}{36} = \frac{7}{36}.$$

$$Գ. 18\frac{5}{12} - 12\frac{5}{10} = 6\frac{50-56}{120} = 6\frac{14}{120}.$$

$$Դ. 25\frac{5}{7} - 14\frac{5}{6} = 11\frac{18-55}{42} = 10\frac{60-55}{42} = 10\frac{25}{42}.$$

Ե. Աւազան մը երկու ծորակ ունի մէկը լեցընելու և միւսը ստորակելու, լեցնող ծորակը ստորաւ աւազանը 5 ժամէն կը լեցնէ, ստորաւ ծորակը լեցուն աւազանը 3 ժամէն կը ստորայէ: Երկուքն աւրաց թողլով 1 ժամու մէջ աւազանին ո՞րչափը կը լենայ:

$$Զ. \frac{5}{4}էն \frac{5}{11} հանելով ո՞րչափ կը մնայ:$$

$$Է. 5\frac{6}{7}էն 2\frac{7}{8} հանելով ո՞րչափ կը մնայ:$$

$$Ը. 2\frac{5}{4} + 5\frac{6}{11} + \frac{7}{8}էն հանելու է 4\frac{1}{2} + 3\frac{1}{5} + 2\frac{2}{7}.$$

$$Թ. (5\frac{5}{4} + 4\frac{1}{2}) - (2\frac{2}{5} + 3\frac{4}{7} + \frac{1}{5}) = 4$$

$$\frac{(315 + 210) - (280 + 240 + 84)}{420} = 4 \frac{525 - 604}{420}$$

$$3 \frac{420 + 525 - 604}{420} = 3 \frac{945 - 604}{420} = 3\frac{541}{420}.$$

3. ԲԱԶՄԱՊԱՏ ՀԱՍԱՐԱԿ ԿՈՏՈՐԱԿԱՅ

78. Կանոն. Արտադրող կոտորակայ համարիչները իրարմով բազմապատկելով ելածը զնելու է արտադրեալին համարիչ, և յայտարարները իրարմով բազմապատկելով ելածը զնելու է արտադրեալին յայտարար:

Եթէ արտադրողայ մէկը ամբողջ ըլլայ, նախ ամբողջին 1 յայտարար զնելով կոտորակ ընելու է, և ետքը բազմապատկութիւնը կատարելու է:

Այժմ կոտորակայ հետ ամբողջ գտնուի, ամբողջը կոտորակին հետ խառնելով ընկեր է բաղման պատկույթիւնը :

ՕՐԻՆԱԿԲ

Ա. Բաղմապատկերու է $\frac{9}{40} \cdot \frac{5}{6}$ ուլ: $\frac{9}{40} \times \frac{5}{6} = \frac{45}{60}$ որ

պարզելով կըլլայ $\frac{3}{8}$.

Բ. Բաղմապատկերու է $\frac{15}{126}$ ը 9 ամբողջով :

$\frac{15}{126} \times \frac{9}{4} = \frac{117}{426}$ որ պարզելով կըլլայ $\frac{15}{14}$.

Գ. Բաղմապատկերու է $44\frac{2}{3}$ ուլ: $44\frac{2}{3} \times \frac{5}{7} =$

$\frac{55}{3} \times \frac{5}{7} = \frac{105}{21} = 5$.

Դ. Բաղմապատկերու $2\frac{1}{4}$ $5\frac{2}{5}$ ուլ: $2\frac{1}{4} \times 5\frac{2}{5} =$

$\frac{9}{4} \times \frac{17}{5} = \frac{153}{42} = 12\frac{9}{12} = 12\frac{3}{4}$.

Ե. Բաղմապատկերու է $3\frac{2}{5} + \frac{5}{4}$ $5\frac{1}{2} + \frac{1}{2}$ ուլ:

$(3\frac{2}{5} + \frac{5}{4}) \times (5\frac{1}{2} + \frac{1}{2}) = \frac{60+8+15}{20} \times \frac{30+2+3}{6} = \frac{85}{20} \times \frac{55}{6} =$

$\frac{2905}{120} = 24\frac{45}{120} = 24\frac{3}{8}$:

Զ. Բաղմապատկերու է $\frac{5}{4}, \frac{2}{5}, \frac{5}{7}$ կոտորակներ .

ներք: $\frac{5}{4} \times \frac{2}{5} \times \frac{5}{7} = \frac{48}{140}$, որ պարզելով կըլլայ $\frac{9}{70}$.

79. Թանորարխեր . Ա. Այժմ արտադրող կոտորակներուն համարիչներուն և յայտարարներուն մէջ հաւասար թիւեր գտնուին, կրնանք պարզել . ինչպէս՝

$$\frac{5}{3} \times \frac{2}{5} = \frac{2}{3} \quad \text{նմանապէս} \quad \frac{5}{4} \times \frac{4}{7} \times \frac{2}{5} \times \frac{1}{2} = \frac{1}{7}$$

Բ. Այժմ արտադրող կոտորակներուն համարիչներուն և յայտարարներուն մէջ մի և նոյն թուով բաժանական թիւեր գտնուին, բաժնելով կը պարզենք . ինչպէս՝

$$\frac{\frac{2}{8}}{21} \times \frac{\frac{5}{35}}{36} = \frac{10}{27}, \quad \text{նմանապէս} \quad \frac{\frac{2}{9}}{14} \times \frac{\frac{5}{8}}{15} \times \frac{\frac{7}{7}}{12} = \frac{1}{5}$$

Խ Ն Դ Ի Բ Բ

Ա. Բաղմապատկերու է $\frac{5}{9}$ ը $\frac{7}{8}$ ուլ: 4 $\frac{5}{5}$ ուլ: $\frac{5}{7}$

Չ ուլ: $2\frac{5}{4}$ $7\frac{5}{6}$ ուլ :

Բ. Շաբարին մէկ հօխան $5\frac{7}{8}$ ղուրուշ է . $3\frac{5}{4}$ հօխայ շաբարը քանի՞ ղուրուշ կընէ :

Գ. Մէկ էնտաղէ ճակֆէպը 13 ղուրուշ 20 փարա է . 18 էնտաղէ 3 բուպը քանի՞ ղուրուշ կընէ :

Դ. Մէկ հօխայ խահլէն 11 ղուրուշ 10 փարա է . 12 հօխա 230 արամը քանի՞ ղուրուշ կընէ :

Ե. Մէկ անդրական լիբան 109 զուրուչ 17 փա-
րա է . 125 լիբա 13 շիլին 5 բէնաը քանի՞ զրչ կընէ :

4. ԲԱԺԱՆՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿ ԿՈՏՈՐԱԿԱՅ

80. Կանոն . Բաժանող կոտորակը չըջելով բա-
ժանելի կոտորակին հետ բազմապատկելու է : Եթէ
բաժանելին կամ բաժանողը ամբողջ ըլլայ . նախա-
պէս ամբողջին 1 յայտարար զնելով կոտորակի կեր-
պարանք տալու է , և ետքը բաժանումը կատարե-
լու է :

Եթէ կոտորակներուն հետ ամբողջ գտնուի ,
նախապէս ամբողջը իր քովի կոտորակին հետ խառ-
նելու է , և ետքը բաժանման գործողութիւնը ընե-
լու է :

ՕՐԻՆԱԿՔ

Ա. $\frac{5}{4} \div \frac{5}{6} = \frac{5}{4} \times \frac{6}{5} = \frac{18}{20} = \frac{9}{10}$.

Բ. $5 \div \frac{5}{7} = 5 \times \frac{7}{5} = \frac{55}{5} = 11 \frac{2}{5}$.

Գ. $\frac{15}{14} \div 9 = \frac{15}{14} \div \frac{9}{1} = \frac{15}{14} \times \frac{1}{9} = \frac{15}{126}$.

Դ. $12 \frac{5}{5} \div \frac{6}{7} = \frac{65}{5} \times \frac{7}{6} = \frac{441}{50} = 14 \frac{21}{50} = 14 \frac{7}{10}$.

Ե. $\frac{5}{9} \div 2 \frac{5}{7} = \frac{5}{9} \div \frac{17}{7} = \frac{5}{9} \times \frac{7}{17} = \frac{55}{153}$.

Զ. $12 \frac{5}{4} \div 5 \frac{2}{5} = \frac{54}{4} \div \frac{17}{5} = \frac{54}{4} \times \frac{5}{17} = \frac{9}{4} = 2 \frac{1}{4}$.

Է. $(2 \frac{5}{4} + \frac{2}{3}) \div (\frac{5}{5} + \frac{2}{7} + \frac{5}{9}) = \frac{24+9+8}{12} \div$

$$\frac{189+90+175}{545} = \frac{41}{12} \cdot \frac{454}{545} = \frac{41}{12} \times \frac{545}{454} = \frac{12915}{5448} = 2 \frac{2019}{5448}$$

$$= 2 \frac{675}{1816} .$$

81. Քանորութիւնք . Ա. Եթէ բաժանող կոտո-
րակին համարիչն ու յայտարարը բաժանելի կոտո-
րակին համարիչին ու յայտարարին մէջ ճշդիւ բաժ-
նուի , քանորդները կըլլան քանորդին համարիչ և
յայտարար . ինչպէս՝ $\frac{18}{35} \div \frac{6}{7} = \frac{5}{5}$.

Բ. Եթէ բաժանելի ու բաժանող կոտորակաց
յայտարարները հաւասար ըլլան , միայն համարիչ-
ներուն վրայ կատարելու է բաժանումը . ինչպէս՝
 $\frac{8}{9} \div \frac{5}{9} = \frac{8}{5} = 1 \frac{3}{5}$.

Խ Ն Դ Ի Ր Ք

Ա. Երկու կոտորակաց արտադրեալը $\frac{5}{6}$ և մէկ
կոտորակին ալ $\frac{5}{7}$ է , միւս կոտորակին ի՞նչ է :

Բ. Բանի մը հօխան $\frac{5}{4}$ զուրուչ է 14 զուրուչով
քանի՞ հօխաց կառնուի :

Գ. Գտնալու է թէ $\frac{5}{8}$ ինչ ներորդ մասը քանի՞ է :

ՀԱՐՑՄՈՒՆՔ

76. Հասարակ կոտորակաց յաւելումը ի՞նչպէս ընելու է : Կ՞ .

ատրակաց յաւելումը ընելու համար ի՞նչու հասարակ յայտարարի կը վերածենը : Ատտորակներուն հետ ամբողջներ գտնուած աստեր ի՞նչ պէս ընելու է յաւելումը :

77. Հասարակ կտտորակաց բարձումը ի՞նչպէս ընելու է : Հասարակ կտտորակաց բարձումը ընելն առաջ ի՞նչու հասարակ յայտարարի վերածելու է : Ատտորակներուն հետ ամբողջ գտնուած աստեր ի՞նչպէս ընելու է բարձումը : Եթէ այս վերջի դիպուածին մէջ փոքր թուոյն կտտորակը մեծ թուոյն կտտորակէն մեծ ըլլայ ի՞նչպէս հանելու է :

78. Հասարակ կտտորակաց բաղմաստաւորութիւնը ի՞նչպէս ընելու է : Եթէ արտադրողաց մէկը ամբողջ թիւ ըլլայ ի՞նչպէս բաղմաստաւորելու է : Եթէ կտտորակներուն հետ ամբողջներ ըլլայ ի՞նչպէս բաղմաստաւորելու է : Երկու յատուկ կտտորակաց արտադրելու ի՞նչու արտադրողներէն փոքր կըլլայ :

79. Ի՞նչ դիպուածներու մէջ հասարակ կտտորակաց բաղմաստաւորութիւնը աւելի դիւրին կերպով կրնայ կատարուիլ : Ատտորակաց կտտորակը ի՞նչպէս կը գտնուի : Պատիւ մէկ քառորդին կէսը : Պատիւ մէկ հինգերորդին երրորդ մասը . մէկ իններորդին քառորդը . կէսին մէկ հինգերորդը . քառորդին մէկ տասներորդ մասը : Պատիւ $\frac{2}{5}$ ը . 16 ին $\frac{5}{5}$ ը . 125 ին $\frac{21}{46}$ ը . $\frac{5}{3}$ ին $\frac{2}{3}$ ը :

80. Հասարակ կտտորակաց բաժանումը ի՞նչպէս ընելու է : Եթէ կամ բաժանելին կամ բաժանողը ամբողջ ըլլայ ի՞նչպէս ընելու է բաժանումը : Եթէ կտտորակաց հետ ամբողջ գտնուի ի՞նչպէս կատարելու է բաժանումը :

31. Ի՞նչ դիպուածներու մէջ կտտորակաց բաժանումը աւելի հաստատ կերպով կը կատարուի : Բաժանողը յատուկ կտտորակ եղած աստերը ի՞նչու համար բանորդը բաժանելիէն մեծ կըլլայ :

Բ. ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿ

Ա. ՍԱՀՄԱՆ ԹՈՒՌՈՒՄՆ ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆԻ

82. Տասնորդական կըսուին այն կտտորակները , որ յայտարարին 10, 100, 1000 և այն ըլլալով ամբողջի կերպարանքով կը գրուին ստորակէտէ մը ևս :

$42 \cdot \text{ինչպէս} \quad 5 \frac{6}{10} = 5,6. \quad \frac{27}{100} = 0,27. \quad 3 \frac{25}{1000} = 3,025.$

$18 \frac{2564}{10000} = 18,2564. \text{ Ըսել է որ միութեան մը } 10,$

100, 1000 և այն հաւասար մասերուն մէկը կամ մէկ քանին տասնորդական կտտորակ կըսուին :

83. Ըսուած տասնորդական կտտորակ մը նշանակելու համար առաջ ամբողջ գրելու է՝ եթէ կայ , և թէ ամբողջ չի կայ , զրո մը դնելու է , ետքն ալ ստորակէտ մը , ասիէ ետքն ալ համարիչ ըսուած թիւը գրելու է , որոյ թուանշանները թէ որ ըսուած յայտարարին գրծներուն շախ չէ , ստորակէտէն ետքը գրծներ դնելով հաւասարցնելու է և ետքը համարիչը գրելու է . ինչպէս՝

Գրելու է 7 ամբողջ 8 տասնորդ	7,8
Գրելու է 33 հարիւրորդ	0,33
Գրելու է 12 ամբողջ 36 հազարորդ	12,036
Գրելու է 75 տասն հազարորդ	0,0075

84. Գրուած տասնորդականի մը առաջ ամբողջը կարդալու է՝ եթէ կայ , ետքը ստորակէտին աջ կողմը գրուած թիւը կարդալու է իրրև կտտորակի մը համարիչ , յայտարար ընելով Վին ետեէն դասուածներուն շախ զրո ունեցող թիւ մը . ինչպէս՝

5,65 կը կարդայուի 5 ամբողջ 65 հարիւրորդ	
0,756	» 756 հազարորդ
0,0856	» 856 տասն հազարորդ
25,0078	» 25 ամբողջ 78 տասն հազարորդ

Վերոգրեալ Ա. օրինակը նաև կրնամք կարդալ 5 ամբողջ 6 տասնորդ 5 հարիւրորդ . և կամ 565 հարիւրորդ :

Բ. ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆԱՅ

85. 1. Տասնորդականի մը աջ կողմը որչափ զրօ
դնենք, կամ գրուած զրօները վերցնենք, տասնոր-
դականին արժէքը չի փոխուիր. ինչպէս $0,6=0,60=$
 $0,600=0,6000=$ և այլն :

2. Տասնորդական կտտորակ ունեցող թիւ մը 10
ով, 100ով, 1000ով և այլն բազմապատկելու համար,
բազմապատկողին զրօներուն չափ թուանշան ստո-
րակէտը դէպ ի աջ կողմը տանելու է բազմապատկե-
լիին տասնորդ թուանշանները ամբողջ ընելով. եթէ
բազմապատկողին զրօներուն չափ տասնորդ թուա-
նշան չի գտնուի, աջ կողմը զրօներ ղնելով հաւա-
սարցնելու է. ինչպէս՝

$$36,275 \times 10 = 362,75 \quad 0,2564 \times 1000 = 256,4$$
$$0,33 \times 1000 = 330 .$$

3. Տասնորդական ունեցող թիւ մը 10ով, 100ով,
1000ով, և այլն բաժնելու համար, բաժանողին զրօ-
ներուն չափ թուանշան բաժանելիին ձախ կողմը
տանելու է ստորակէտը, ամբողջներէն տասնորդ
ընելով. եթէ այնչափ թուանշան չըլլայ բաժանե-
լիին ամբողջին մէջ, ձախ կողմը զրօներ ղնելով
հաւասարցնելու է. ինչպէս՝

$$125,46 \div 10 = 12,546 \quad 36,25 \div 100 = 0,3625$$
$$5,18 \div 100 = 0,0518$$

4. Շատ թուանշանով գրուած տասնորդները
կրնանք համառօտել ստորակէտին քովի միայն եր-
կու կամ երեք թուանշանը առնելով ու մնացածնե-
րը ետ ձգելով. բայց եթէ ետ ձգածներնուս սուա-
նորդը չի թուանշանին վրայ 1 մը աւելցնելու է. ինչ-
պէս՝

Ջին թուանշանը 5էն աւելի ըլլայ, առածներնուս
վերջի թուանշանին վրայ 1 մը աւելցնելու է. ինչ-
պէս՝

$$0,5634 \ 512 = 056 . . . \quad 16,23781234 = 16,238 .$$

Խ Ն Դ Ի Ր Ք

Ա. Գրելու է 25 ամբողջ 35 հազարորդ : 185
ամբողջ 256 տասն հազարորդ :

Բ. Կարգալու է հետեւեալները . 15,64 164,036
0,02 0,0241 :

Գ. 4,5ին տասնորդը երեք թուանշան ընելու է
առանց արժէքը փոխելու :

Դ. 0,6400ը համառօտ կերպով գրելու է առանց
արժէքը փոխելու :

Ե. 5,64ը 10ով, 100ով, 1000ով բազմապատ-
կելու է :

Զ. 246,25ը 10ով, 1000ով, 100000ով բաժնե-
լու է :

Է. 4,567123ը համառօտ կերպով գրելու է ար-
ժէքին վրայ առանց մեծ փոփոխութիւն մը ըլլալու :

Գ. ՎԵՐԱԾՈՒՄՆ ՏԱՍՆՈՏԴԱԿԱՆԱՅ

86. 1. Հասարակ կոտորակները տասնորդականի
վերածել : Համարիչը յայտարարով բաժնելու է քա-
նորդը կըլլայ ամբողջ, եթէ յայտարարը մեծ ու հա-
մարիչը փոքր ըլլայ, ամբողջին տեղը զրօ մը ղընե-
լու է, համարիչն ու մնացորդներուն աջ կողմը մէյ
մէկ զրօ ղնելով շարունակելու է բաժանումը մինչև
մնացորդ չըլլայ, քանորդները կըլլան նոյն կոտորա-
կին համարժէք տասնորդականը. ինչպէս՝

$$\frac{5}{4} = 30 \frac{3}{4} \left| \begin{array}{r} 20 \\ 0 \end{array} \right| 0,75$$

$$\frac{5}{8} = 50 \frac{3}{8} \left| \begin{array}{r} 20 \\ 40 \\ 0 \end{array} \right| 0,625$$

$$\frac{75}{25} = 73 \frac{25}{25} \left| \begin{array}{r} 230 \\ 50 \\ 0 \end{array} \right| 2,92$$

Յայց ամէն հասարակ կոտորակ ճիշդ տասնորդականի չի վերածիր, համարիչին ու մնացորդներուն աջ կողմը գրծներ դնելով որչափ բաժնենք յայտարարով՝ միշտ մնացորդ կունենամք, ասանկաները կըստին անհուն տասնորդականք, որ միայն քանի մը քանորդները կառնենք ու մնացորդները ետ կը ձգենք :

$$\frac{5}{9} = 50 \frac{9}{9} \left| \begin{array}{r} 50 \\ 5 \end{array} \right| 0,55... \quad \frac{6}{7} = 60 \frac{7}{7} \left| \begin{array}{r} 40 \\ 5 \end{array} \right| 0,85... \quad \frac{15}{18} = 130 \frac{18}{18} \left| \begin{array}{r} 40 \\ 4 \end{array} \right| 0,72...$$

87. 2°. Տասնորդականները հասարակ կոտորակի վերածել . Տասնորդականներուն յայտարարը յայտնի գնելով հասարակ կոտորակ կըլլայ, որն որ, եթէ կարելի է, պարզելու է . ինչպէս՝

$$12,36 = 12 \frac{36}{100} = 12 \frac{9}{25} \quad 0,325 = \frac{325}{1000} = \frac{13}{40}$$

88. 3°. Խառն քիւերը իրենց գլխաւոր միտքեան տասնորդականին վերածել . Խառն թիւերը իրենց գլխաւոր միտքեան հասարակ կոտորակին վերածելու է, և ետքը հասարակ կոտորակն ալ տասնորդականի . ինչպէս՝

$$25 \text{ փր.} = \frac{25}{40} \text{ րը.} = 25 \frac{3}{40} \left| \begin{array}{r} 40 \\ 0 \end{array} \right| 0,625 \text{ րը.}$$

$$27 \text{ փր.} = \frac{27}{40} \text{ րը.} = 27 \frac{3}{40} \left| \begin{array}{r} 40 \\ 0 \end{array} \right| 0,675 \text{ րը.}$$

$$30 \text{ փր.} = \frac{30}{40} \text{ րը.} = 30 \frac{3}{10} \left| \begin{array}{r} 40 \\ 0 \end{array} \right| 0,75$$

$$42 \text{ փր. 2 ստի.} = \frac{58}{120} \text{ րը.} = 38 \frac{120}{120} \left| \begin{array}{r} 120 \\ 0 \end{array} \right| 0,316... \text{ րը.}$$

$$25 \text{ րը. 15 փր. 1 ստի.} = \frac{5046}{60000} \text{ րսէ.} = 3046 \frac{60000}{60000} \left| \begin{array}{r} 60000 \\ 0 \end{array} \right| 0,05076... \text{ ր.}$$

$$265 \text{ տրմ.} = \frac{265}{400} \text{ հ/յ.} = 265 \frac{400}{400} \left| \begin{array}{r} 400 \\ 0,6625 \end{array} \right| \text{ հ/յ}$$

$$25 \text{ հ/յ. 230 տրմ.} = \frac{16280}{17600} \text{ րսթր.} = 10230 \frac{17600}{17600} \left| \begin{array}{r} 17600 \\ 0 \end{array} \right| 0,58425 \text{ րն.}$$

89. 4°. Տասնորդականները խառն քուայ վերածել կա՛մ տասնորդականաց արժէքը գտնայ : Տասնորդականները բազմապատկելու է գլխաւոր միտքեան ստորաբաժանման համրանքովը և զատուածներուն շափ զատելու է, զատուածները աւելի մանր ստորաբաժանմունքովը բազմապատկելու է և զատուած

ներուն չափ դատելով շարունակելու է դործողը, թիւնը մինչև որ ստորաբաժանումնք կամ տասնորդ չի մնայ, վերջի տասնորդը, եթէ ըլլայ, վերջի ստորաբաժանման կտորակն է. ինչպէ՞ս՝

	լսելի. 36,36625
	44

	146500
	146500

դր. 23,925	
40	

փր. 37,000	
	հիւ. 15,14500
	տրմ. 46,00000

տարի 0,3643
12

7290
3643

ամիս 4,3740
30

օր 11,2200

Խ Ն Դ Ի Բ Գ

Ս. $\frac{5}{3}, \frac{5}{10}, \frac{15}{52}, \frac{4}{5}, \frac{16}{25}, \frac{2}{5}, \frac{5}{9}, \frac{7}{11}, \frac{4}{7}, \frac{5}{6}, \frac{7}{11}$,

կտորակները տասնորդականի վերածէ :

Բ. 0,45. 12,364. 156,25625 թուոց տասնորդականները հասարակ կտորակի վերածէ :

Գ. 5 փարան, 32 փարան, 15 փարա 1 ստակը, 27 փարա 2 ստակը, 25, 26 $\frac{1}{2}$, 27 փարաններն զբաշխելն տասնորդականին վերածէ :

Գ. 3, 4, 5, 6, 7, 8, 15, 125, 376, 258 տրամիւները հօխային տասնորդականը ըրէ :

Ե. 36 հօխա 256 տրամը խանթարին տասնորդականը ըրէ : 18 հօխան խանթարին տասնորդականը ըրէ :

Զ. 256 տրամ, 3 տէնկ, 2 կուտ, 3 ցորենը հօխային տասնորդականը ընելու է :

Է. 4, 2, 3, 4, 5, 6, 7, բուսները կնտագէին տասնորդականը ըրէ :

Ը. 5 բուս 1 կիրահը կնտագէին տասնորդականը ընելու է :

Թ. 4, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14 $\frac{1}{2}$, 23 մատերը արչընին տասնորդականը ընելու է :

Ժ. 4, 2, 3, 4 մինչև 29 օրը զատ զատ ամիսին տասնորդականը ընելու է :

Ի. 12,255 դր. 64,1256 խանթար, 125,6765 հօխա. տասնորդականներուն արժէքը որոշելու է :

Գ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ ՏԱՍԱՆՈՐԳԱԿԱՆՅ

1. Յաշխուհի և բարձուն տասնորդականաց

90. կանոն. Գումարելի և իրարմէ հանելիք թըւոց տասնորդականաց համրանքը, եթէ հաւասար չեն, հաւասարցնելու է իրենց աջ կողմը գրծներ դնելով, և ամբողջ թուոց պէս ընելու է յաւելման և բարձման դործողութիւնը, և տասնորդականաց մէկուն թուանշաններուն չափ սլիտի ըլլաց դումարին կամ մնացորդին տասնորդ թուանշաններուն

Համբանքը : Եթէ մտադրութիւն ըլլուի որ տասնորդ ,
 հարիւրորդ , հազարորդ և այլն թիւերը իրարու տակ
 գրուին , որպէս զի մի և նոյն կարգի թիւերը իրա-
 րու վրայ աւելնան կամ իրարմէ պակսին , ան ասուն
 տասնորդներուն աջ կողմը զրօներ դնելով Համբանք-
 նին իրարու հաւասարցնելու պէտք չի մնար :

ՅՅ.ԻՆԼՈՒՄՆ

25,3500	25,35
8,2360	8,236
125,8000	125,8
64,0457	64,0457
<u>223,4317</u>	<u>223,4317</u>

ԲԱՐՁՈՒՄՆ

256,4200	256,42
475,7894	475,7894
<u>80,3309</u>	<u>80,3309</u>

2. Բազմադասուկութիւն տասնորդականաց

91. Կանոն . Արտադրողներուն տասնորդականի
 ստորակէտը մտք վերցուած ըմբռնելով ամբողջ
 թուոց պէս բազմապատկելու է , և արտադրեալին
 աջ կողմէն զառելու է այնչափ տասնորդ , որչափ
 որ արտադրողներուն մէջ տասնորդ կայ , եթէ պակ-
 սի , ձախ կողմը զրօներ դնելով հաւասարցնելու է
 և ետքը տասնորդականի ստորակէտը դնելու է :

256,35		0,4256
4,675	12,356	0,25
<u>128475</u>	45,5	<u>6280</u>
179445	<u>64780</u>	2512
453840	64780	<u>0,031400</u>
102540	49424	
<u>4198,43625</u>	<u>562,4980</u>	

3. Բաժանումն տասնորդականաց

92: Կանոն . Բաժանելիին ու բաժանողին տաս-
 նորդներուն համբանքը , եթէ հաւասար չեն , քիչ
 տասնորդ ունեցողին աջ կողմը զրօներ դնելով հա-
 ւասարցնելու է , և ստորակէտները վերցնելով ամ-
 բողջ թուոց պէս կատարելու է բաժանումը : Եթէ
 մնացորդ ըլլայ քանորդին քով ստորակէտ մը և մը-
 նացորդին աջ կողմը զրօ դնելով բաժանումը շարու-
 նակելու է , ասանցմէ ելած քանորդները քանորդին
 թասնորդականներն են . ինչպէս՝

Ա. Բաժնելու է 125,64ը 8,16ով :

Գործողութիւն	12564	816
	4404	<u>15,39</u>
	3240	
	7920	
	576	

Բ. Բաժնելու է 625,12ը 75,2516ով :

Գործողութիւն	6251200	752516
	2310720	8,307
	5317200	
	49588	

Խ Ն Դ Ի Ր Ք

Ա. Յաւելումն ընելու է 4,62 . 0,125 . 64,8
126,3425 թիւերը :

Բ. 615,045էն հանելու է 78,4578ը :

Գ. 24,5ը բազմապատկելու է 0,912ով: 185,25ը
բազմապատկելու է 9,8ով:

Դ. Մէկ ֆրանքը 4 դուրուշ 16 փարա է, 75
ֆրանք 35 սանթիմը քանի՞ դուրուշ կընէ :

Ե. Եթէ մէկ ֆրանքը 4 դուրուշ 13¹/₂ փարա
ըլլայ, 125 ֆրանք 35 սանթիմը քանի՞ դրշ կընէ :

Զ. Թէ որ մէկ մէթըը չուխան 6 ֆրանք 75
սանթիմ արծէ, 125 մէթը 64 սանթիմէթը չու-
խան քանի՞ ֆրանք կարծէ, և եթէ մէկ ֆրանքն ալ
4 դուրուշ 13¹/₂ փարա ըլլայ, և ամէնը քանի՞ դու-
րուշ կընէ :

Է. Մէկ արշըն կտաւը 5 դուրուշ 15 փարա ըլ-
լալով 15 արշըն 5 բուսը քանի՞ դուրուշ կընէ :

Ը. Մէկ հօխայ կատարը 8 դուրուշ 25 փարա է,
18 հօխայ 260 տրամը քանի դուրուշ կընէ :

Թ. 3125,356ը բաժնելու է 9ով, 26ով, 6,25ով,
7,1235ով:

Ժ. Եթէ մէկ խանթար շաքարը 256 դուրուշ 30
փարա ըլլայ, 10000 դուրուշով քանի՞ խանթար
շաքար կրնանք առնել :

ԺԱ. 25 խանթար 35 հօխայ շաքարին համար

վճարուեցաւ 9816 դուրուշ 20 փարա . մէկ խան-
թար շաքարը քանի՞ դուրուշ կընէ :

ԺԲ. 15 արշըն 6 ուրուսկ կտաւին համար վճար-
ուեցաւ 127 դուրուշ 20 փարա , մէկ արշըն կտաւը
քանի՞ դուրուշ կընէ :

ԺԳ. 26 հօխայ 125 տրամ արծաթը 27816 դու-
րուշ 35 փարա կարծէ , մէկ հօխան ո՞րչափ կարծէ :

ՀԱՐՅՄՈՒՆՔ

82. Ի՞նչ է տասնորդականը :
83. Ըսուած տասնորդական կոտորակ մը ի՞նչպէս գրելու է թք-
ւանչանով :

84. Թուանչանով գրուած տասնորդական մը ի՞նչպէս կը կար-
դացուի և քանի՞ կերպով :

85. Տասնորդականի մը արծէքը ի՞նչ զխալուածի մէջ անփոփոխ
կը մնայ :
Տասնորդականով գրուած թիւ մը 10ով, 100ով, 1000ով, և այլն
ի՞նչպէս բազմապատկելու է, և ի՞նչպէս բաժնելու է :

Շատ թուանչաններով գրուած տասնորդական մը համարտու կեր-
պով կրնա՞յ գրուիլ :

86. Հասարակ կոտորակները տասնորդականի ի՞նչպէս վերածնուէ :
Անհուն տասնորդականը ի՞նչ է :

87. Տասնորդական մը ի՞նչպէս վերածնուէ հասարակ կոտորակի :

88. Խառն թիւ մը ի՞նչպէս վերածնուէ է իր գլխաւոր միութեան
տասնորդականին :

89. Տասնորդականի մը արծէքը ի՞նչպէս որոշելու է :

90. Տասնորդականաց յաւելումը և բարձումը ի՞նչպէս ընելու է :

91. Տասնորդականաց բազմապատկութիւնը ի՞նչպէս ընելու է :

92. Տասնորդականաց բաժանումը ինչպէս ընելու է :



ԼՈՒԾՈՒՄՆ ԹՈՒՍՐԱՆՍԿԱՆ ԽՆԴՐՈՅ

ԿԱՄ

ԿԱՆՈՆ ՄԻՈՒԹԵԱՆ

93: Թուարանական խնդիր կըսուի այն հարցու մը . որոյ մէջ թէ՛ ծանօթ և թէ՛ անծանօթ թիւեր կը գտնուին :

Խնդրոյ մը մէջ ծանօթ թիւերուն վրայ գործողութիւններ բնելով անծանօթ թիւը որոշելը՝ խընդիրը շաճկ կըսուի :

Թուարանական խնդրոյ շատը կրնան լուծուիլ չորս գործողութիւններով , այսինքն՝ յաւելմամբ , բարձմամբ , բազմապատկութեամբ և բաժանմամբ :

Բայց ամէն խնդիր ինչ գործողութեամբ լուծուիլը դիւրութեամբ չի կրնար որոշուիլ : Այս որոշումը կարելի եղածին չափ դիւրացնելու համար խնդիրները քանի մը կարգի պիտի դասենք :

Ա. ԼՈՒԾՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԽՆԴՐՈՅ

94. Առաջին կարգի խնդիրները անոնք են , որոնք լուծելու համար միայն յաւելում կամ միայն բարձում , և կամ այս երկու գործողութիւնները ի միասին պէտք կըլլան : Այս կարգի խնդիրները ընդհանրապէս յայտնի են . դանտնք ճանչնալու նշան մը և լուծելու համար կանոն մը ունենալու հարկ չիկայ , ինչպէս՝

Կարապետին փոխ տուինք առաջին անգամ 564 զուրուչ . երկրորդ անգամ 757 զուրուչ . երրորդ անգամ 1640 զուրուչ : Եւ կարապետը վճարեց անգամ մը 815 զուրուչ , ուրիշ անգամ 760 զուրուչ : Ո՞րչափ պարտքը մնաց ,

Լուծումն

Փոխ տրուածները

564

757

1640

— 2964

1575

— 1386

ընդ ամէն փոխ տրուածը

վճարածը

մնացած պարտքը

վճարածները

815

760

— 1575

Յայտնի է որ այս խնդրոյն շաճումը յաւելումն և բարձումն պիտի ըլլայ . կարապետին փոխ տրուածները իրարու վրայ աւելցնելով ստուց գուռարէն հաւելու է վճարածներուն գուռարը , և մնացած 1386 զուրուչը կըլլայ կարապետին պարտքը :

Բ. ԼՈՒԾՈՒՄՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԽՆԴՐՈՅ

95. Երկրորդ կարգի խնդիրները անոնք են , որ կամ Աին արժէքը զիտնալով՝ շատին արժէքը , կամ շատին արժէքը զիտնալով՝ Աին արժէքը որոշել կը պահանջուի , որոնք միայն բազմապատկութեամբ կամ միայն բաժանմամբ կը լուծուին :

Այս կարգի խնդիրները միշտ երկու թիւ կուսենան , և թէ որ այս թիւերն ալ ամբողջ ըլլալով պատասխանը խնդրոյն մէջ դտնուած մեծազոյն թիւ

ւէն ալ շատ ըլլալ պէտք է , բազմապատկութիւնք
ընելու է , իսկ թիւ որ քիչ ըլլալ պէտք է , բաժա-
նումն ընելու է :

Ա. Բանի մը հօխան 36 զուրուշ ըլլալով 25 հօ-
խան քանի՞ զուրուշ կընէ :

Լուծումն

36	}	պատասխանը շատ ըրրալ պէտք է
25	}	բազմապատկելու է :
180		
72		
900		

Բ. Բամբակին հօխան 28 զուրուշ է • 980 զու-
րուշով քանի՞ հօխայ բամբակ կառնուի :

980		28	պատասխանը քիչ ըրրալ պէտք է, անոր համար
140		35	բաժանումն ըրիւք և գտանք 35 հօխայ
0			

96. Ծանօթութիւն . Թիւ որ խնդրոյ մը մէջ գրու-
եաւ թիւերուն մէկը կամ երկուքն ալ կոտորակ ըրրայ-
նախապէս կոտորակներուն տեղ անդող թիւ ներայրե-
լով շուքու համար պէտք եղած գործողութիւնը հաս-
կընալու է . և ետքը կոտորակաց վրայ ալ ճիշդ եղե-
գործողութիւնը ընելու է . թրիւակ՝

Չուխային մէկ արշընը 35 զուրուշ է , $\frac{5}{8}$ արշընը
քանի՞ զուրուշ կընէ :

Յիս խնդիրը շուքու գործողութիւնը որոշելու հա-
մար $\frac{5}{8}$ ին տեղ 5 ներայրելով խնդիրը կառաջարկենք

1 արշըն շուխան 35 զուրուշ ըրրալով . 5 արշըն շու-
խան քանի՞ զուրուշ կընէ : Յայտնի է որ շատ կընէ .
ուտոի բազմապատկելու է : Ուրեմն՝ $35 \times \frac{5}{8} = \frac{175}{8} = 21 \frac{7}{8}$
արշընքն 21 զուրուշ 35 փարա :

Խ Ն Գ Ի Ր Ք

Ա. Հայրս պարտք ունէր նպարաւաճառին 256
զուրուշ, հացաւաճառին 164 զուրուշ, մսավաճառին
275 զուրուշ, դեղագործին 368 զուրուշ : Բայց վը-
ճարեց հացաւաճառին 55 զուրուշ, նպարաւաճառին
100 զուրուշ, մսավաճառին 88 զուրուշ, դեղագոր-
ծին 132 զուրուշ : Տակաւին ո՞րչափ պարտք ունի :

Բ. 25 հօխայ խահվէն 236 զուրուշ է , մէկ հօ-
խայ խահվէն քանի՞ զուրուշ կընէ :

Գ. Խանթար մը շաքարը , որ 44 հօխայ է, 316
զուրուշ է , մէկ հօխան քանի՞ զուրուշ կընէ :

Դ. Տուն մը 25 գործաւոր 32 օրէն կը լմնցու-
նեն , մէկ գործաւորը քանի՞ օրէն կը լմնցունէ :

Ե. Մէկ խանթար երկաթը 216 զուրուշ է , 156
խանթարը քանի՞ զուրուշ կընէ :

Զ. Մէկ հօխայ շաքարը 7 զուրուշ է , 100 զու-
րուշով քանի՞ հօխայ շաքար կընանք առնել :

Է. 35 հօխայ 300 տրամ խահվէին համար վը-
ճարուած է 300 զուրուշ, մէկ հօխայ խահվէն քանի՞
զուրուշ է :

Ը. 16 էնտաղէ 3 բուսլ ճանփէսը 215 զուրուշ,
20 վարա է , մէկ էնտաղէ ճանփէսը քանի՞ զուրուշ
կընէ :

Թ. Գործ մը 10 հողի 1 օրէն կը կատարեն

նոյն գործը 30 օրէն կատարելու համար քանի՞ հոգի պէտք է :

Ժ. Մէկ հօսայ թուղթը 6 զուրուչ 10 փարսէ , 256 զուրուչ 20 փարսայով քանի՞ հօսայ թուղթ կրնանք առնել :

ԺԱ. Գաղղիոյ մէկ ոսկին 86 զուրուչ 31 փարսէ , մէկէ մը 10000 զուրուչ պիտի առնենք , քանի՞ ոսկի կրնայ տալ :

ԺԲ. Գործ մը մէկ մարդ մը 36 օրէն կը լննցունէ , 9 մարդ քանի՞ օրէն կը լննցունէ :

ԺԳ. 27 Սնդղիական ոսկի , 6 շիլին , 5 բէնար 3000 զուրուչ կընէ , մէկ Սնդղիական ոսկին քանի՞ զուրուչ կընէ :

Գ. ԼՈՒԾՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԽՆԴՐՈՅ

97. Երրորդ կարգի խնդիրները անոնք են , որոնք լուծելու համար թէ՛ բազմապատկութեան և թէ՛ բաժանման գործողութիւնները ի միասին պէտք կըլլան : Այս կարգի խնդիրները , որ թուոց արժէքը գիտնալով՝ ուրիշ թուոց արժէքը կը պահանջուի , երկու տեսակ ծանօթ թիւեր ունին , մէկը պատասխանին համատեա թուոցն վերաբերեալ թիւեր , իսկ միւսը պատասխանին վերաբերեալ թիւեր : Այս տեսակ խնդրոց ծանօթ թիւերը առ նուաղե երեք թիւ կըլլայ . անոր համար ինչ գործողութեամբ լուծուիլը որոշող կանոնին կըսուի երեքի կանոն :

Միտքեան կանոն ալ կըսուի , որովհետեւ խնդրոցն պատասխանին համատեա թուոցն վերաբերեալ թիւ

ւերը ի միութիւն վերածելով պատասխանը գտնալու գործողութիւնները կորոշուի :

1. Պարզ երեքի կանոն

98. Երբ խնդրոց մը մէջ երեք ծանօթ թիւ կայ , որոց երկուքը իրարու հետ ինչ վերաբերութիւն որ ունին , երրորդ թիւն ալ պատասխանին հետ նոյն վերաբերութիւնը ունի , ապա մէկ խնդիրները լուծելու կանոնին պարզ երեքի կանոն կըսուի :

ՕՐԻՆԱԿԸ

Գործ մը 36 մարդ 25 օրէն կը շինեն , 45 մարդ նոյն գործը քանի՞ օրէն կը շինեն :

$$\begin{array}{r}
 36 \text{ մարդ } 25 \text{ օր} \\
 45 \text{ " } \text{ ք} \\
 \hline
 \begin{array}{r}
 5 \quad 4 \\
 25 \times 36 \\
 \hline
 45 \quad \quad = 20 \text{ օր} \\
 9
 \end{array}
 \end{array}$$

Աստի խնդիրը գրեցի միայն բուսելուս , մէկ տոյճին մէջ պատասխանին համատեա թիւը իրեն վերաբերեալ բուսել , միւս տոյճին մէջ ալ պատասխանին վերաբերեալ թիւը իր համատեա բուսել տակը պատասխանին տեղ ք դնելով : Եւրբ ստի 25 օրը , որ է պատասխանին համատեա թիւը , և իր վերաբերեալ թիւը որ է 36 մարդ 1ի վերաձեցի , հարցունելով , գործ մը 36 մարդ 25 օրէն կը շինեն 1 մարդը քանի՞ օրէն կը շինեն , շատ օրէն . ուստի 25ին քով գրեցի բուսելու

պատկարեան նշանով 36ը , ասոր հաւնաստ 45ն աչ դրի յայտարար , որ է շաժանող . և պարզելով և նշանակեալ գործողութիւնները կատարելով գտայ պատասխանը 20 :

Ծանօթութիւն . Սյս տեսակ խնդիրներուն մէջ պատասխանին հաւնաստ թիւը միշտ շաժանելի է :

2. Բաղադրեալ երեքի կանոն

99. Երբ խնդրոյ մը մէջ երեքէն աւելի երկու տեսակ ծանօթ թիւ կայ , որոց մէկ տեսակ ծանօթ թիւերը պատասխանին համասեռ թուոյն հետ ինչ վերաբերութիւն որ ունին , միւսներն ալ պատասխանին հետ նոյն վերաբերութիւնը ունին , ասանկ խնդիրները լուծելու կանոնին ալ բաղադրեալ երեքի կանոն կըսուի : Օրինակ՝

Մէկը 25000 զուրուչ գրամագլխով 5 ամսուան մէջ 2610 զուրուչ վաստկեցաւ , կուզէ հասկնալ որ 100ին մէկ տարուան վաստակը ո՞րչափ է :

25000	դրամ	5	ամիս	2610	վաստակ
100		12		ք	
<hr/>					
$261,0 \times 1,00 \times 12$		$\frac{3132}{125}$			
$25,000 \times 5$		$= 25$ զուրուչ 2 փարս			

Սուր խնդիրը գրեցի միայն բռնանշանով մէկ տողին մէջ պատասխանին հաւնաստ թիւը իրեն վերաբերեալ թիւերովը , միւս տողին մէջ ալ պատասխանին վերաբերեալ թիւերը իրենց հաւնաստ բոնոց տակը՝ պատասխանին տեղ ք նկնելով : Եւսքը առի 2610, ասոր վերաբերեալ թիւերը ասոր վրայ հարցնելով 1ի վերաբերեալ շնորհով , 25000 զուրուչով 2610 վաստակ եղաւ

1 դարուչով քանի՞ վաստակ կըլլայ , քիչ , ուստի շաժնկու համար յայտարար դրի 25000ը , ասոր հաւնաստ 100ն ալ դրի համարիչ շագնապատկարեան էր շանով 2610ին քով . դարձեալ հարցուցի , 5 ամսուան մէջ երէ 2610 զուրուչ վաստակ ըլլայ , 1 ամսուան մէջ ո՞րչափ վաստակ կըլլայ , քիչ , ուստի շաժնկու համար յայտարար դրի 25000ին քով շագնապատկարեան նշանով 5 , ասոր հաւնաստ 12ն ալ դրի համարիչ շագնապատկարեան նշանով . պարզելով և նշանակեալ գործողութիւնները կատարելով գտայ 25 զուրուչ 2 փարս :

Խ Ն Գ Ի Տ Բ

Ա. 500 զուրուչին մէկ ամսուան շահը $7\frac{1}{2}$ ըլլալով , 1650 զուրուչին մէկ ամսուան շահը ի՞նչ կընէ : 5 ամսուան շահը քանի՞ կընէ : 9 ամսուան 7 օրուան շահը քանի՞ կընէ , 65 օրուան շահը քանի՞ կընէ :

Բ. 3500 զուրուչ գրամագլխով 645 զուրուչ շահեցայ . հազար զուրուչ շահելու համար ո՞րչափ գրամագլխի պէտք է :

Գ. 64 գործաւոր 35 օրուան մէջ 5000 կանգուն գործ բանեցան . 56 գործաւոր քանի՞ օրուան մէջ 3000 կանգուն գործ կրնան բանիլ :

Դ. 6456 զուրուչ պարտքի փոխարէն 6000 զուրուչ տրուեցաւ : 100ին ո՞րչափ զեղջումն եղած է :

Ե. 25 մարդու 60 օրուան համար 4000 զուրուչ ծախս եղաւ . 6000 զուրուչը 50 օր քանի՞ մարդու կողմէ :

Զ. 256 արչըն գեանի վրայ 9 արչըն բարձրու-

Թեամբ տուն մը շինեցինք 50000 զուրուշով. ուրիշ տուն մը պիտի շինենք 150 արչըն գետնի վրայ 12 արչըն բարձրութեամբ. քանի՞ զուրուշ պէտք է :

Է. Տուն մը ծախեցինք 25600 զուրուշի, որուն համար 600 զուրուշ միջնորդչէք տուինք. ո՞րչափ միջնորդչէք տրուած է 100ի վրայ :

Ը. Եթէ 2500 հօխայ երկաթը 7560 զրչ ընէ, 16800 զրչով քանի՞ հօխայ էրկաթ կրնանք առնել :

Թ. 15000 զուրուշ գրամագլուխ դնելով 48 օրուսան մէջ շահ ընդունեցանք 360 զուրուշ. քէսէին մէկ ամսուան շահը քանի՞ է :

Ժ. 25500 զուրուշ պարտքի վոխարէն 12000 զուրուշ վճարեցինք, 100ին ո՞րչափ վճարեցինք :

ՀԱՐՅՄՈՒՆՔ

93. Թուաբանական խնդիրն ի՞նչ է : Խնդիր լուծել ըսելով ի՞նչ կը հասկցուի : Խնդիրները ի՞նչպէս կը լուծուին :

94. Ա. կարգի խնդիրները ո՞րոնք են, ի՞նչպէս կը լուծուին :

95. Բ. կարգի խնդիրները որո՞նք են, ինչպէս կը լուծուին :

96. Թէ որ խնդրոյ մը մէջ կոտորակ գտնուի, ի՞նչպէս որոշելու է նոյն խնդիրը լուծելու համար պէտք եղած գործողութիւնը :

97. Երրորդ կարգի խնդիրները որո՞նք են և ինչպէս կը լուծուին. Միութեան կանոնը ի՞նչ է :

98. Պարզ երեքի կանոնը ո՞րն է, ասոր վրայ եղող խնդիրները ի՞նչպէս լուծելու է :

99. Բաղադրեալ երեքի կանոնը ո՞րն է : Ասոր վրայ եղող խնդիրները ի՞նչպէս լուծելու է :

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Յ

Պ Ա Ռ Ի Թ Է .

ԿՇՈՒՌԻԹԻՒՆ ԵՒ ՀՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

Ա. ԿՇՈՒՌԻԹԻՒՆ

100. Երկու թիւ իրարու հետ երկու կերպով կրնանք բաղդատել. առաջին՝ իրարմէ հանելով, որով մէկը միւսէն որչափ աւելի ըլլալը կիմանամք, երկրորդ իրարու մէջ բաժնելով, որով մէկը միւսին քանի անգամը ըլլալը կը հասկնամք: Ինչպէս 12ը 4ին հետ բաղդատելու համար, առաջին՝ կը գրեմք $12 - 4 = 8$, որ 12ը 4էն 8 աւելի ըլլալը կը ցըցնէ. երկրորդ՝ կը գրեմք $\frac{12}{4} = 3$, որ 12ը 4ին 3 անգամը ըլլալը կը ցըցնէ :

Այս երկու կերպ բաղդատութիւնը կոտորիւն կըսուի, և երած արդիւնքները որ տարբերութիւն մը կամ քանորդ մ'են կըսուին կշիւ :

101. Կշուութիւնը երկու տեսակ կըլլայ, մէկը՝ տարբերական կշուարիւն, որոյ մէջ երկու թուոց բաղդատութիւնը բարձմամբ կըլլայ, և տարբերութիւնը կըսուի տարբերական կշիւ. միւսը քանորդական կշուարիւն, որոյ մէջ երկու թուոց բաղդատութիւնը բաժանմամբ կըլլայ, և քանորդը կըսուի քանորդական կշիւ :

Տարբերական կշռութիւնը կը նշանակուի երկու թուոց մէջ կէտ մը գնելով ինչպէս՝

12. 4 որ ըսել է 12—4, որ բարձում կը նշանակէ : Քանորդական կշռութիւնը կը նշանակուի երկու թուոց մէջ բաժանման նշան մը գնելով, ինչպէս՝ 12:4, որ ըսել է $\frac{12}{4}$ որ բաժանումն կամ կուտորակ կը նշանակէ : Կշռութեան նշանին ձախ կողմը գրուած թիւը նախորդ եզր կըսուի, և աջ կողմը գրուած թիւը յաջորդ եզր կըսուի : Ինչպէս՝ 12. 4 կամ 12:4 կշռութիւններուն մէջ 12ը նախորդ եզր է, և 4ը յաջորդ եզր :

Բ. ՀԱՄԵՄՍՏՈՒԹԻՒՆ

102. Երկու տարբերական կամ քանորդական կշռութիւն ունենանք, որոց կշիռները հաւասար ըլլան, ասոնց հաւասար ըլլալը երրորդ նշանակենք իւրենց մէջ հաւասար կամ երկու վերջակէտ գնելով, այս բացատրութիւնը կըսուի հավանատրիան, և եզրերը հավանատրիանք :

Ինչպէս՝ 12. 4=14. 6 կամ 12:4::18:6

Առաջին համեմատութիւնը կըսուի տարբերական հավանատրիան և կը կարգացուի որպէս 12 առ 4 տարբերութեամբ նոյնպէս 14 առ 6. և կը նշանակէ 12—4=14—6, երկու կողմին ալ տարբերութիւնները կամ կշիռները 8 են. կամ կը կարգացուի 12ը անանկ կը համեմատի 4ին հետ տարբերութեամբ, ինչպէս 14ը 6ին հետ, որ ըսել է 12ը 4էն որչափ որ աւելի է, 14 ալ 6էն այնչափ աւելի է :

Երկրորդ համեմատութիւնը կըսուի քանորդական հավանատրիան կամ միայն հավանատրիան. և կը կարգացուի որպէս 12 առ 4 նոյնպէս 18 առ 6. և կը նշանակէ $\frac{12}{4}=\frac{18}{6}$ երկու կողմին ալ քանորդները կամ կշիռները 3 են :

103. Համեմատութիւն մը երկու կշռութիւն ունի, առաջ գրուածը առաջին կշռութիւն և ետքը գրուածը երկրորդ կշռութիւն կըսուի, ուստի համեմատութիւնը երկու նախորդ և երկու յաջորդ եզրեր ունի : Համեմատութեան մը ծայրը գրուած եզրերը յայրից եզրի և մէջը գրուած եզրերը միջին եզրի կըսուին :

1° Տարբերական հավանատրիան

104. Հիմնական յատկորիան. Տարբերական համեմատութեան մը ծայրից եզրերուն գումարը միշտ միջին եզրեաց գումարին հաւասար է :

Ինչպէս՝ 7. 12=9. 14 և 7+14=12+9

Ասիկէ կը հետևի որ եթէ այս չորս եզրերուն մէջ կը անձանօթ ըլլայ, միւս երեք եզրերուն միջոցաւ կը կրնայ գտնուիլ. եթէ անձանօթը ծայրի եզրերուն մէկն է, միջին եզրերուն գումարէն ծանօթ ծայրի եզրը հանելով՝ եթէ անձանօթը միջին եզրերուն մէկն է, ծայրի եզրերուն գումարէն ծանօթ միջին եզրը հանելով :

Ինչպէս՝ 7. 12=9. p և p=9+14—7=14

Նմանապէս՝ 7. 12=p. 14 և p=14+7—12=9

105. Եթէ ըլլայ տարրերական համեմատութիւն մը որ միջին եզրերը հաւասար են, ինչպէս՝

$$7 \cdot 12 = 12 \cdot 17$$

Այս հաւասար եզրերուն մէկը, որ միւր եզրաց գումարին կէսն է, կըսուի միջին տարրերական կամ միջին քուարանական կամ միջին քիւ :

Միշտ երկու թուոց գումարին կէսը, նոյն թւոց միջին թիւը կըսուի : Ինչպէս վերոգրեալ համեմատութեան մէջ 12ը միջին թիւ է 7ին և 17ին,

$$\text{մասն զի } \frac{7+17}{2} = 12 \text{ է:}$$

Թանօրոքիւն . Տարրերական համեմատութիւնը թուարանութեան մէջ այնչափ կարևոր գործողութիւն մը չըլլալով, համեմատութիւն ըսելով միայն քանորդական համեմատութիւնը կկամացուի :

ԽՆԴԻՐԻՔ

Ա. Երկու մարդոց ունեցածները միշտ իրարմէ հաւասարապէս կը տարրերէին, մէկուն 25 զուրուշ ունեցած ատենը միւսը 39 զուրուշ ունէր . արդեւ թէ առաջինը 48 զուրուշ ունենայ, երկրորդը քանի՞ զուրուշ սխախ ունենայ :

Գործողութիւն

$$25 \cdot 39 = 48 \cdot x \text{ և } x = 39 + 48 - 25 = 87 - 25 = 62$$

Բ. Չորս դաւազաններ կան, որոնց երկայնութիւնը իրարմէ հաւասարապէս կը տարրերին, երեք դաւազաններուն երկայնութիւնն է 8, 13, 18 մասնաչափ, չորրորդին երկայնութիւնը ո՞րչափ է :

$$8 \cdot 13 = 18 \cdot x \text{ և } x = 13 + 18 - 8 = 31 - 8 = 23$$

Գ. Յայտնի է որ Եւրոպացոց ժամացոյցը կէս օրին ժամ 12 կը ցըցնէ, իսկ մեր ժամացոյցով միշտ կէս օրը կը փոխուի, Սրդ մեզի ժամ 5 եղած ատենը, Եւրոպացոց ժամ քանի՞ն կըլլայ, զիտնալով որ նոյն օրը մեր կէս օրը ժամ 7ին սխախ ըլլայ :

Գործողութիւն

$$7 \cdot 12 = 5 \cdot x \text{ և } x = 12 + 5 - 7 = 10$$

Դ. Մեր կէս օրը ժամ 6ը 25 անցնելով եղած ատենը, Եւրոպացոց ժամ 10ին մեր ժամը քանի՞ կըլլայ :

Գործողութիւն

$$12 \cdot 6 \text{ 25} = 10 \cdot x \text{ և } x = 10 + 6 \text{ 25} - 12 = 4 \text{ 25}$$

Ե. Մեր կէս օրը ժամ 7ը 35 անցնելով եղած ատենը, թէ որ Եւրոպացոց ժամ 3ը 20 անցած է, մեր ժամը քանի՞ կըլլայ :

Գործողութիւն

$$12 \cdot 7 \text{ 35} = 3 \text{ 20} \cdot x \text{ և } x = 7 \text{ 35} + 3 \text{ 20} = 10 \text{ 55}$$

Թանօթութիւն . Երբ միջին կզրերուն գումարը 12 կամ 12էն փոքր չլլալով ճանօթ ճայրի կզրե ալ 12 ըլլայ, եպն գումարն է պատասխանը :

Միանապէս գործողութիւնը ըստ կանոնի կատարելէն ետքը թէ որ մնացորդը 12էն աւելի ըլլայ, 12ալ հանկու է, մնացորդն է պատասխանը :

Զ. Հայր մը 38 տարու եղած ատենը իր որդին 47 տարու էր, որդին 40 տարու եղած ատենը՝ հայրը քանի՞ տարու կըլլայ :

Պատ . 61 տարու :

Ի. Հայոց թուականը 1315 եղած ատենը Փըրհչի թուականը 1866 էր . Հայոց 1275 թուականը Փրհչի ո՞ր թուականին կը համաստատաստանէ :

Պատ . 1826 :

Ը. Մեր կէս օրը ժամ $7\frac{1}{2}$ եղած ատենը, ժամ 11ին Եւրոպացոց քանի՞ն կըլլայ :

Պատ . $3\frac{1}{2}$

Թ. Երկու տեսակ զինի ունինք 3 և 8 շուրուշնոց . իրար խառնելով հօխան քանի՞ի կուգայ :

Պատ . $5\frac{1}{2}$

Ժ. Երկու եղբոր տարիքն է 12 և 22, քրօջուհի տարիքը ո՞րչափ է, որ՝ մէկէն ո՞րչափ մեծ է՝ միւսէն ալ նոյնչափ փոքր է :

Պատ . 17

ՀԱՐՅՄՈՒՆԻՔ

100. Ի՞նչ է կշռութիւնը : Ի՞նչ է կիւրը :

101. կշռութիւնը քանի՞ տեսակ կըլլայ : Տարբերական կշռութիւնը ո՞րն է . Ի՞նչպէս կը նշանակենք :

Քանորդական կշռութիւնը Ի՞նչ է . Ի՞նչպէս կը նշանակենք : Տարբերական կշռութիւնը Ի՞նչ գործողութեամբ կըլլայ : Քանորդական կշռութիւնը Ի՞նչ գործողութեամբ կըլլայ : Նախորդ և յաջորդ եղբը ո՞րն է :

102. Համեմատութիւնը Ի՞նչ է . քանի՞ տեսակ կըլլայ : Տարբերական համեմատութիւնը ո՞րն է . Ի՞նչպէս կը կարդացուի . Ի՞նչ կը նշանակէ : Քանորդական համեմատութիւնը ո՞րն է . Ի՞նչպէս կը կարդացուի . Ի՞նչ կը նշանակէ :

103. Համեմատութեան մը Ա. կշռութիւնը ո՞րն է . երկրորդ կշռութիւնը ո՞րն է : Համեմատութեան մը նախորդ եղբերը ո՞րն են յաջորդ եղբերը ո՞րն են : Համեմատութեան մը ծայրից և միջին եղբերը ո՞րն են : $4:10::16:40$ համեմատութիւնը Ի՞նչպէս կը կարդացուի . ասոր առաջին և երկրորդ կշռութիւնները ո՞րն են . նախորդ և յաջորդ եղբերը ո՞րն են . ծայրից և միջին եղբերը ո՞րն են :

104. Տարբերական համեմատութեան հիմնական յատկութիւնը ո՞րն է . օրինակի վրայ հասկցուր . տարբերական համեմատութեան այս յատկութենէն Ի՞նչ կը հետևի : Անձանօթ ծայրի եղբը Ի՞նչպէս կը գտնուի : Անձանօթ միջին եղբը Ի՞նչպէս կը գտնուի :

105. Միջին թիւ Ի՞նչ բնէ է : Միջին թուոյն ուրիշ Ի՞նչ կըսուի : Երկու թուոց միջին թիւը Ի՞նչպէս կը գտնուի : Շատ մը թուոց միջին թիւը Ի՞նչպէս կը գտնուի :

2 ՔԱՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ

106. Ա. Ս. մէն քանորդական համեմատութեան ծայրից եղբերուն արտադրեալը միջին եղբրաց արտադրեալին հաւասար է . ինչպէս՝

$5:15::7:21$ հոս $5 \times 21 = 105$ և $15 \times 7 = 105$ ասկէ կը հետևի որ՝

1. Համեմատութեան մը ծայրի ու միջին եղբերը.

իրարու տեղ դնելով համեմատութիւնը չաբուիր , ուստի համեմատութիւն մը ութ կերպով կրնայ փոխուիլ : Եթէ համեմատութեան մը միջին կամ ծայրից եզրերն իրարու հաւասար ըլլան միայն չորս կերպով կը փոխուին , զորօրինակ :

- Ա. 5:15:: 7:21
- Բ. 21:15:: 7: 5 Ա. ին ծայրից եզրերը իրարու տեղ
- Գ. 5: 7::15:21 Ա. ին միջին » » դրուած
- Դ. 21: 7::15: 5 Բ. ին » » » »
- Ե. 7:21:: 5:15 Ա. ին կոտորիւնները » »
- Զ. 7: 5::21:15 Բ. ին » » » »
- Է. 15:21:: 5: 7 Գ. ին » » » »
- Ը. 15: 5::21: 7 Դ. ին » » » »

2. Համեմատութեան մը եթէ չորս եզրերուն մէկը կը անձանօթ ըլլայ , միւս երեք եզրերուն միջոցաւ կրնանք գտնաւ : Եթէ անձանօթը ծայրից եզրայ մէկն է , միջիններուն արտադրեալը ծայրի եզրովը բաժնելով . եթէ անձանօթը միջին եզրայ մէկն է , ծայրիններուն արտադրեալը ծանօթ միջին եզրովը բաժնելով . զորօրինակ .

$$5:15::7: p \text{ և } p = \frac{15 \times 7}{5} = 21$$

$$5:15::p : 21 \text{ և } p = \frac{5 \times 21}{15} = 7$$

107. Բ. Ամէն համեմատութեան կամ միայն Ա. կամ միայն Բ. կշռութեան , կամ միայն նախորդ կամ միայն յաջորդ , կամ ամէն եզրերը միւնոյն թուով բազմապատկելով կամ բաժնելով համեմատութիւնը չաբուիր . զորօրինակ .

6:8::18:24 միայն Ա. կամ միայն Բ. կշռութեան կամ ամէն եզրերը 5ով բազմապատկելով կամ 2ով բաժնելով կըլլայ 30:40::18:24 կամ 3:4::18:24 կամ 6:8::90:120 կամ 6:8::9:12 կամ 30:40::90:120 կամ 3:4::9:12.

Ուստի համեմատութիւն մը կրնանք իր պարզագոյն ձևին վերածել . զորօրինակ .

125:175::750:1050, այս համեմատութիւնը իր պարզագոյն ձևին վերածելու համար կը բաժնենք ամէն եզրն ալ 25ով և կըլլայ 5:7::30:42, ստոր ալ երկրորդ կշռութեան եզրերը 6ով բաժնելով կըլլայ 5:7::5:7.

108. Կշռութեան մը երկու եզրերը միշտ իրարու համասեռ թիւեր կըլլան , և ուստի ամէն համեմատութիւն ալ երկու կարգ համասեռ թիւեր կու նենայ :

ՊԱՐՁ ԵՐԵՔԻ ԿԱՆՈՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ

109. Համեմատութեամբ կը լուծուին այն խընդիրները , որոնց մէջ կան երեք ծանօթ թիւեր և մէկ անձանօթ , որ իր համասեռ ծանօթ թուոյն հետ անանկ կը համեմատի , ինչպէս միւս երկու ծանօթ թիւերը որոնք իրարու համասեռ են , այսպէս երեք ծանօթ եզրի միջոցաւ մէկ անձանօթ եզրը գտնաւ լու կանոնին (106. Բ.) կըսուի պարզ կրեքի կանոն :

ՕՐԻՆԱԿ

27 Հօխայ խահվէն 405 զորու շ կընէ , 48 հօխան քանի՞ զորու շ կընէ :

Յայտնի կը տեսնուի որ այս խնդիրը երկու մասերէ բաղկացեալ է , որ կրնայ գրուիլ այսպէս՝

$$\begin{array}{cc} 27 \text{ հօխայ} & 405 \text{ դարուշ} \\ 48 & p \end{array}$$

Արդ 48 հօխան 27 հօխայէն քանի անգամ որ աւելի է , 48 հօխային արժէքն այսինքն պատասխանն ալ 405 դարուշէն այնքան անգամ աւելի պիտի ըլլայ , ուստի այս չորս թիւերը համեմատութիւն մը կրնան կազմել :

$$p:405::48:27 \text{ և } p = \frac{405 \times 48}{27} = 720$$

ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

13 էնտաղէն կարժէ 100 դարուշ , 48 հօխան քանի՞ դարուշ կընէ :

Հաս ալ կը տեսնուի որ 13 էնտաղէն և 48 հօխան իրարու համասեռ չեն . ուստի այս չորս թիւերը համեմատութիւն մը չեն կազմէր :

ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

Քար մը 3 մանրերկրորդի մէջ 72 արշըն բարձրութեամբ տեղ վար կիջնայ , 10 մանրերկրորդի մէջ քանի՞ արշըն բարձրութեամբ տեղ վար կիջնայ :

Բարձրութիւնը 2 կամ 3 անգամ աւելնալովը ժամանակը 2 կամ 3 անգամ չաւելնար , ուստի այս չորս թիւերն ալ համեմատութիւն չեն կազմէր :

110 Ուստի պարզ համեմատութեամբ լուծելի խնդիրներուն մէջ չորս թիւ պէտք է դառնուի , ուրոնք երկու կարգ զոյգ համասեռ թիւեր են , և ասոնց մէկը , որ անձանօթ է , իր համասեռ թիւէն

քանի անգամ որ աւելի կամ պակաս է երրորդն ալ իր համասեռ շորրորդէն այնքան անգամ աւելի կամ պակաս ըլլալու է :

111. Խնդիր մը երեքի կանոնով լուծելի ըլլալը հասկնալէն ետքը համեմատութեան տակ շարեւտ համար .

« Ա. Անոնք երկու տողի մէջ գրելու է , մէկ տողին մէջ պատասխանին համասեռ թիւը իրեն վերարեբեալ թուովը , միւս տողին մէջ ասոնց համասեռ թիւերը պատասխանին տեղ ք դնելով :

« Բ. Պատասխանը Ա. եզր դնելով իր համասեռ թուոյն հետ Ա. կշուութիւն ընելու է :

« Գ. Միւս երկու համասեռ թիւերը Բ. կշուութիւն ընելու է , և նայելու է որ՝ եթէ պատասխանը իր համասեռ թիւէն չատ ըլլալ պէտք է , Բ. կշուութեան մէջ մեծ թիւը նախորդ եզր և փոքր թիւը յաջորդ եզր դրուի . եթէ պատասխանը իր համասեռ թիւէն քիչ ըլլալ պէտք է , Բ. կշուութեան մէջ փոքր թիւը նախորդ և մեծ թիւը յաջորդ եզր դրուի :

« Դ. Միջիններուն արտադրեալը ծանօթ ծայրի եզրովը բաժնելու է . քանորդն է պատասխանը .

« Ե. Եթէ համասեռ թիւերը խառն թիւ ըլլան կամ տարբեր մեծութեամբ միութիւն ունենան , ասէնը մէկ տեսակ միութեան վերածելու է :

« Զ. Պատասխանը հարկ չէ որ ամէն անգամ Ա. եզր ըլլայ , քանի՞ երորդ եզր որ ուզենք կըրնանք ընել , բայց միշտ իր համասեռ թուոյն հետ կշուութիւն մը կազմելով :

Խ Ն Դ Ի Բ Ք

Ա. 33 արշըն պատման 420 զուրուչ է . 56 արշըն պատման քանի՞ զուրուչ է :

Առաջ՝ կը գրեմ խնդիրը երկու տողի մէջ
36 արշըն 420 զուրուչ
56 ք

Երկրորդ՝ պատասխանը իր համասու թուոյն հետ տասնիկ կըտրուի կրկնելով

ք : 420

Երրորդ՝ դիտելով որ 56 արշընը 35 արշընէն աւելի կարծէ , ուստի պատասխանը 420էն շատ ըլլարուն համար՝ երկրորդ կըտրուի մէջ շատը տասնիկ եզր ե. քիչը երկրորդ եզր կրկնելով .

ք : 420 : : 56 : 35

Չորրորդ՝ միջիններուն արտադրեալը ճայրիմով կը բաժնուի , ե. կը գտնուի պատասխանը ,

$$\begin{array}{r} 24 \times 8 \\ 120 \times 56 = 192 \\ \hline 35 \\ 7 \end{array}$$

Բ. 48 գործաւոր 20 օրուան մէջ գործ մը կը լննցնեն , նոյն գործը 15 օրէն լննցնելու համար քանի՞ գործաւոր պէտք է :

48 գործաւոր 20 օր
ք 15

Այս խնդրոյ մէջ տասնիկ կըտրուի ք : 48 գրեմ

չիւ ետքը , կը դիտեմ որ պատասխանը իր համասու 48 գործաւորէն շատ պէտք է , ուստի միւս երկու քիւններուն մէջը նախորդ ե. քիւնը յաշորդ եզր կը դնեմ երկուրորդ կըտրուի մէջ , որով կըլլայ համեմատութիւնը

$$ք : 48 : : 20 : 15 \text{ ե. } ք = \frac{16 \times 4}{48 \times 20} = 64 \text{ գործաւոր}$$

412. Համեմատութեամբ լուծելի խնդիրները երկու տեսակ կըլլան , մէկը կըտուի ուղիղ համեմատութիւն , որուն մէջ պատասխանը ե. իրեն վերաբերեալ թիւը երկու կըտուի թեան նախորդ եզրերը կըլլան , կամ՝ պատասխանը իր համասու թուոյն հետ մէկ կըտուի թեան մէջ ինչ կարգով որ շարուած է , պատասխանին վերաբերեալ թիւն ալ իր համասու թուոյն հետ միւս կըտուի թեան մէջ նոյն կարգով շարուած կըլլայ : Միւսը կըտուի խտորանակ համեմատութիւն , որուն մէջ պատասխանը մէկ կըտուի թեան նախորդ եզր եզած տեսնը , իրեն վերաբերեալ թիւը միւս կըտուի թեան յաշորդ եզր կըլլայ , կամ՝ պատասխանը իր համասու թուոյն հետ մէկ կըտուի թեան մէջ ինչ կարգով որ շարուած է , պատասխանին վերաբերեալ թիւը իր համասու թուոյն հետ միւս կըտուի թեան մէջ հակառակ կերպով շարուած կըլլայ :

Առաջին խնդիրը ուղիղ համեմատութիւն է , որովհետեւ ինչպէս որ պատասխանը իր համասու 420 զուրուչէն շատ է , նոյնպէս պատասխանին վերաբերեալ թիւը 56 արշընն ալ իր համասու 35 արշըն

նէն շատ է , և որով ինչպէս որ Ա. կըռութեան մէջ պատասխանը առաջ և իր համասեռ թիւը ետքը դրուեցաւ , նոյնպէս Բ. կըռութեան մէջ ալ պատասխանին վերաբերեալ թիւը առաջ և իր համասեռ թիւը ետքը դրուած է :

Երկրորդ խնդիրը խոտորնակ համեմատութիւն է , որովհետեւ պատասխանը իր համասեռ 48 գործառութեն շատ պիտի ըլլայ , բայց պատասխանին վերաբերեալ թիւը 45 որը իր համասեռ 20 օրէն քիչ է , և որով համեմատութեան մէջ դրուած ատեն , առաջին կըռութեան մէջ պատասխանը առաջ և իր համասեռ 48ը ետքը դրուեցաւ , բայց երկրորդ կըռութեան մէջ պատասխանին վերաբերեալ թիւը 45ը ետքը և իր համասեռ թիւը 20ը առաջ դրուեցաւ :

ԽՆԴԻՐՔ

Ա. 15000 զուրուչ գրամագլխով 8000 զուրուչ շահեցանք , 12000 զուրուչ գրամագլխով քանի՞ զուրուչ կը շահինք :

Բ. Թէ որ 250 կանգուն շէնքին համար 40000 զուրուչ ծախք ըլլայ , 400 կանգուն շէնքին քանի՞ զուրուչ ծախք պիտի ըլլայ :

Գ. Թէ որ 500 զուրուչին շահը $7\frac{1}{2}$ զուրուչ ըլլայ , 14502 զուրուչին շահը քանի՞ կըլլայ :

Դ. 185 հօխայ խահովէն 1000 զուրուչ ըրած ատենը , 500 հօխայ խահովէն քանի՞ զուրուչ կընէ :

Ե. 14 ձիին 20 օրուան աշխատութիւնը 8 օրէն ըմնցնելու համար քանի՞ ձի պէտք է :

Զ. Քէսէլին տոկոսը 2000 ստակ ըլլալու պայ-

մանաւ , 12600 զուրուչին տոկոսը քանի՞ զուրուչ կընէ :

Է. 100 մարդ գործ մը կրնան ըմնցնել 40 օրուան մէջ , նոյն գործը 25 օրէն ըմնցնելու համար քանի՞ մարդ պէտք է : Կամ նոյն գործը 20 մարդ քանի՞ օրէն կը ըմնցնէ :

Ը. Պաղլիոյ 100 քիւօկրամը Կ. Պօլսոյ 78 հօխային հաւասար է , Կ. Պօլսոյ 100 հօխան քանի՞ քիւօկրամ կընէ : Կամ 125 քիւօկրամը քանի՞ հօխայ կընէ :

Թ. Կ. Պօլսոյ 100 ճարտարապետական արշընը Պաղլիոյ $76\frac{1}{2}$ մէթրին հաւասար է , Պաղլիոյ 100 մէթրը քանի՞ արշըն կընէ : Կամ 64 արշընը քանի՞ մէթր կընէ :

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՐԵՔԻ ԿԱՆՈՆ

113. Երրոր անանկ խնդիրներ պատահին , որոյ մէջ երեքէն աւելի ծանօթ թիւեր գտնուին , կամ պատասխանին իր համասեռ թուոյն հետ ունեցած վերաբերութիւնը շատ մը պայմաններէ կախումն ունենայ . այս տեսակ խնդիրները լուծող կանոնին կըսուի քաղաքական երեքի կանոն . ինչպէս՝

40 գործաւոր գործի մը 600 կանգունը 24 օրէն կը ըմնցեն , 25 գործաւոր նոյն գործին 500 կանգունը քանի՞ օրէն կը ըմնցեն . այսինքն՝

40	գործաւոր	600	կանգուն	24	օր
25		500			ք

Այս խնդիրը բազադրեալ երեքի կանոնի կը վերաբերի , և քանի մը կերպով կընայ լուծուիլ :

Մասին լուծումն

Խնդրոյ մը մէջ որչափ սրայման կայ, այնչափ սարդ երեքի կանոնով կրնայ լուծուիլ, այս խնդիրը երկու սրայման ունենալով երկու սարդ երեքի կանոնով կը լուծուի: Ուստի կըսենք՝ 40 գործաւոր 24 օրէն կը լմնցնէ գործ մը, 25^{րդ} գործաւոր նոյն գործը քանի՞ օրէն կը լմնցնէ. այսինքն՝

40 գործ . 24 օր սրատասխանք քիչ ըլլալ պէտք է
25 ք ուստի կը գրեմ

$$p:24::40:25 \quad p = \frac{24 \times 40}{25} = 38\frac{40}{25} = 38\frac{2}{5}$$

ուստի նորէն կըսեմ՝

Պարծի մը 600 կանգունը 38²/₅ օրէն կը լմնայ, նոյն գործին 500 կանգունը քանի՞ օրէն կը լմնայ =

600 կեգ . 38²/₅ օր սրատասխանք քիչ ըլլալ պէտք է
500 ք ուստի կը գրեմ

$$p:38\frac{2}{5}::500:600 \quad \text{և} \quad p = \frac{192 \times 5,00}{5 \times 6,00} = 32 \text{ օր, այս է}$$

սրատասխանը:

Երկրորդ լուծումն

Վերոգրեալ երկու համեմատութեան երկրորդ կշառութիւնները իրարու տակ գրելով, և սարդ համեմատութեան վերածելով կը գտնամ սրատասխանը,

$$p:24:: \begin{cases} 40:25 \\ 500:600 \end{cases} \quad \text{և}$$

$$p:24::40 \times 500:25 \times 600 \quad \text{և} \quad p = \frac{24 \times 4,0 \times 500}{25 \times 6,00} = 32$$

Երրորդ լուծումն

Ամէն համեմատութեամբ լուծելի խնդիրներուն մէջ սրատասխանք և արդիւնքներ կան, և ճշմարիտ է որ սրատասխան մը իր արդիւնքին հետ ուղիւ կը համեմատի. ուստի առաջ խնդիրը երկու տողի մէջ կը գրեմ, մէկ տողին մէջ սրատասխանին համասեռութիւնը իրեն վերաբերեալ թիւերովը, և միւս տողին մէջ սրատասխանը իրեն վերաբերեալ թիւերովը իրենց համասեռութեանց տակը, ետքը սրատասխանքուն վրայ մէկ մէկ կէտ դնելու է, մէկ կարգի սրատասխաններուն արտադրեալը Բ. եզր, միւս կարգի սրատասխաններուն արտադրեալը Պ. եզր և առնց վերաբերեալ արդիւնքներուն արտադրեալը Պ. եզր ընելով խնդիրը համեմատութեան մէջ կը դնեմ: Անձանօթը եթէ միջին եզերաց մէջն է, ծայրից եզերաց արտադրեալը բաժանելի և միջին եզերաց արտադրեալը բաժանող, և եթէ անձանօթը ծայրից եզերաց մէջն է, միջին եզերաց արտադրեալը բաժանելի և ծայրից եզերաց արտադրեալը բաժանող ընելով քանորդը կըլլայ սրատասխանը. վերոգրեալ խնդիրը լուծենք այս կերպով:

40 գործ . 600 կեգ. 24օր { գործաւորները և օրերը սրատասխան
25 500 ք { ըլլալով վրանիս կէտ դրի. ուստի

$$40 \times 24 : 600 :: 25 \times p : 500 \quad \text{և} \quad p = \frac{4,0 \times 24 \times 500}{6,00 \times 25} = 32$$

Մանթութիւն . Երէ խնդրոյ մը սրայնակերտե
մէջ արդիւնքը որոյ կերպով դրուած ըլլայ , սրայիւն
քիւն առ 1 դնելու է :

Խ Ն Դ Ի Ր Փ

Ա. 25 մարդ օրը 9 ժամ աշխատելով 12 օր
ուան մէջ կը փորեն 50 կանգուն երկայնութիւն 4
կանգուն լայնութիւն և 6 կանգուն խորութիւն ու
ցող փոս մը : Քանի՞ մարդ պէտք է , օրը 10 ժամ
աշխատելով 18 օրուան մէջ , 100 կանգուն երկայ
նութիւն 3 կանգուն լայնութիւն և 4 կանգուն խո
րութիւն ունեցող փոս մը փորելու համար :

Պատ . 30 մարդ

Բ. 12000 զուրուչ զրամագլխով 5 ամսուան մէջ
4500 զուրուչ շահեցանք . 8 ամսուան մէջ 5000
զրչ շահելու համար ո՞րչափ զրամագլխի պէտք է :

Պ. 12 մարդ 15 ամսուան մէջ վասակեցան 54720
զուրուչ . 20 մարդ 12 ամսուան մէջ քանի՞ զուրուչ
կը շահն :

Պ. Տուն մը շինեցինք 100000 զուրուչով , որոյ
երկայնութիւնն էր 16 արշըն , լայնութիւնը 12 ար
շըն և բարձրութիւնը 13 արշըն : Ուրիշ տուն մը
պիտի շինենք որոյ երկայնութիւնն է 20 արշըն ,
լայնութիւնը 15 արշըն և բարձրութիւնը 18 արշըն .
քանի՞ զուրուչ պէտք է :

Ե. 8 մարդ 12 օրուան մէջ օրը 10 ժամ աշ
խատելով 5000 զուրուչ կը վասակին : 20 մարդ 15
օրուան մէջ օրը 15 ժամ աշխատելով քանի՞ զու
րուչ կը վասակին :

Զ. 500 զուրուչին 30 օրուան շահը 4000 ստակ
ըլլալով , 2564 զուրուչի 5 ամսուան 6 օրուան շահը
քանի՞ զուրուչ կընէ :

Ե. 100 Անգղիական ոսկի արծող քոնսոլտին 6
ամսուան շահը 2¹/₂ Անգղիական ոսկի կընէ , մէկ
անգղիական քոնսոլտը 34 զուրուչ 25 փարա կընէ
այսօր , կուգենք հասկնալ 500 զուրուչին 4 ամսու
ան շահը քանի՞ կուգայ , ենթադրելով որ մէկ անգ
ղիական ոսկին 117 զուրուչ է :

Ը. 500 զուրուչին 30 օրուան շահը 7¹/₂ զու
րուչ ըլլալով , զրամագլխը ո՞րչափ ըլլալու է որ
150 օրուան մէջ 10000 զուրուչ շահ տանենք :

ՇՂԹԱՅԻ ԿԱՆՈՆ

114. Կան կարգ մը խնդիրներ որ բաղադրեալ
երեքի կանոնով լուծուած խնդիրներուն կը նմանին
և նոյն կանոնով ալ կը լուծուին , բայց ասոնց մէջ
մէկ զոյգէն աւելի իրարու հետ հաւասարութիւն
կազմող թիւեր կը գտնուին , որոնք իրարու հետ
չդիմացի պէս կապուած են : Ասանկ խնդիրները հա
մառօտ կերպով մը լուծելու կանոնին կըսուի շրջայի
կանոն . որ է՝

1^o. Պատասխանին տեղ ք զրելու է և ասոր դի
մացը = նշանէ մը ետքը դնելու է իրեն համասեռ
եղած թիւը , որոյ կըսուի եզր սրանակնալ :

2^o. ք ին տակը դնելու է սրահանջեալ եզրին հա
մասեռ թիւը և = նշանէ մը ետքն ալ ասոր հաւա
սար թիւը , որուն համասեռ թիւն ալ գրելու է ա
ռաջին էջին երրորդ տողին մէջ և իր դիմացն ալ
իր հաւասարը , ասանկ շարունակելու է միշտ երկ

բորդ էջին մէջ գրուած թուոյ մը համաստեօր յա-
 ջորդ տողին առաջին էջին մէջ գնելով իր հաւասարն
 ալ դիմացը , անանկ որ երկրորդ էջին վերջի թիւը
 առաջին էջին առաջին թուոյն , այսինքն , պատաս-
 խանին համաստեօ քլլայ :

3°. Առաջին էջին մէջի թուոյ արտադրեալը
 երկրորդ էջին մէջի թուոյ արտադրեալին մէջ բաժ-
 նելով քանորդը կըլլայ պատասխանը :

Խ Ն Դ Ի Ր Բ

Ա. 5 հոխայ չայով 48 հոխայ խաճվէ կառնուի ,
 8 հոխայ խաճվեով 15 հոխայ շաքար կառնուի . 100
 հոխայ չայով քանի՞ հոխայ շաքար կառնուի :

Գործողութիւն

Շաքար	$p=100$	հոխայ չայ
Շայ	$5=48$	» խաճվէ
Խաճվէ	$8=15$	» շաքար
<hr/>		
	$40p=72000$	

և $p=\frac{72000}{40}=1800$ հոխայ շաքար

Քրովնետե. 100 հոխայ չայով քանի՞ հոխայ շաքար
 առնուիլը կը փնտտուի , ուստի առաջին տողին մէջ գը-
 րեցի $p=100$ հոխայ չայ . 100 հոխայ չայն է պու-
 հանջեալ ելլը , ասոր համաստեօն է 5 հոխայ չայ , գը-
 րեցի p ին տակը , և ասոր հաւասարն աչ 48 հոխայ
 խաճվէն ըրարով , 5 հոխայ չային դիմացը գրեցի 48
 հոխայ խաճվէ , որով երաւ երկրորդ տողը $5=48$ հո-
 խայ խաճվէ . խաճվէին համաստեօ քիւր ըրարով 8 հո-

խայ խաճվէն և ասոր հաւասարը 15 հոխայ շաքարը ,
 երրորդ տողն աչ կրաւ $8=15$ հոխայ շաքար , համա-
 ստեօ անխափօքին . ընդ ամէնը երաւ երկու էջ . առա-
 ջին էջին միջի քիւերը 5 և 8 իրարմով յազմապատկե-
 լով գտայ 40 , երկրորդ էջին մէջի քիւերն աչ իրարմով
 յազմապատկելով գտայ $100 \times 48 \times 15 = 72000$, ասոր
 մէջ 40ը բաժնելով գտայ 1800 հոխայ շաքար , որ է
 պատասխանը :

Ծանօթութիւն . Թէ որ երկու էջերուն մէջ գրա-
 նուած քիւերը պարզերա շարմար քիւեր ըլլան՝ կը
 պարզենք միւեկոյն քուով բաժնելով և հաւասար քիւերը
 ջնշելով . ինչպէս վերի օրինակին մէջ 5 և 8 քիւերը 15
 և 48 քիւերուն մէջ ճիշտ կրնան բաժնուիլ , կը բաժ-
 նենք քանորդները բաժանելիներուն քով կը գրենք ,
 ու միւսները ջնշուած կը համարուին : Չկուած քիւր
 երէ աչ կողմի էջին մէջ ըրայ , աչ կողմը կէտ մը դնե-
 լու է , երէ ձախ կողմը ըրայ ձախ կողմը կէտ դնե-
 լու է :

$p=100$	հոխայ չայ
$5=48$	» խաճվէ. 6
$8=15$	» շաքար. 3
<hr/>	
$p=1800$	

Բ. Անգղիոյ 1000 ոտքը գաղղիա քանի՞ մէթր
 կընէ , գիտնալով որ անգղիոյ 16 ոտքը գաղղիոյ 15
 ոտքին հաւասար է , և որ գաղ. 6000 հին ոտքը
 1949 մէթր կընէ :

Գ. Ռուսիոյ 4 քառաօծը համարուի 37 սու կը-
 նէ , համարուիի պանքայի 160 մարքը (1 մարքը 16
 սու է) կարծէ 141 Փիօրին Ամսթերտամի , Ամբս-

թերտամի 227 Ֆիորինը 480 Ֆրանք կընէ . 4000 քառսորնը քանի՞ Ֆրանք կընէ :

Պատ . 4309,49 Ֆրանք

Գ. Անգղիայէն 256 խանթար 35 հօխայ շաքար բերել տունը , Անգղիայ խանթարը 2 վրա 5 շիւնի վրայ . արդ Կ . Պօլիա քանի զուրուչ պիտի վճարենք . գիտնալով որ Անգղիայ խանթարը 90 լրայ է և Կ . Պօլոյ խանթարը 100 լրա , և որ 1 վրան 108 զուրուչ 20 փարայի վրայ հաշիւ պիտի ընենք :

ՀԱՐՅՄՈՒՆՔ

106. Քանորդական Համեմատութեան Հիմնական յատկութեանց Ա.բ ո՞րն է , ասիէ Ի՞նչ կը հետեի :

107. Երկրորդ յատկութիւնը ո՞րն է , օրինակի վրայ հասկցուր :

108. Համեմատութեան մը մէջ քանի՞ տեսակ թիւ կայ :

109. Համեմատութեան մէջ սարդ երեքի կանոնը ո՞րն է : Այս կանոնը միութեան կանոնին մէջ աւանդեալ սարդ երեքի կանոնէն Ի՞նչ տարբերութիւն ունի : Ամէն խնդիր , որո՞ք երեք ծանօթ թիւեր ունին Համեմատութեան տակ կի՞շտան :

110. Պարզ երեքի կանոնով լուծելի խնդիրները Ի՞նչպէս հասկընալու է :

111. Խնդիր մը Համեմատութեան մէջ Ի՞նչպէս շարելու է :

112. Համեմատութեամբ լուծելի խնդիրները քանի՞ տեսակ կըլլան : Ուղիւ Համեմատութիւնը ո՞րն է : Խոտորեակ Համեմատութիւնը ո՞րն է :

113. Բաղադրեալ երեքի կանոնը ո՞րն է , այս տեսակ խնդիրները քանի՞ կերպով կրնանք լուծել . օրինակի վրայ բացատրէ :

114. Շղթայի կանոնը Ի՞նչ է , չղթայի կանոնի վերաբերեալ խնդիրը համառօտ կերպով Ի՞նչպէս լուծելու է :

ԳԼՈՒԹ Ը .

ՄԻԿ ՔԱՆԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱԹԻՒՆԵՐ

—

Ա. ԱՅՍՁԱՓ ԱՌ 100 ԿԱՄ ԱՌ 1000

115. Շատ տեսակ խնդիրներ կան որ միշտ այս չափի առ հարկը կամ առ հազար ըսելով կառաջարկուին , ինչպէս են վաստակի կամ վեասի , սարան , վազրուքեան , յանձնարարողէքի , միջնորդէքի , և այլն վերաբերեալ խնդիրները , որոյ ամէնն ալ կը լուծուին երեքի կանոնով , որիէ կը հետեի սա հետեալ գործնական զիւրին կանոնը :

Կանոն . Առաջարկեալ թիւը բազմապատկելու է 100ին կամ 1000ին համար ըսուած այսչափով և արտադրեալը բաժնելու է 100ով 1000ով , այսինքն , արտադրեալին աջ կողմէն երկու կամ երեք հաս դասելու է » :

ԽՆԴԻՐՔ

Ա. 25000 զուրուչի վաճառք ծախեցինք 5 առ 0/0 մըստով , ո՞րչափ է վըսանիս :

Գործողութիւն

$$\begin{array}{r}
 25000 \\
 \times 5 \\
 \hline
 1250,00
 \end{array}$$

25000 շ 5 ուղ ըստ մատակարարի և արտադրեալին աջ կողմէն երկու գրո գատելով զսոց վնաս 1250 դուրուշ :

Բ. 3564 հօխոց անուխը քանի՞ զուբուշ կընէ , 400 ը 15 զուբուշէն :

Պատ . 1603 դրշ . 32 փր .

Գ. 25625 զուբուշի վաճառքին մաքսը ո՞րչափ է 400 ին 8 էն :

Պատ . 2050 դրշ .

Դ. 125000 զուբուշի վաճառքին 5 առ 0/0 միջնորդչէքը ո՞րչափ է :

Պատ . 6250 դրշ .

Ե. 9450 զուբուշի վաճառքին 4 առ 0/0 յանձնարարողչէքը քանի՞ է :

Պատ . 258 դրշ .

Զ. 185650 զուբուշի վաճառքին 2 առ 0/0 ասրա հովազրողչէքը քանի՞ է :

Է. 25600 զուբուշով շահեցանք 3840 դրշ , 400 ի վրայ ո՞րչափ շահեցանք :

Բ. ՏՈԿՈՍ

116. Փոխ նստուած դրամի կամ դրամագլխոյ մը գործածութեան համար վճարուած փոխարինութեանը կըսուի սոխոս կամ շահ : Տոխոսը միշտ աւիար քէսէին կամ տարին հարիարին սոյսչափ ըսելով պայման կըլլայ , ինչպէս ամիսը քէսէին 100 փարայէն , 3 զուբուշէն , 6 զուբուշ 10 փարայէն , 7 1/2 էն և այլն . կամ տարին 100 ին 2 էն , 3 էն , 4 էն , 5 էն , 6 էն , և այլն ըսուելով պայման կըլլայ : Քէսէսէին և թէ հարիւրին վրայ պայման եղած շահե-

քը սակ շահու կըսուին :

Շահու վերաբերեալ ամէն խնդիրները անվրէպ կը շուծուին , թէ պարզ և թէ բազաղբեալ երեքի կանոնով , որիէ կը հետեցնենք սա հետեւեալ ընդհանուր կանոնը որ գործնականին մէջ աւելի դիւրին և գործածական է :

Կանոն . Ա. Գրամագլխոսը բազմապատկելու է քէսէին մէկ տնտեսան համար ըսուած շահուն երկու անգամովը և ամիսներուն թուովը , և արտադրեալին աջ կողմէն երեք հատ գատելու է : Կամ , թէ որ ամիսներու տեղ օրերու թուով բազմապատկուի , սն ատեն արտադրեալը 30000 ուղ բաժնելու է :

Կանոն . Բ. « Գրամագլխոսը բազմապատկելու է . 400 ին մէկ տարուան համար ըսուած սակովը և և տարիներու համարանքովը , և արտադրեալը 4200 ուղ բաժնելու է : Կամ , թէ որ օրերու թուով բազմապատկուի , արտադրեալը 36000 ուղ բաժնելու է :

117 Գործնականին մէջ շահու վերաբերեալ խնդիրները աւելի յաճախ օրերու վրայ հաշիւ ընել պէտք կըլլայ , սն ատեն ընդհանուր կանոնին համեմատ թէ որ սակը ամիսը քէսէի վրայ է , դրամագլխոսը բազմապատկելու է սակին երկու անգամով և օրերուն համարանքովը և արտադրեալը բաժնելու է 30000 ուղ , կամ թէ որ սակը տարին 400 ի վրայ է , դրամագլխոսը բազմապատկելու է սակով և օրերու համարանքով և արտադրեալը բաժնելու է 36000 ուղ : Արդ թէ որ ամիսը քէսէին համար ըսուած սակին երկու անգամը 30000 ին մէջ և տարին 400 ի համար ըսուած սակը 36000 ին մէջ ճշդիւ բաժնուի ,

կը բաժնենք և քանորդները կըլլան նոյն սակերուն վերաբերեալ հաստատուն բաժանողներ, ան առեն, դրամագլուխը միայն օրերուն համբանքով բազմապատկելով արտադրեալը նոյն սակին վերաբերեալ հաստատուն բաժանողով բաժնելու է :

Պանանք ստորական սակերու վերաբերեալ հաստատուն բաժանողները,

Ամիսը քէսէն $7\frac{1}{2}$ և հաստատ. բժնողն է $7,5 \times 2 = 15$ և $\frac{50000}{15} = 2000$
" " $6\frac{1}{2}$ " " $6,25 \times 2 = 12,5$ և $\frac{30000}{12,5} = 2400$
Տարին 100ին 6ր " " $\frac{36000}{6} = 6000$
" " $7\frac{1}{2}$ " " $\frac{36000}{7,5} = 4800$

Որով կը շինենք հետևեալ աղյուսակը

Ամիսը քէսէին	Տարին 100ին	Հաստատուն բաժանողը
60 փարա	3 դ. 24 փր.	10000
2 դուբուշ	4 " 32 "	7500
$2\frac{1}{2}$ "	6 " "	6000
3 " "	7 " 8 "	5000
5 " "	12 " "	3000
$6\frac{1}{4}$ "	15 " "	2400
$7\frac{1}{2}$ "	18 " "	2000
1000 ստակ	20 " "	1800
10 դուբուշ	24 " "	1500

Այսպիսի մէջ չի գտնուած սակերուն հաստատուն բաժանողը կրնանք գտնուլ վերոգրեալ կանոնով :

Երէ ամիսը քէսէին համար շուրճ սակին կրկու անգամը 30,000ին մէջ և կամ տարին 100ին համար շուրճ սակը 36000ին մէջ ճշդիւ չի բաժնուի, ևոյն սակերուն համար գտնուելիք հաստատուն բաժանողը, գործողութիւնը առկի կը դժուարացնէ, ևոյն սակերով սակուսաց հարիւր ընդհանուր կանոնով ընկեր է :

Խ Ն Դ Ի Ր Ք

Ա. Ամիսը քէսէն 5 դուբուշէն 18000 դուբուշին 15 օրուան շահը քանի՞ կընէ :

[ուժումն կրեքի կանոնով

$$500 \text{ դրամգլու. } 30 \text{ օր } 5 \text{ շահ}$$

$$18000 \quad 135 \text{ ր}$$

$$500 \times 30 : 5 :: 18000 \times 135 : p$$

$$\text{և } p = \frac{5 \times 18,000 \times 135}{5,00 \times 3,0} = 810$$

Բնդհանուր կանոնով

$$5 \times 2 = 10 \text{ և } \frac{18,000 \times 1,0 \times 135}{3,0000} = 810$$

Համասօտ կանոնով, որովհետև քէսէն 5 դուբուշ չի վերաբերեալ հաստատուն բաժանողն է 3000, ուստի

$$\frac{18,000 \times 135}{3,000} = 810$$

Բ. Տարին 100ին 6էն շահ հաշուելով 9600 զուրուչին 140 օրուան շահը քանի՞ զուրուչ կընէ :

Լուծումն երեքի կանոնով

$$\frac{100 \text{ զուրուչ} \cdot 360 \text{ օր} \cdot 6 \text{ շահ}}{9600 \cdot 140 \text{ ք}} \left\{ 100 \times 360 : 6 :: 9600 \times 140 : \text{ք} \right.$$

$$\text{և ք} = \frac{6 \times 96,00 \times 14,0}{100 \times 36,0} = 224$$

Լուծումն ընդհանուր կանոնով

$$\frac{6 \times 96,00 \times 14,0}{36,000} = 224$$

Լուծումն համառոտ կերպով : որովհետև տարին 100ին 6ի վերաբերեալ հաստատուն բաժանողն է 6000 , ուստի

$$\frac{96,00 \times 14,0}{6,000} = 224$$

Գ. Ամիսը քէսէն 1000 ստակին 9180 զուրուչին 125 օրուան շահը քանի՞ կընէ :

Պատ . 37 1/2 զուրուչ

Դ. Տարին 100ին 7 1/2էն 2000 ստակը վրային 465 օրուան շահը քանի՞ կընէ :

Պատ . 8 վրա 46 շիւն

Ե. Ամիսը քէսէն 7 1/2էն 12000 զուրուչին 256 օրուան շահը քանի՞ կընէ :

Պատ . 936 զուրուչ

Զ. Ամիսը քէսէն 6 զուրուչ 10 փարսյէն 18000 զուրուչին 3 տարուան բազադրեալ տոկոսեօք գումարը գտնարու է :

Պատ . 27375 դր . 30 փր .

ԲԱՂԱԳՐԵԱՍ, ՏՈՒՈՍ

118. Երբոր գրամադրույ մը տարեկան տոկոսը իր վրայ աւելնալով նոր գրամադրուխ մը կըլլայ , և անոր ալ տոկոսը հաշիւ կընենմք , այս տոկոսին կրուսի տոկոսնաց տոկոս կամ յաղադրեալ տոկոս :

ՕՐԻՆԱԿ

5000 զուրուչին տարին 100ին 12էն 3 տարուան բազադրեալ տոկոսը քանի՞ կընէ :

Լուծումն

Վախ՝ առաջին տարուան տոկոսը կը գտնանք ըսելով եթէ 100ին մէկ տարուան տոկոսը 12 է , 5000ին մէկ տարուան տոկոսը քանի՞ կըլլայ :

զրա՛մ	շահ
100	12
5000	ք

$$\text{ք} : 12 :: 5000 : 100 \text{ և}$$

$$\text{ք} = \frac{12 \times 5000}{100} = 600$$

Արդ առաջին տարուան տոկոսն է 600 օրուն

վրայ 5000 դրամագլուխն աւելցնելով կըլլայ 5600 երկրորդ տարուան դրամագլուխ , ուստի համեմա- տութիւն ընելով կը գտնամք՝

$$p:42::5600:400 \text{ և}$$

$$p = \frac{12 \times 5600}{100} = 672 \text{ որ է երկրորդ տարուան տոկոսը ,}$$

տաի 5600 դրամագլխոյն վրայ աւելցնելով կըլլայ 6272 , երրորդ տարուան դրամագլուխ

Ուստի դարձեալ համեմատութիւն կազմելով կը գտնամք

$$p:42::6272:400 \text{ և}$$

$$p = \frac{12 \times 6272}{100} = 752 \text{ զուրուշ 25 փարա}$$

որ 6272 դրամագլխոյն վրայ աւելցնելով կունենամք բոլոր պահանջը 7024 զուրուշ 25 փարա , եթէ ա- կէ սկզբնական դրամագլուխ 5000 զուրուշը հանենք

7024 դրշ. 25 փր . — 5000 = 2024 դրշ 25 փր . կը մնայ որ է 5000 դրշին երեք տարուան 100ին 12 էն բաղադրեալ տոկոսը :

149. Պրամագլխի մը բաղադրեալ տոկոսեօր գումարը գտնալու համար պէտք է նոյն դրամագլու- խոյն առաջին տարուան պարզ տոկոսը գտնալ և աւելցնելով իր վրայ կազմել նոր դրամագլուխ մը , ատոր երկրորդ տարուան պարզ տոկոսը գտնալ և աւելցնելով իր վրայ կազմեն նոր դրամագլուխ մը , ատոր ալ երրորդ տարուան պարզ տոկոսը գտնալ և աւելցնելով իր վրայ կազմել նոր դրամագլուխ մը , և այսպէս շարունակել մինչև ծամանակը լը- բանայ :

ՕՐԻՆԱԿՔ

1. Ամիսը քէսէն 5 զուրուշ հաշուով 2500 զուրու- շին 4 տարուան բաղադրեալ տոկոսեօր գումարը գտնալու է , տարուէ տարի շահը դրամագլխոյն վը- րայ աւելցնելու պայմանաւ :

$$\text{Պատ . } 3933 \text{ դրշ. } 32 \text{ փր .}$$

2. Ամիսը քէսէն 1000 ստակէն 3600 զուրու- շին 6 ամիսը անգամ մը շահը վրան աւելցնելու պայմանաւ 5 տարուան 8 ամսուան 13 օրուան բա- ղադրեալ տոկոսեօր գումարը գտնալու է :

$$\text{Պատ . } 10687 \text{ դրշ. } 32 \text{ փր .}$$

3. Գտնալու է 3500 Ֆրանքին տարին 100ին 3էն , 4 տարուան 6 ամսուան 12 օրուան բաղադ- րեալ տոկոսեօր գումարը տարուէ տարի շահը դը- րամագլխոյն վրայ աւելցնելու պայմանաւ :

$$\text{Պատ . } 4348 \text{ Ֆրանք } 69 \text{ սանդիմ}$$

Գ. ՁԵՂՁՅԻՄՆ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԽՆԴԻՐՔ

120. Ա. Առաջարկեալ ըլլայ գտնալու 100ին 16էն 1740 զուրուշին ներքին զեղչումը :

Լուծում

Որովհետև 100ին 16 ներքին զեղչումն ընելը խրաքանչիւր 116ին վրայ 16 զեղչել ըսել է , ուս- տի կրկնենք հետեւեալ համեմատութիւնը

$$116:16::1740:p = \frac{1740 \times 16}{116} = \frac{2784}{116} = 240 \text{ զր. որ է պատ}$$

Բ. Առաջարկեալ ըլլայ դանալու 400ին 16էն 1740ին արտաքին զեղչումը :

Լուծումն

$$100:16::4740:p \text{ և } p = \frac{1740 \times 16}{100} = \frac{27840}{100} = 278 \text{ դր.}$$

16 փր. որ է պատասխանը :

Գ. 2500 զուբուշին ամխը քէսէն 7 1/2ի հաշտի 3 ամսուան ներքին զեղչումը քանի՞ զուբուշ կընէ : 3 ամսուան արտաքին զեղչումը քանի՞ դր կընէ :

Լուծումն ներքին զեղչումն

Ամխը քէսէն 7 1/2էն 4000ին 45 կընէ , և 5 ամսուանը կընէ $45 \times 5 = 75$ ուստի 4075 փրայ 75 զեղչումն պիտի ըլլայ 2500ին զեղչումն քանի՞ է :

$$1075:75::2500:p \text{ և}$$

$$p = \frac{75 \times 2500}{1075} = \frac{187500}{1075} = 174 \text{ դր. } 16 \text{ փր.}$$

Լուծումն արտաքին զեղչումն

$$1000:75::2500:p \text{ և } p = \frac{75 \times 2500}{1000} = \frac{187500}{1000} = 187 \frac{1}{2} \text{ զուբուշ.}$$

Դ. Գանալու է 6750 զուբուշին տարին 400ին 6ի փրայ 126 օրուան ներքին և արտաքին զեղչումը :

Պ. Ն. զեղչ. 138 դր. 33 փ. Ա. զէղչ. 144 դր. 30 փ.

Ե. 2875 ոսկիին 2 առ 0/0 ներքին և արտաքին զեղչումները քանի՞ կընեն :

Զ. 15600 զուբուշին 5 ամսուան 7 օրուան ներքին և արտաքին զեղչումները քանի՞ կընեն ամխը քէսէն 1000 ստակի հաշտի :

Լ. 126 անգղ. ոսկի 45 շիլին 5 բէնսօն տարին 400ին 7 1/2ի հաշտի 165 օրուան ներքին և արտաքին զեղչումները քանի՞ կընեն :

Գ. ԿԱՆՈՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԽՆԴԻՐՔ

124. Ա. Երկու հոգի մէկը 500 զուբուշ և միւսը 300 զուբուշ դնելով ընկերութեամբ առևտուր մը ըրին և վաստկեցան 200 զուբուշ : Խրաքանջիւրը ո՞րչափ շահ պիտի ընդունի իր գրամազլտին համեմատ :

Պարծողութիւն

$$500 \left\{ \begin{array}{l} \text{և } 800:200::500:p \text{ և } p = \frac{5,00 \times 200}{800} = 125 \text{ դր. } \text{Մ.ին} \\ \text{վաստ.} \end{array} \right.$$

$$300 \left\{ \begin{array}{l} \text{» } 800:200::300:p \text{ և } p = \frac{5,00 \times 200}{8,00} = 75 \text{ դր. } \text{Բ.ին} \\ \text{» } 800 \end{array} \right. \text{ որ է փոյճը}$$

Բ. Երեք հոգի ընկերութիւն կազմելով դրաւ գրամազլուխ առաջինը 1200 զուբուշ, երկրորդը 1000 զուբուշ, երրորդը 800 զուբուշ : Կորուսին 750 դր : Խրաքանջիւր ընկեր ո՞րչափ պիտի կորանցնէ :

Գործողութիւն

1200 × ¼ = 300 կորուստէն ստացին թափեր

1400 × ¼ = 250 » երկրորդին »

800 × ¼ = 200 » երրորդին »

3000 750 հար ընդհն . կորուստին որ է վորսը

Այդ 3000 զուրուշի վրայ 750 զուրուշ կորսըն

չընելով 1 զրշի վրայ կորուստը կըլլայ 750/3000 = 1/4, ուս

տի ստով իւրաքանչիւրին դրամագլուխը բազմապատկելով կորուստէն իրենց ինկած թափերը կը դանանք :

Գ. Երկու հոգի ընկերութիւն կընեն , մէկուն դրամագլուխն է 750 զուրուշ՝ որ ընկերութեան մէջ կը մնայ 8 ամիս , միւսին դրամագլուխն է 1250 զուրուշ՝ որ ընկերութեան մէջ կը մնայ 6 ամիս , կը վատակին 2700 զուրուշ : Այստակէն զատ զատ քան ինկան զուրուշ պիտի առնեն :

Գործողութիւն

750 × 8 = 6000 × 20 = 12000
1250 × 6 = 7500 × 20 = 15000
13500 27000

Եւ 2700/135 = 20

Այս խնդիրը խառն ընկերութեան կանոն կըսուի , որովհետեւ եղած վատակը երկու պայմանի համեմատ , այսինքն , թէ դրամագլուխներուն և թէ աւանց կեցած ժամանակին համեմատ բաշխել պէտք

է , ուստի այս բաշխումը կարելի ըլլալու համար երկու պայմանը մէկի վերածեցինք ամիսները դրամագլուխներով բազմապատկելով , ետքը պարզ ընկերութեան կանոնին համեմատ լուծեցինք :

Գ. Երկու հոգի արօտ մը վարձեցին 450 դահեկանի , մէկը 20 ոչխար , միւսը 34 ոչխար դրանոյն արօտին մէջ : Ամէն մէկը ի՞նչ պիտի վճարեն :

Գ. 166 դրշ . 27 փր . և 283 դրշ . 13 փր .

Ե. Երկու հոգի մարդագետին մը վարձեցին 800 զրշի , նոյն մարդագետինն մէջ մէկը դրաւ 40 ձի 6 շաբաթ . միւսը 30 ձի 40 շաբաթ : Զատ զատ քան ինկան զուրուշ պիտի վճարեն :

Զ. Երեք հոգի սայլ մը վարձեցին 300 զուրուշի , մէկը 75 հօխայ բեռ դրաւ 3 մըսն տանելու համար , միւսը 100 հօխայ բեռ դրաւ 2 մըսն տանելու համար : Իւրաքանչիւրը ի՞նչ պիտի վճարէ :

Է. Մէկը չորս հոգիի պարտք ունէր , 20000 , 30000 , 50000 , 70000 , դահեկան , բայց սնանկանալով ընդ ամէնը 70000 դահեկանը ելաւ : Իւրաքանչիւր պահանջատէր ի՞նչ պիտի ընդունի : Այս պահանջատէրք 100ին քանի՞ պիտի ընդունին :

Ը. Մարդ մը մեռնելէն ետքը իր կտակը կը կարգան որ իր երեք զաւակացը Ա. ին 2000 ոսկի , Բ. ին 3000 ոսկի և Գ. ին 4000 ոսկի ձգած է , բայց հանգուցեալը միայն 5400 ոսկի ունէր : Ատակին համեմատ տղաքը ի՞նչ պիտի ընդունին :

Թ. 100000 զուրուշի տուրք մը երեք քաղաքացի վրայ ի՞նչպէս բաժնելու է , որ իրենց բաղմամբը դուրսիւն էր 25000 , 35000 , 45000 :

Ճ. Երեք հողի ընկերութիւն ըրին, Ա. ը դրաւ 6000 զուրուշ և 3 ամիս ետքը 500 զուրուշ ալ. Բ. ը 8000 զուրուշ դրաւ, 2 ամիս ետքը 2000 զուրուշ ետ առաւ և սակէ 3 ամիս ետքը 2000 զուրուշ ալ դրաւ. Գ. ը դրաւ 16000 զուրուշ, 4 ամիս ետքը 6000 զուրուշը ետ առաւ, ամէնը 45 ամիս ընկերութիւն ընկելով վատակեցան 20000 զուրուշ: Վ. ստատակէն իւրաքանչիւրը ի՞նչ պիտի ընդունի:

Ե. ՎՃԱՐՄՃԱՄ

Խ Ն Դ Ի Ր Ք

122. Ա: Մէկը 800 զուրուշ պարտք ունէր 200 զուրուշը 5 ամիսէն վճարելի, 600 զուրուշն ալ 4 ամիսէն: Արդ ամէնը մէկտեղ վճարել ուզելով քանի՞ ամիսէն պիտի հատուցանէ:

Քարճողութիւն

$$\begin{array}{r} 200 \times 5 = 1000 \\ 600 \times 4 = 2400 \\ \hline 800 \quad 3400 \end{array} \text{ և } \frac{5400}{800} = 4\frac{1}{4} \text{ ամիսէն}$$

Բ. Գերձակ մը վաճառականէ մը չուխա առած էր 15000 դաշեկանի վճարելի 9 ամիսէն, բայց այն պայմանաւ որ ժամանակէն յառաջ ձեռքն անցած ստակը վճարէ, մնացածը կանուխ վճարածներուն համեմատ ուշացնելով. ուստի գերձակը պարտքը ստորագրած օրէն 2 ամիս ետքը կը հատուցանէ 3000 դաշեկան, սակէ 3 ամիս ետքը 5000 դաշեկան,

արդ մնացածը յետ պայմանաժամու ո՞րչափ պիտի ուշացնէ:

Քարճողութիւն

$$\begin{array}{r} 3000 \text{ը վճրծ. է } 15 - 2 = 13 \text{ ամիս առաջ, ուստի } 3000 \times 13 = 39000 \\ 5000 \text{ը վճրծ. է } 18 - 3 = 15 \text{ " " " } 5000 \times 15 = 75000 \\ \hline \text{ուստի կորուսած է ընդ ամէնը } \text{զուրուշ } 80000 \\ \text{Եւ մնացեալ պարտքն ալ է } 45000 - 8000 = 7000 \text{ և} \\ \frac{89000}{7000} = 12\frac{5}{7} \text{ ամիս յետ պայմանաժամու պիտի ուշացնէ:} \end{array}$$

Գ. Մէկուն պարտք ունիմ 300 զուրուշ 5 ամիսէն վճարելի, 200 զուրուշ 4 ամիսէն վճարելի, 400 զուրուշ երեք ամիսէն վճարելի: Ամէնը մէկ տեղ քանի՞ ամիսէն վճարելու է:

Դ. Մէկը երեք մուրհակաւ պարտք ունի, առաջին մուրհակն է 10000 դաշեկան ստորագրեալ 6 յունիսար վճարելի 151 օրէն. երկրորդ մուրհակն է 12000 դաշեկան ստորագրեալ 25 յունիսար վճարելի 166 օրէն. երրորդ մուրհակն է 15000 դաշեկան ստորագրեալ 27 փետրվար վճարելի 181 օրէն. այսօր ապրիլ 15 կը վճարէ պարտականը 20000 դաշեկան և մնացածին համար ալ կուզէ միայն մէկ մուրհակ մը տալ՝ միւսները ետ առնելով, ո՞րչափ պայմանաժամ պիտի դնէ:

Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

123. Խնդիրներ կան որոնք լուծելու համար պատասխանին տեղ թիւ մը կամ երկու թիւ ենթադրելով և խնդրոյն պայմանաց համեմատ վրան գործողութիւններ ընելով ճիշդ պատասխանը կը գտնուի, այս կանոնին կըսուի դրոսիան կամ ըստ մանց սխալ դրոսիան, որ երկու տեսակի կըլլայ, պարզ դրոսիան, կրկնակի դրոսիան:

ԽՆԴԻՐԻՔ ՊՍԸԶ ԳՐՈՒԹԵԱՆ

Ս. Մէկը իր երեք որդւոցը պարզէ բաժնեց 160 դուրուշ, առաջնոյն 3 անգամին չափ տուաւ երկրորդին, և երկրորդին 2 անգամին չափ տուաւ երրորդին: Ս. մէն մէկուն ինչ էր տուածը:

Գործողութիւն

Դիցուք թէ առաջնոյն տուածն է	10 դուրուշ
երկրորդին տուածը կըլլայ	30 »
և երրորդին տուածը կըլլայ	60 »
	<hr/>
	100

Արդ 10 ենթադրելով հետևութիւն եղաւ 100, այս հետևութիւնս խնդրոյն ճիշդ հետևութեանը հետ համեմատութիւն կազմելով կը գտնանք պատասխանը. $100:160::10:p$ և $p = \frac{10 \times 160}{100} = 16$ այս է առաջինին ընդունածը, որով երկրորդին ու երրորդին ընդունածները կըլլան 48 և 96:
Որոյ գումարն է $16 + 48 + 96 = 160$, այս ևս է

վորձը, որ կը ջրցնէ պատասխանին ճիշդ ըլլալը:
Բ. 2100 դուրուշը պիտի բաժնենք 4 աղքատաց, իրարմէ երկերկու անգամ աւելի տալով, իւրաքանչիւրին բաժինը ո՞րչափ պիտի ըլլայ:

Պատ. 140, 280, 560, 1120

Գտնալու է անանկ թիւ մը, որուն $\frac{1}{5}$ և $\frac{1}{5}$ մասերը իր վրան աւելցնելով գումարն ըլլայ 69:

Պատ. 45

Դ. Ունեցած դրամիս $\frac{1}{4}$, $\frac{2}{11}$, $\frac{1}{8}$, և $\frac{5}{10}$ մասերը աղքատաց տալով մնաց բովս 63 դահէկան. ո՞րչափ էր ունեցածս:

Պատ. 440 դահէկան

ԽՆԴԻՐԻՔ ԿՐԿՆԱԿ ԳՐՈՒԹԵԱՆ

Ս. Հօր մը տարիքը 32 է և իր տղուն տարիքը 2, կուգէ հասկնալ որ քանի՞ տարիէն իր տարիքը տղուն տարիքին 4 անգամը պիտի ըլլայ:

Պատ. 8

Գործողութիւն

Դիցուք թէ 5 տարիէն. ան ատենը հօրը տարիքը պիտի ըլլայ $32 + 5 = 37$ ու տղունը պիտի ըլլայ $2 + 5 = 7$: որոյ 4 անգամն է 28, որ առջինէն պատասխան է $37 - 28 = 9$ այս է առաջին սխալը:

Ուրիշ թիւ մը ենթադրելով, դնենք 4. ուստի հօրը և տղուն տարիքները կըլլան $32 + 4 = 36$ և $2 + 4 = 6$ որոյ 4 անգամն է 24 և $36 - 24 = 12$ որ է երկ.

քորդ սխալը : Սխալները իրենց գրութեան քով կը գրենք իրենց նշանով . և Ս. գրութիւնը երկրորդ սխալով և երկրորդ գրութիւնն ալ Ս. սխալով կը բազմաստիկենք , և արտադրեալներուն տարբերութիւնը կը բաժնենք սխալներուն տարբերութեամբը , քանորդն է ճիշդ սրտասխանը : Քայց երբոր սխալները աննման ըլլան , արտադրելոց գումարը սխալներուն գումարովը բաժնելու է :

$$\left. \begin{array}{l} \text{Գրութիւն 5, սխալ—9} \\ \text{" 4 " —12} \end{array} \right\} \text{Ուտի } 5 \times 12 - 4 \times 9 = 24 \text{ և } \frac{24}{12-9} = \frac{24}{3} = 8$$

Այս է սրտասխանը :

Բ. Քանոր մը դաշինք ըրած էր որ աշխատած օրերուն համար 20 դուրուշ ընդունի , և չաշխատած օրերուն համար 8 դուրուշ տուժէ . արդ 43 օրէն ետքը հաշիւ տեսնելով գտաւ որ 424 դուրուշ առնելիք ունի : Քանի՞ օր աշխատած էր և քանի՞ օր չաշխատած :

Պատ. 28 օր աշխատած և 17 օր չաշխատած

Յ Ա Ր Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Խ Ն Գ Ի Ր Գ

124. Ա. Երկու տեսակ բրինձ ունինք հօխան 400 և 130 փարանայ , իրար խառնելով հօխան քանի՞ կուգայ :

Գործողութիւն

$$\begin{array}{r} 100 \\ 130 \\ \hline 2, 230 \\ 115 \text{ փարա} \end{array}$$

Իրարու վրայ աւելցնելով 2ով յամենցի քանորդ նորա 115 փարա . որ է պատասխանը :

Բ. Երեք տեսակ բրինձ ունինք , առաջինէն 400 հօխայ՝ հօխան 120 փարա , երկրորդէն 150 հօխայ՝ հօխան 150 փարա , երրորդէն 200 հօխայ՝ հօխան 20 փարա . ասոնք իրարու խառնելով հօխան քանի՞ կուգայ :

Գործողութիւն

$$\begin{array}{r} 400 \times 120 = 12000 \\ 150 \times 100 = 15000 \\ 200 \times 80 = 16000 \\ \hline 450 \qquad 430'00 \qquad 45,0 \\ \qquad \qquad 250 \\ \qquad \qquad 25 \qquad \hline 95,5 \text{ փր.} \end{array}$$

Հօխաներուն հաճութեամբով իրենց գիները բազմապատկելով արտադրեալներուն գումարը յամենցի հօխաներուն գումարովը և քանորդ գտայ 95½ փարա . որ է պատասխանը :

Ծանօթութիւն . Այս երկու խնդրոց յաճմանը կանոնիկ կըսուի միջին յարակցութիւն :

Գ. Հօխան 13 և 9 դուրուշնոց խաշիլէներէն քա-

նիկա՞ն հօխայ խառնելու է , որ խառնուրդին հօխան
10 զուրուշի վրայ ըլլայ :

Գործողութիւն

Փորձ

$$\begin{array}{l}
 10 \left\{ \begin{array}{l}
 13 \left\{ \begin{array}{l}
 1 \text{ հօխ. } 13 \text{ զըշնոցէն} = 13 \\
 9 \left\{ \begin{array}{l}
 3 \text{ հօխ. } 9 \text{ զըշնոցէն} = 27 \\
 4
 \end{array} \right. \\
 \hline
 40 \text{ զշ. և } 4 \text{ հօ. } 10 \text{ զէնկընէ } 40
 \end{array} \right.
 \end{array}
 \right.$$

Միջին գնոյն և փոքրին տարբերութիւնը՝ մեծէն
խառնուրդին մէջ առնուելիք չափը , և միջին գնոյն
ու մեծին տարբերութիւնը՝ փոքրէն խառնուրդին մէջ
առնուելիք չափը կը ցըցնէ :

Գ. 75 հօխա գինիին հետ , որ հօխան 8 զըշ
կընէ , քանի՞ հօխայ 3 զուրուշնոց գինիէն խառնե-
լու է , որ խառնուրդին հօխան 6 զուրուշ արժէ :

Գործողութիւն

$$\begin{array}{l}
 8 \left\{ \begin{array}{l}
 3 \text{ արդ } 3:75::2: p \text{ և } p = \frac{2 \times 75}{3} = 50 \text{ հօխ. որ է պատ} \\
 6 \\
 3 \left\{ \begin{array}{l}
 2
 \end{array} \right.
 \end{array} \right.$$

Ե. Երեք տեսակ ցորեն ունինք , որոց գրիւը
կարժէ 20, 18, 16 զուրուշ. արդ ասոնցմէ 500 զը-
րիւի չափ խառնուրդ մը պիտի ընենք , անանկ որ
գրիւը 17¹/₂ զուրուշ արժէ . ամէն մէկէն քանիկա՞ն
գրիւ խառնելու է :

Պատ . 20 և 18 զուրուշնոցներէն 125 սահման գը-
րիւ և 16 զուրուշնոցէն 250 գրիւ :

Ծանօթութիւն . 10. Սյս տեսակ խնդիրները ըս-
տոյ կանոնին աչ կըստի փոփոխ յարակցութիւն :

20. Փոփոխ յարակցութեան շարժիչ ըստ խնդր-
նէր կան , որոնք ընդհանուր կանոնին հասկնատ ըստ
չէն սուս կաւ կտրը հասկնատութիւն մը կաւ ուրիշ
գործողութիւն մը ընել պէտք կ'ըլլայ :

9. Լոմայափոխ մը երկու տեսակ զրամով կրնայ
մանրել մեծ ոսկի մը , մէկ տեսակին 20 հատը և
միւս տեսակին 30 հատը կարժէր նոյն ոսկին . կու-
ղենք նոյն ոսկին սարել 33 կտոր մանր ստակ ա-
նելով . լոմայափոխը թէ մէկէն և թէ միւսէն քա-
նիկա՞ն հատ տալու է :

Պատ . մէկէն 10 հատ և միւսէն 23 հատ

Է. Աւաղան մը չորս աղբիւր ունի . մէկ վայր-
կենի մէջ կուտայ

Առաջինը 20 հօխայ ջուր 35⁰ տաքութեամբ ,
Երկրորդը 30 հօխայ ջուր 40⁰ տաքութեամբ ,
Երրորդը 45 հօխայ ջուր 45⁰ տաքութեամբ ,
Չորրորդը 40 հօխայ ջուր 50⁰ տաքութեամբ :
Պէտք է ընդ ամէնը 600 հօխայ ջուր 43⁰ տա-
քութեամբ , ամէն մէկ աղբիւրը քանիկա՞ն վայրկեան
բայ մնալու է :

Պատ . Ա. ը 10¹/₂ , Բ. ը 2, Գ. ը 2, և Դ. ը 6 վայր-
կեան :

ԶԱՆԱԶԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ս. Մաքիւն մը 50 կանգուն կտու կը գործէ 8¹/₂
ժամու մէջ , 280 կանգունը քանի՞ ժամու մէջ կը գործէ :

Բ. Գործ մը 36 գործաւոր 20 ժամու մէջ կը կաւարեն , 96 գործաւոր քանի՞ ժամու մէջ կը կատարեն :

Գ. 5 խանրար 18 հոխա շաքարը կարժէ 1200 դարուշ . 10,000 դարուշով քանի՞ խանրար շաքար կրնանք ստենք :

Դ. Սենեակ մը բոքերու համար 7 ուրուս շայնուքիւն ունեցող 18 ծրար բուրդ պէտք է , 11 ուրուս շայնուքիւն ունեցող բոքէն քանի՞ ծրար պէտք է .

Ե. Բանուր մը 18 օրէն գործ մը շնորհներու համար 600 դարուշ պիտի ստենք , բայց նոյն գործը ընդունող միայն 12 օր 6 ժամ աշխատելով , քանի՞ դարուշ պիտի ընդունի :

Զ. 2000 դարուշ վճարեցինք 120 տակաւ ընտի համար , որուն առէն մէկուն ծանրութիւնն էր 70 հոխա ո՞րչափ վճարեալ է 340 տակաւ ընտի համար , որուն առէն մէկը 60 հոխա կը կռէ :

Է. 20 գործաւոր փորեցին 8 օրուան մէջ 200 կանգուն երկայնութիւն , 3 կանգուն շայնութիւն 2 կանգուն խորութիւն ունեցող խրամ մը . քանի՞ օրէն կրնան փորել 24 գործաւոր ուրիշ խրամ մը որ ունի 120 կանգուն երկայնութիւն 2½ կանգուն շայնութիւն և 1½ կանգուն խորութիւն :

Ը. 4 ճամբորդ 200 դարուշ ծախք ըրին 3 օրուան մէջ . ուրիշ երեք թարեկանաց պատահելով սենեց հետ շարունակեցին իրենց ճամբան և ընդ առէնը ծախք ըրին 1100 դարուշ 10 փարս . քանի՞ օր միատեղ ճամբորդութիւն ըրին :

Թ. 30 հոխա թարդ գնաց 30 կանգուն երկայնութիւն 9 ուրուս շայնութիւն ունեցող կտախն . համար նոյն բոքէն 80 հոխա 150 տրանք քանի՞ կանգուն երկայնութեամբ կտաւ կըլլայ , որոյ շայնութիւնն պիտի ըլլայ 12 ուրուս :

Ժ. Բնասելիք մը որ 6 սննէ կը թաղիւնար , 39 օրուան մէջ 3000 դարուշ ծախք ըրաւ . 3 հոգի սակունտով 45 օրուան մէջ քանի՞ դարուշ ծախք պիտի ընէ :

ԺԵ. 5 հոխա սնացը կարժէ 90 հոխա երկար , 100 հոխա երկարք՝ 12 հոխա խանիւն , 20 հոխա խանիւն՝ 45 հոխա շաքար : 100 հոխա սնացով քանի՞ հոխա շաքար կրնանք ստենք :

ԺԲ. 20000 դարուշին 5 անտուան 43 օրուան տակար քանի կընէ ամիսը քէսէն 7½ շահով :

ԺԳ. 18,000 դարուշին 6 անտուան 5 օրուան շահն է 2000 դարուշ . 100ին մէկ տարուան շահը քանի՞ է :

ԺԴ. Տարին 100ին 6 էն 6000 փրանքին 5 տարուան թաղապրեալ տակար ո՞րչափ է :

ԺԵ. Տարիէ մը 3000 փրանք պիտի հաստուցանէի , բայց մէկ մասը կանխաւ վճարելով . մնացած 1800 փրանքը 18 ամիսէն պիտի հաստուցանեմ : Արջի մասը քանի՞ ամիսէն վճարած եմ :

ԺԶ. Վաճառական մը 50000 դարուշի վաճառք ըրենց , ¼ը 4 ամիսէն , ¾ը 6 ամիսէն և մնացածը մէկ տարիէն պիտի վճարէ : Թախողը միայն մէկ տարուան կողմէ ընդունի , ո՞րչափ պայմանաժամ դնելու է :

ԺԷ. Երկու հոգի ընկերութիւն կազմեցին մէկ տարուան

տասն համար , Խ. ը դրամագրութի դրամ 20000 դարուշ .
6 սակսն ևարք Երկրորդը ինչ դրամագրութի ղենու Է
որ առաջինին 3ին շափ շան ընդունի :

ԺԲ. Միևնոյն գործին 4 գործաւոր կաշխատին ,
Խ. ը միևնակ կրնայ ընկնել 8 օրէն , Երկրորդը 9 օրէն,
Երրորդը 10 օրէն և չորրորդը 11 օրէն : Խմենը քանի՞
օրէն կրնան ընկնել :

ԺԳ. Ի՞նչ է այն թիւք , որոյ վրայ իր կէտը և Եր-
րորդ մասը և 1 ալ առեղցնելով գումարն ըլլայ 111 :

Ի. Հայր մը իր 4 զաւակացը 178000 դարուշ կը
ձգէ որպէս զի իրենց տարիքին համեմատ իրենց մէջ
շամենն , բայց քիչ տարիք ունեցողը շատ և շատ տա-
րիք ունեցողը քիչ ստենու պայմանաւ , տղոցը տա-
րիքն է 3, 5, 8, 12, Տղարք զատ զատ ի՞նչ պիտի
ընդունին :

1377, 1378
1379

2003

« Ազգային գրադարան

NL0064553

« Ազգային գրադարան

NL0064554

« Ազգային գրադարան

NL0064555

